

ԲԱՐԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆ



Հայկական պատրիարքական ընկերություն


ԲԱԲԿԵՆ ՇԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՈՒՂԿԱՔԱՆ


Կյանքի և սրբոջագործության
պատրիարքություն

1899 - 1960

A $\frac{1}{23055}$



Երևան - 1985



Պատուախանատու խմբագիր՝
քանասիրության դոկտոր Լ. Հ. Հայսվերդյան

Հարությունյան Բ. Բ.

գ 943 հ Արմեն Գոլակյան: Կյանքի և ստեղծագործ. տարեգրություն,
1899—1960.—Եր.: ՀԹԸ, 1985.—196 էջ, 10 ր. նկ.
Վերնախորագր. Հայկ. քառեր. ընկ.

Գիրքը փաստական աղբյուրների (մամուլ, հուշագրություն, արխիվային անտիպ հյութեր) հիման վրա ներկազացնում է ավանավոր թանտրիչ, մամլևալվարժ Արմեն Գոլակյանի կյանքի և ստեղծագործության տարեգրությունը: Այսուղև առաջին անգամ հրապարակվում են նորանայտ փաստեր ու փաստաբերեր, Գոլակյանի անտիպ համակերն ու նորվաճակերը, որոնք նոր լուս են սփռում արվեստագետի անցած որքան արգասավոր, նույնանուն բարդ ու դժվարին ուղու վրա:

գ 4907000000—01
728(02)85 46—85(Տ)

ԳՄԴ 85.443(2Հ)7

БАБКЕН БАРЕГАМОВИЧ АРУТИОНИЯН

АРМЕН ГУЛАКՅԱՆ

Летопись жизни и творчества (1899—1960)
(на армянском языке)
Ереван—1985

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱԲԵՆ

Ամեն նշանավոր արվեստագետի կյանքի և ստեղծագործության տարեգործունքը չէ, որ արժե հրապարակիլ: Դա հասարակայնութեն կարեար է դառնում այն դեպքում, եթե տարեգործության արտացոլում է ոչ միայն տվյալ արվեստագետի կյանքն ու գործը, այլև գիտակար իրաղործություններն այն արվեստի պատմության, որին նվիրված է եղել նրա կյանքը:

Արմեն Գովակյանն այդպիսի արվեստագետ էր: Նրա ամբողջ գիտակցական կյանքը, ավելի քան հասանում տարի, կապված է եղել նայ քատերական մշակույթի հետ մինչև 1960 թվականը: Նա շատ տարիներ եղել է ոչ միայն բեմադրիչ, այլև քատերական գործի տեօրեն, ուստի և նրա կյանքի տարեգործությունն էջ առ էջ վեր է հանում այդ արվեստի պատմությունն իր շատ կարեար իրադարձություններով: Ուրիշ խոսքով, այս տարեգործության առարկան, Արմեն Գովակյանի կենսագործությունը լինելով, նաև նայ բեմական արվեստի տվյալ շրջանի «կենսագործությունն» է իր և լուսավոր, և ստվերու կազմերով, ոչ միայն հաջողորդյուններով, այլև անկումներով, իր ամբողջ դրամատիկական բովանդակությամբ: Սնահ ինչու իր «Ճանրային յուրահատկությունների», դեպքերի անաշառ արտացոլման, փաստերի շեզօն լեզվով խոսելու շնորհիվ տարեգործության կարելորդությունն ավելի է, քան արվեստաբանական մենագրության:

Հնրեցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատության հպատակը, մեր «Հայ քարոզնի տարեգործության» (1801—1960) հիմքատուրյակի հետ համեմատած, փոքր-ինչ այլ է եղել՝ արձանագրել ոչ միայն մերկ փաստեր, բրավականներ ու անուններ, այլև անել դրանց կենդանությունն տվող մեշբերումներ՝ զանազան հոդվածներից, ճամակներից, հուշագործություններից, փաստարդիքերից: Արված գործին արժեն է տալիս այն, որ մենք ի հայտ ենք բերել և գրում անդ ավել մեծարիկ անձանոր փաստերի ու փաստարդերի, անտիպ համակների ու գրությունների, արխիվային նյութերի:

Արմեն Գուլակյանի անժամանակ մահը, բազմաթիվ անկատար մտահրդացումների հետ միասին, ընդհատեց մանկավարժ-ուժիսորի աշխատանքը և նաև Գեղարվեստա-քառերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի երկրորդ կուրսում: Բնակչության հետ նրա սկսած և շավարած բեմադրությունները (Գ. Սունդուկյանի «Քանդած օջախը», Վ. Զակի և Ա. Կուգնեցովի «Երկու գույնը» և Ա. Օստրովսկու «Երշյունավոր պաշտոնը») 1961—1962 ուսումնական տարու ավարտեցին Ա. Հովսեփյանը, Մ. Կոստանյանը և Ռ. Խարագյանը:

1963-ին Հայպետհարաբ լույս ընծայեց Արմեն Գուլակյանի «Արշարույն», «Ճատում», «Օրեր, մարդիկ անմոռաց» և «Անհանգիստ մարդիկ» պիեսներն առանձին գրքով, որի առաջարանը գրեց Գուրգեն Բորյանը: 1964-ին Հայկական քառերական ընկերությունը հրատարակեց Բարեկեն Հարուրյունյանի «Արմեն Գուլակյան» մենագրությունը: 1967-ին ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտը տպագրեց «Սովետական հայ քառեռնի պատմություն» ստվարածավալ աշխատությունը, որտեղ առանձին զրոխ է արդիական Ա. Գուլակյանին (նեղինակ՝ Սարի Միզակ): 1967—1972 թվականներին Մոսկվայում, ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի «Նաուկա» հրատարակությունը լույս ընծայեց «Սովետական դրամատիկական քառեռնի պատմություն» (1917—1967) վեցհատորանոց հետազոտությունը, որի «Հայ քառեռն» քայլիներում (նեղինակ՝ Բ. Հարուրյունյան) արտացոլված է նաև Արմեն Գուլակյանի գործունեությունը: 1961-ին լույս տեսավ Սարի Միզակի «Ծեծիսուրան հայ քառեռնում» մենագրությունը, որտեղ հատուկ բաժին է նվիրված Ա. Գուլակյանին:

1970-ի փետրվարի 19-ին Գ. Սունդուկյանի անվան քառեռնում կայացավ հանդիսավոր երեկո՝ նվիրված Ա. Գուլակյանի ծննդյան 70-ամյակին: Բացման խոսք ասաց Վարդան Անեմյանը: Զեկուցեց Գուրգեն Բորյանը: Ելայլը ունեցան Սվետ Սվետիսյանը, Վաղարշակ Նորենցը, Գրիգոր Տեր-Գրիգորյանը, Գուրգեն Գենը, Թափայել Զրբաշյանը, Հենրիկ Հովհաննեսյանը: Հոբելյանի առքիվ մամուլում լույս տեսան Վ. Անեմյանի, Ա. Ավետիսյանի, Գ. Բորյանի, Ս. Միզակի և Լ. Խալարյանի հորվածները:

1971-ին, գեղարվեստա-քառերական ինստիտուտի 25-ամյակի առքիվ նրա ուսումնական մասի երկարամյա վարիչ, բանասիրության դոկտոր Սուրեն Դանիելյանը լույս ընծայեց «Քառորդ դար» գիրքը, որի մեջ բարձր է գնահատված Ա. Գուլակյանի մանկավարժական գործունեությունը: 1972-ին, երբ նրա վկանը Ա. Սունդուկյանի անվան քառեռնի 50-ամյակը, մամուլը դարձյալ արժեխավորեց այն խոշոր վաստակը, որ քառեռնի պատմության մեջ ուներ Ար-

մեն Գովակյանը: Դա իր արտացոլումը գտավ նաև «Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոն» ալբոմի (կազմող՝ Բ. Հարուրյունյան) և «Տարիներ և ներկայացումներ» ժողովածովի (կազմող՝ Գրիգոր Զարեյան) մեջ: Այստեղ, Գովակյանի բեմադրությունների մասին անցյալում տպագրված հոդվածներից բացի, լրայ տեսան Բ. Հարուրյունյանի («Յառաւմ»), Ս. Հարդինյանի («Թղակում») և Լ. Սամվելյանի («Ֆիզարոյի ամուսնությունը») հոդվածները:

1976—1977 թվականներին Արմեն Գովակյանն իր տեղն ունեցավ նաև հուշագրության մեջ. ոեմիսորի մասին հուշեր տպագրեցին Գավիր Մալյանը, Ռուբեն Զարյանը և Սամվել Արաբաջյանը:

1979-ին Հայկական թատերական ընկերությունը լրայ ընծայեց Բարկեն Հարուրյունյանի կազմած «Արմեն Գովակյան» ժաղովածովն:

Հերեցողին ներկայացված այս աշխատությունը նպատակ ունի նպաստելու ականավոր բեմադրիչի ստեղծագործության համակողմանի ուսումնասիրության գործին:

1899

1 նոյեմբերի — Թիֆլիսի Օրբանալա քաղում, Ելիզավետպոլի համանգի Ղազախի զավակի Խաշբառակ գյուղից (այժմ գտնվում է Հայկական ՍՍՀ Խշենի շրջանում) վերաբերակված Կարապետ և Թամար Գուլայյանների ընտանիքում ծնվեց նրանց երկրորդ զավակը՝ Արամը, որը բատերական միջավայրում ճանաչվեց Արմեն անունով։ Հայրը կաշկակար էր, մայրը՝ տնային տնտեսութիւն։ Արամից բացի, նրանք ունեին շուրջ երեխա՝ Շուշան, Ռուբեն, Անահիտ և Ռուզան, որոնցից վերջինը, ավագ եղբոր օրինակով, նվիրվեց քեմին, դարձավ դերասանումի։ Շուտով ընտանիքն Օրբանալյանց տեղափոխվեց Հավլար, ուր և անցան Արմենի պատանեկան տարիները։

1908

1 սեպտեմբերի — Ընդունվեց Թիֆլիսի հայկական Առաջին ժաղաքային տարրական ուսումնարանը, որն ավարտեց 1912-ի մայիսի 24-ին հետևյալ գնահատականներով. վարք՝ 5, ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն՝ 4, մնացած առարկաններ՝ 3։

1913

1 սեպտեմբերի — Ընդունվեց Թիֆլիսի ներսիսյան դպրոցը, որն ավարտեց 1921-ի մայիսին։ Մկնեց մասնակցել դպրոցի աշակերտական ներկայացնումներին, իսկ ավելի ուշ, 1917-ից, դարձավ դրամատիկական խմբակների կազմակերպիչ և ղեկավար քե՛ դպրոցում, քե՛ նրանից դուրս։

1917

1 մայիսի — Ամո-Խարազյանի ղեկավարությամբ Թիֆլիսում կազմակերպվեց աշակերտա-ուսանողական դրամատիկական ընկերություն, որի ներկայա-

ցումներին, Ավետ Ավետիսյանի, Սարգիս Աբովյանի, Սուրեն Քոչայանի, Սարգիս Մելիքսերյանի և ուրիշների հետ, մասնակցում էր նաև Արմեն Գովակյանը:

3 Հոկտեմբերի— Ակսեց հանախել Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության ստուդիայի (ղեկավար՝ Օվի Սեռումյան) պարապմունքներին: Ստուդիայում դասավանդում էին Օվի Սեռումյանը, Լևոն Քալանքարը, Մրգումի Լիսիցյանը, Ռուբեն Մամովյանը, Մարես Սահամյանը: Ստուդիան աշխատում էր Շարլ Մերիեի «Հիդրա» պիեսի բեմադրության վրա, որը մնաց անավարտ: Ա. Գովակյանի տվյալները բարձր է զնահատել Օ. Սեռումյանը, որի խորհրդավ էլ պատահի Արամը վերակոշվեց բեմի համար առավել հնչեղ Արմեն աճունով: Ստուդիայում ուսանելու ընթացքում մասնակցում է Հայոց դրամատիկական ընկերության և Զորբարովի անվան ժողովրդական տան բատերախմբերի ներկայացումներին, որոնց բեմադրիչներն էին Օվի Սեռումյանը և Լևոն Քալանքարը:

Պահարե, Թատերական հուշեր, Երևան, 1960, էջ 46—47

«Պատմա-բանափրական հանդես», Երևան, 1963, № 1, էջ 16

1918

10 ապրիլի— Ֆ. Շիլեր՝ «Սեր և ննջ» («Խարդավանք և սեր»). Թիֆլիսի Զորբարովի տանը: Բեմադրիչ Օ. Սեռումյան: Պրեգիդենտ Գոն Վալտեր—Ա. Գուլակյան:

«Մշակ», 10 ապրիլի

1 Հունիսի— Օ. Սեռումյանի ստուդիան փակվելուց հետո, Լևոն Խաչատրյանի և մի քանի այլ ընկերների հետ փորձեց Ռազմավիրական հանապարհով, ոտքով, մեկնել Մոսկվա՝ քատերական կրթուրյունը շարունակելու: Հյուսիսային Կովկասում, քաղաքացիական պատերազմի պատճառով, նանապարհի փակվել էր, և նա վերադարձավ Թիֆլիս:

«Ծրբ Խաչատրյան», Երևան, 1969, ստր. 43

31 Հոկտեմբերի— Դ. Դեմիրճյան՝ «Դատաստան». Թիֆլիսի Զորբարովի տանը: Բեմադրիչ Լ. Քալանքար: Մարկոս-Ա. Գովակյան:

5 նոյեմբերի— Ա. Յուժին-Սումբատով՝ «Դավանանություն». Թիֆլիսի Զորբարովի տանը: Բեմադրիչ Լ. Քալանքար: Սարբա-Ա. Գովակյան:

«Մշակ», 5 նոյեմբերի

8 փետրվարի — Ա. Շիրվանզադե՝ «Նամուս». Զուբալովի տանը: Բեմադրիչ լ. Քալանքար: Զուլակյան:

«Հառաջ», 8 փետրվարի

19 փետրվարի — Հ. Սենկեիչ՝ «Հոգ երքաս». Զուբալովի տանը: Բեմադրիչ լ. Քալանքար: Ֆարինս-Ա. Գուլակյան:

«Հառաջ», 19 փետրվարի

8 մարտի — Ա. Ցագարելի «Խանում», Զուբալովի տանը: Բեմադրիչ լ. Քալանքար: Կոսէ Փանդիկ-Ա. Գուլակյան:

«Հառաջ», 8 մարտի

2 ապրիլի — Երեկո՝ նվիրված Թիֆլիսի Զուբալովի տան 10-ամյակին: Ցուցադրվեցին հատվածներ «Պեպո», «Պատվի համար» և «Դատաստան» ներկայացումներից, որոնց մասնակցում էր Ա. Գուլակյանը: Բեմադրիչ լ. Քալանքար:

10 սեպտեմբերի — Թիֆլիսում բացվեց Ստեփան Քափանակյանի բեմական խոսի ստուդիան, ուր սկսեցին հանախել Արմեն Գուլակյանը և Սուրեն Քոչարյանը:

5 հոկտեմբերի — Մ. Մանվելյան՝ «Հեթիար» և «Կեցք կյանքը». Զուբալովի տանը: Բեմադրիչ լ. Քալանքար: Ծառա և Շահումյան-Ա. Գուլակյան:

«Աշխատավոր», Թիֆլիս, 5 հոկտեմբերի

3 հունվարի — Ա. Շիրվանզադե՝ «Նամուս». Զուբալովի տանը: Բեմադրիչ լ. Քալանքար: Աղաբեկ-Ա. Գուլակյան:

«Աշխատավոր», 3 հունվարի

11 հունվարի — Գ. Սունդուկյան՝ «Գիշերվան սարքը խեր է». Զուբալովի տանը: Բեմադրիչ լ. Քալանքար: Քիտեսի-Ա. Գուլակյան:

«Աշխատավոր», 11 հունվարի

23 Հունվարի — Ֆ. Շիլեր՝ «Ավազակներ». Զորալովի տաճը: Բեմադրիչ և. Քալանքար: Կարլ Մոոր-Ի. Ալիխանյան, Շվայցեր-Ա. Գովակյան:

«Աշխատավոր», 23 Հունվարի

25 Հունվարի — Մ. Մանվելյան՝ «Հրաբուխ». Թիֆլիսի աշակերտ-ուսանողական դրամիսմբակը: Բեմադրիչ Ամո-Խարազյան: Գայամյան-Ա. Գովակյան:

«Աշխատավոր», 25 Հունվարի

28 Հունվարի — Ա. Գոլդոնի՝ «Հյուրանցի տիրումին». Զորալովի տաճը: Բեմադրիչ և. Քալանքար: Յաբրիցիո-Ա. Գովակյան:

29 Հունվարի — Լ. Շահը՝ «Կայսր». Թիֆլիսի Արտիստական թատրոնամ, Հյուրանց դրամատիկական ընկերության խմբի կատարմամբ: Բեմադրիչ և. Քալանքար: Երիտասարդ գորական-Ա. Գովակյան: Կրիմկեց հունիսի 16-ին (Ավագ արարողապետ — Ա. Գովակյան):

«Աշխատավոր», 28 Հունվարի

5 փետրվարի — Ա. Յագարելի՝ «Խանում». Զորալովի տաճը: Բեմադրիչ և. Քալանքար: Մանուկ-Ա. Գովակյան:

«Աշխատավոր», 5 փետրվարի

10 փետրվարի — Օ. Ռայլի՝ «Սալոմե». Զորալովի տաճը: Բեմադրիչ և. Քալանքար: Երիտասարդ սիրիացի-Ա. Գովակյան:

Սպոմեի դերակատար Արուս Ռուսական փետրվարի 17-ին, Ա. Գովակյանին, երա հաջող ելույթի առքիվ, ճմիրել է իր լուսանկարը, Սալոմեի՝ Երիտասարդ սիրիացուն ուղղված բառերի՝ «Ես միշտ մեզ լավ եմ վերաբերվել» մակագրությամբ:

«Աշխատավոր», 18 փետրվարի

13 փետրվարի — Մ. Տեր-Գրիգորյան՝ «Էս էլ քի մոցի լուրին». Զորալովի տաճը, Հովհաննես (Վանո) Տեր-Գրիգորյանի բեմական գործունեության 50-ամյակին նվիրված երեկոյան: Կիրակոս—Ա. Գովակյան:

«Աշխատավոր», 13 փետրվարի

29 փետրվարի — Մ. Գորկի՝ «Հատակում». Զորալովի տաճը: Թարգմա-

նիշ Գ. Ավետյան, թեմադրիչ և. Քալանքար: Ալոշ—Ա. Գուղակյան:

«Աշխատավոր», 29 փետրվարի
«Слово», 5 մարտի

3. մարտի—Հ. Սենկեիշ՝ «Հո” երաս». Զուբալովի տանը: Թեմադրիչ
լ. Քալանքար: Յենուուին—Ա. Գուղակյան:

8 մարտի—Լ. Շահր՝ «Հին աստվածներ». Զուբալովի տանը: Թեմադրիչ
լ. Քալանքար: Տիրացու—Ա. Գուղակյան:

4 ապրիլի—Ա. Շիրվանզադե՝ «Պատվի համար». Զուբալովի տանը: Թե-
մադրիչ լ. Քալանքար: Վարդան—Ա. Գուղակյան:

22 ապրիլի—Մ. Մետերլինկ՝ «Մոխճա Վանճա». Զուբալովի տանը: Թե-
մադրիչ լ. Քալանքար: Տորելլո—Ա. Գուղակյան:

«Նոր աշխատավոր», 22 ապրիլի

22 մայիսի—Դ. Գեմիրեյան՝ «Դատաստան». Զուբալովի տանը: Թեմա-
դրիչ լ. Քալանքար: Տորելլո—Ա. Գուղակյան:

«Նոր աշխատավոր», 26 մայիսի

27 մայիսի—Վ. Փափազյան՝ «Ժայռ». Զուբալովի տանը: Թեմադրիչ
լ. Քալանքար: Մերգե—Ա. Գուղակյան:

«Նոր աշխատավոր», 26 մայիսի

2 հունիսի—Երեկո Զուբալովի տանը, նվիրված Օվի Սկումլյանի հիշա-
տակին (վախճանվել էր Կ. Պոլսում 1920-ի մայիսի 15-ին): Մասնակցում էր
Ա. Գուղակյանը:

«Նոր աշխատավոր», 2 հունիսի

3 հունիսի—Ա. Յուժին-Սումբատով՝ «Դավանանոյքուն». Զուբալովի տա-
նը: Թեմադրիչ լ. Քալանքար: Դարու—Ա. Գուղակյան:

«Նոր աշխատավոր», 3 հունիսի

8 հոկտեմբերի—Դ. Գեմիրեյան՝ «Դատաստան». Զուբալովի տանը: Թե-
մադրիչ լ. Քալանքար: Նաղաշ—Ա. Գուղակյան:

«Աշխատավոր», 12 հոկտեմբերի

16 հոկտեմբերի—Մ. Մետերլինկ՝ «Սուրբ Անտոնիոսի հրաշագործությու-

նը». Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Ժողեֆ—Ա. Գոլակյան:

«Աշխատավոր», 16 հոկտեմբերի

31 Հոկտեմբերի—Ա. Շիրվանզադե՝ «Նամուս». Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Սմբատ—Ա. Գոլակյան:

«Աշխատավոր», 31 հոկտեմբերի

2 նոյեմբերի—Մ. Մետերլինկ՝ «Սուրբ Անտոնիոսի հրաշագործությունը». Թիֆլիսի Բարեգործական ընկերության դահլիճում, Հայոց դրամատիկական ընկերության խմբի կատարմամբ: Թեմադրիչ լ. Քալանքար: Ժողեֆ—Ա. Գուլակյան:

«Աշխատավոր», 5 նոյեմբերի

3 նոյեմբերի—Կ. Գոլդինի՝ «Հյուրանոցի տիրումին», Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Ֆարբիցիո—Ա. Գոլակյան, Միրանդոլինա—Օ. Գուլազյան, Կոմս—Տ. Շամիրխանյան:

«Մշակ», 3 նոյեմբերի

8. նոյեմբերի—Ա. Յուժին—Սումբատով՝ «Դավանանություն». Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Դարու—Ա. Գոլակյան:

«Աշխատավոր», 7 նոյեմբերի

10 նոյեմբերի—Նար-Գոս՝ «Սպանված աղավնի». Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Բարոս—Ա. Գոլակյան:

«Աշխատավոր», 10 նոյեմբերի

10 դեկտեմբերի—Մ. Գորկի՝ «Հատակում». Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Բարոն—Ա. Գոլակյան, Նասայա—Ա. Ռուզանյան:

«Աշխատավոր», 10 դեկտեմբերի

30 դեկտեմբերի—Մ. Մանվելյան՝ «Հեթիաք». Զուրալովի տաճը: Թեմադրիչ լ. Քալանքար: Մառա—Ա. Գոլակյան:

«Մշակ», 30 դեկտեմբերի

10 Հունվարի — Թիֆլիսի Արտիստական թատրոնում, Զարեհի բեմական դրամունկուրյան 40-ամյակին նվիրված երեկոյում, Ներսիսյան դպրոցի անունից դերասանություն ողջունեց Ս. Գուլակյանը:

«Մշակ», 12 Հունվարի

24 Հունվարի — Լեռ «Վարդանանք»։ Թիֆլիսի Արտիստական թատրոնում, Հայոց դրամատիկական ընկերուրյան խմբի կատարմամբ։ Բեմադրիչ ի. Ալիխանյան, նկարիչ Գ. Շարբարչյան, երաժշտությունը Ռ. Մելիքյանի, պարերը ի. Յաղոփյան-Արքառովի։ Նիվալակուրտ — Ս. Գուլակյան։ Մասնակցում էին Ս. Ռսկանյանը և ի. Ալիխանյանը։

«Մշակ», 26 Հունվարի

20 մարտի — Դարձավ Վրաստաճի գեղարվեստի աշխատողների միության անդամ։

1 մայիսի — Հ. Հեյերմանս՝ «Հույսի» կործանումը։ Թիֆլիսի Շահումյանի անվան բանվորական ակումբում, նորակազմ «Ռունումների» բացմանը։ Կապս — Ս. Գուլակյան։

Խմբի անդամները, բացի Հասմիկ Հակոբյանից և Միհայել Մանվելյանից, երիտասարդներ էին։ Այդ բատրոնը, որ կոչվեց Ստեփան Շահումյանի անունով, հիմնադրել էին Առն Քալաերար (1891—1959) և Ստեփան Քափանակյանը (1877—1944)։ Արմենը խումբ էր ընդունվել իրեւ ուժիսորդ օգնական և դերասան։

«Կարմիր աստղ», Թիֆլիս, 1 Հունիսի

13 մայիսի — Մ. Մետերինի՝ «Սուրբ Անտոնիոսի հրաշագործությունը»։ Շահումյանի անվան բատրոնում։ Բեմադրիչ Ս. Քափանակյան։ Ժողովրդական։

«Կարմիր աստղ», 17 մայիսի

20—28 օգոստոսի — Շահումյանի անվան բատրոնի հյութախաղերը Երևանի Բանվորական ակումբում։ Գուլակյանը մասնակցում էր «Հույսի» կործանումը և «Սուրբ Անտոնիոսի հրաշագործությունը» ներկայացումներին։

«Խորհրդակին Հայաստան», Երևան, 23 Հունիսի

26 օգոստոսի— Սուրեն Խաչատրյանը, որ Երևան էր եկել Մոսկվայի՝ իր ղեկավարած Հայկական դրամատիկական ստուդիայի համար ուսանողներ համաֆելու, հանդիպեց Գովակյանին, որից ստացավ ստուդիայում սպառելու համաձայնություն:

Ա. Խաչատրյանի մասին հրատարակած հուշերում Գովակյանը գրել է. «Սուրեն Խաչատրյանի հետ իմ առաջին հանդիպումը տեղի ունեցավ 1921-ի ամռանը, երբ Շահումյանի անվան քառորդ հյուրախաղերի էր եկել Երևան: Ներկայացումներից մեկի («Սուրբ Անտոնիոսի հրաշագործությունը») ժամանակ կովսիներում տարածվեց Սուրեն Իլյիշի դաჩլինում գտնվելու լուր... Այդ օրը ևս խաղում էի ժողովի զերը: Բեմի եաւում հանդիպեցի մեր խմբի ղեկավարներից Ս. Քափանակյանին, որը ծպտարով ասաց, թե Սուրեն Իլյիշն ուզում է ինձ տեսնել: Ես խստ հուզված էի: Բայց երբ տեսա նուրբ ժպիտը ղեմքին Սուրեն Իլյիշն, որը բարեկամաբար բարենց, գրկեց ինձ և ողուցներ հայդրդեց իմ ընկերներ լևոնից ու Արամից՝ իր կրտսեր եղբայրներից, զգացի ինձ մոտիկ ու հարազատ ու հոգմանես բոլորովին անհետացավ» («Ծորեն Խաչատրյան», Երևան, 1969, ստ. 43–44):

4 սեպտեմբերի— Սուրեն Քաջարյանի, Տիգրան Շամիրխսանյանի, Արշավիր Կորլուտյանի, Սարգսի Սքովյանի, Սամ Խաչատրյանի, Միքայել Մազմանյանի, Սարտիք Մազմանյանի և իր մյուս ընկերների հետ, թվով 22 հոգի, ղեկավարությամբ Ստեփան Քափանակյանի, որը հշանակված էր մուկովյան հայկական ստուդիայի ուսումնական մասի վարիչ, Թբիլիսիից, ապրանքատար վագոնով, մեկնեց Մոսկվա, որ հասավ 24 օրում:

«Նոր կյանք», Թիֆլիս, 1922, 18 մարտի, № 9, էջ 12

28 հոկտեմբերի— Մոսկվայի Հայկական կուլտուրայի տանը սկսվեցին ստուդիայի պարագմունեները: Գասավանդում էին Ս. Խաչատրյանը, Ս. Քափանակյանը, Գ. Բուշարովը, Ս. Բիրմանը, Ս. Գեյրուր, հաջորդ ուսումնական տարուց՝ Ռ. Սիմոնովը, Ի. Կուրգյանցը, Ի. Խապովյանը, Բ. Շուկրինը:

11 դեկտեմբերի— Ընկերոջ՝ Արտավազդ Աղանքեկյանի հետ, ստուդիայի հանձնարարությամբ, Գեղարվեստական քառորդի երրորդ ստուդիայի «Սուրբ Անտոնիոսի հրաշագործությունը» ներկայացմանը հանդիպեց Եվգենի Վախիրանգովին (1883—1922): Այնուհետև նրա միջոցով ծանոքացավ Խորեն Սիմոնովի (1899—1968) հետ, որը հաջորդ տարվանից դարձավ Հայկական ստուդիայի ղեկավար՝ հիվանդ Ս. Խաչատրյանի փոխարեն:

Այդ հանդիպման մասին տասնյակ տարիներ հետո Վախիրանգովի ծնննդյան 75-ամյակի առթիվ ապագրած հոդվածում Գովակյանը գրել է. «1921 թ-

վականին երրորդ ստուդիան «Սուրբ Անտոնիոսի հրաշագործության» վերամշակված բեմադրությունն էր ցուցադրում Առաջին ստուդիալի շենքում: Փոքրիկ դահլիճն լեփ-եցուն էր, բոլորը մեծ հետաքրքրությամբ սպասում էին ներկայացման սկզբին, նույն բոլոր և ես ու էի մի ուսանող՝ Հայկական ստուդիայից: Հանկարծ բնկերս շշնչաց. «Տե՛ս, ահա՝ Վախրանզովլը»: Փակ դրան որմնախորշում, ձեռքերը գրպանը դրած, կանգնած էր գունած դեմքով, կապուտաշյալ, վայելչակազմ Վախրանզովլը: Նա ուշադիր դիտում էր սրամի, կարծես թե ուսումնասիրում հանդիսականին: Հայկական ստուդիայի ուսանողները որոշել էին մեկ էլ դիմել Վախրանզովլին, որպեսզի նա հաճան առնի մեր ստուդիայի դեկաֆարությունը: Սուրեն Իլլիշը հիվանդության պատճառով բռնել էր մեզ, այժմ հարմար ժամանակ էր դիմել նրան: Հոգմոննես հազիվ զայելով, մոտեցած ներկայացա նրան, ներգործություն ինքնեցի անհանգության համար, ապա հաղորդեցի բնկերներիս բուռն ցանկությունը: Նա բարեկամաբար գրկեց իմ ուսը, բախծուտ ժամաց և ասաց. «Այժմ անհնարին է: Ոչ թե շեմ ցանկանում, այլ հնարավորություն չունեմ»: Լույսերը սկսեցին մարել: Ըստ երեսութին, նա չէր ուզում ինձ այդպիս անմիտքար ետք դարձնել նստեց արռողին, ինձ էլ իր կողմին նստեցրեց և շշնչաց ականջիս. «Ես ձեզ համար լավ դեկավար եմ գտել, — հետո խորամանկ ժայռով ավելացրեց, — նա էլ ինձ նման մի հայ է»: Բացից վարագույրը: Բայց ես ցրված էի նայում այդ հետաքրքի ներկայացումը, մասամբ էի, թե այդ ո՞վ է լինելու մեր նոր դեկավարը: «Ահա՝ նա», — ձեռքս սեղմելով ասաց նա և աշքերով բեմի կողմը ցուց տվեց: Մասուցարանը ձեռքին թիւ էր դուռս եկել սպասավոր ժողեթի դերակատար 22-ամյա Ռուբեն Սիմոնովը: — «Թիմեցեմ նրան, նա լավ դեկավար կլինի: Տաղանդավոր երիտասարդ է»: Մեր ստուդիայի խորհրդի որոշմամբ հաջորդ օրը ես արդեն Ռուբեն Նիկոլաևիչի մոտ էի: Շուտով նա կապվեց մեզ հետ և մեր միջոցով՝ հայ բարեռնին: Ոչ միայն Ռ. Սիմոնովի և նրա հայ ուսանողների, այլև Բ. Զախարավի և այլ արվեստագետների միջոցով Վախրանզովլի շղողություն արվեստը, նրա խիզախը, որոնող ողին մուտք գործեց մեր թեմը» («Սովորական Հայաստան», 1958, 13 փետրվարի):

Երեք տասնամյակ հետո, Ս. Գովակյանին գրած համակներից մեկում Ռ. Սիմոնովը հիշել է. «Թանկագին Արմեն. ես ենք պարտական եմ այն բանի համար, որ դու, Եվգենի Վախրանզովլի ցուցումով, ինձ՝ հասակացիդ վստահեցիր այնպիսի մի պատասխանատու գործ, ինչպիսին է Հայկական ստուդիայի դեկավարությունը: Ու ես, այն ժամանակվանից, կապվեցի հայ արվեստի հետ» (ԳԱԹ, Գովակյանի արխիվ, № 783):

23 փետրվարի — Գիտեց Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ներուդ ստոպիայի (Արքատ, 26) «Արքայադրության Տուրանդոս» բեմադրության անդրանիկ ներկայացումը: Բեմադրիչ ե. Վախրանգով: Տրուֆալինո—Ռ. Սիմոնով: Դահլինումն էր Կ. Ս. Ստանիսլավսկին:

30-31 մայիսի — Ներկա գտնվեց Մոսկվայի Հայկական ստոդիայի ստեղծագործական երեկոյին:

1 Հունիսի — Սկսեց հանախել Վ. Մեյերհոլդի դասերին Մոսկվայի բարձրագույն թատերական արհեստանոցում: Այդ պարապմունքները տևեցին, ընդմիջումներով, շուրջ երկու տարի: Այդ ընթացքում, որոշ ժամանակ, ուսանել է նաև երկորդ Գեղարվեստական թատրոնի ուժիսոր Վ. Ն. Տատարինովի մասնավոր դասընթացներում:

15 սեպտեմբերի — Հայկական ստոդիայում սկսեց մասնակցել Կ. Գոլդոնիի «Հյուրանոցի աիրումին», Հ. Պարոնյանի «Քաջաքավարության վճառներ», Մ. Անդրեանի «Խանդոս ծերովը» և «Սալամանքյան բարանձավը», Է. Լաբիշի «Երկու շատախոս» պիեսների բեմադրական աշխատանքներին:

16 դեկտեմբերի — Ստոդիայի ձեռագիր թերթի համար սկսեց գրել մուկովյան թատերական հոսանքներին նվիրված հոդված, որը մնաց անակարտ: Մեջ ենք թերում հոդվածի վերջին հատվածը. «Բավականաշափ պարզել են իրենց գեղարվեստական դեմքը Մոսկվայի թատրոններից մի հանիսը, որոնց էլուրյան մասին կարեфт կա (նյուրիս համապատասխան) մի հանի խոսք ասել: Այդ թատրոնները կարելի է բաժանել երեք խմբի. ա) Գեղարվեստական թատրոն (Կ. Ստանիսլավսկի և Ե. Վախրանգով), ուր, շնորհիվ մշակված թատրոնական սիստեմի և ըմբռնման, բեմահարքակ են հանում այնպիսի ստեղծագործություն, ուր բովանդակությունը արտահայտվում է նյուրիս հարազատ գեղարվեստական ձևակերպությամբ, ուր ամեն մի արտաքին թատրոնական երևույթ ունի իր ներքին, հոգերանորեն խորապես հիմնավորված, արդարացումը: բ) Պետական կամերային թատրոն (Ա. Թափրով) և ԳիՏԻՍ (Վ. Մեյերհոլդ), ուր զանազան գեղարվեստական արտահայտչածեր գիտակցութեն են «ասրբած, սազացված», ուր բովանդակությունը բազմաթեսակ բեմական թամաշականության, այլակերպումների և միմոսական տրյուքների առիք է զառնում և ոչ թե ներքին հոգերանական տարալուծմանը ենթակա ճրպատակ: գ) Պետական Փոքր թատրոն (Ա. Յուժին և Մ. Երմոլով): (Զեռագիւն այստեղ ընդհատվել է):

20 գեկտեմբերի — Սկսեց գրել «Հեծազ» լեզենդ-կայուղը, մեկ արարով, որն ավարտեց 1923-ի վետրվարին: Նախատեսված էր թեմադրել ստուդիայում: Թուսերեն քարգմանել է Գագիկ Տեր-Գարբիելյանը: Այդ քարգմանուրյան ձեռագիրը պահպան է Զարենցի անվան գրալիանուրյան և արվեստի քանդարանի (ԳԱԹ) Գոլակյանի արխիվում:

1923

15 մարտի-20 ապրիլի — Հովհ. Թումանյանի «Փարվաճա» պոեմի մոտիվներով գրել է համառուն շափածո դրամա:

6 մայիսի — Մասնակցեց Մոսկվայի հայկական ստուդիայի՝ Մ. Սերվանտեսի «Սալամանքյան բարանձավը» (Թուկկե) և Է. Լարիջի «Երկու շատախոս» (Թողյան) ներկայացումներին: Բեմադրչ Ա. Ա. Գեյրոս:

1 հունիսի — Մեկնեց Թիֆլիս՝ ստուդիայի համար ուսանողներ հրավիրելու և հայ քատրոնի վերաբերյալ նյութեր հավաքելու նպատակով: Վերադարձավ Մոսկվա օգոստոսի 10-ին:

3 սեպտեմբերի — Մոսկվայում ամուսնացավ Հայկական ստուդիայի ուսանողնի Անահիտ Մասշյանի հետ:

5 սեպտեմբերի — Թիֆլիս վերադարձած Մտեփան Քափանակյանի փոխարքեն նշանակվեց Հայկական ստուդիայի վարիչ:

10 սեպտեմբերի — Ստուդիայի ուսումնական խաղացանկը մտան Ա. Մտբինդրեգի «Սամումը» (քարգմանի և Զամարի դերակատար Ա. Գոլակյան), Լ. Շանրի «Հին աստվածները» (ուժիուրի ասիստենտ և Վահանոր դերակատար Ա. Գոլակյան) և Ե. Զարենցի «Կապիազ-քամաշան» (Ղարա-Ա. Գոլակյան):

25 սեպտեմբերի — Սկսեց պարբերարար մասնակցել Գեղարվեստական քառորդի Երրորդ ստուդիայի «Արքայադրուար Տուրանդուտ» ներկայացմանը՝ իրեւ «նվազախմբի անդամ»:

4 հոկտեմբերի — Հայկական ստուդիայում «Զայնի մշակում» առարկայի դասաւոր Բ. Շշովինի նախաձեռնուրյամբ Արմեն Գոլակյանը և Սուրեն Քոչարյանը սկսեցին բեմական խոսի դասեր տալ ստուդիականներին:

5 հոկտեմբերի — Մոսկվայի ստուդիայում սկսվեցին Հ. Պարոնյանի «Մեծապատիկ մուրացկանների» (բեմադրիչներ Բ. Սիմոնով և Ի. Կուտրյավցե, Բանաստեղծ—Ա. Գոլակյան) և Գ. Սունդուլյանի «Պեպոյի» (բեմադրիչ Ի. Բագրայուս, Գիգո—Ա. Գոլակյան) բեմադրական աշխատանքները:



Մուսլիմի Լազարյան ճեմարանի շենքը, որտեղ տեղավովարծ էր հայկական ստուդիան

Թիֆլիսի բաղաբաջին ուսումնարանի աշակերտների նկատ. (Վերևում՝ ձախից երրորդը) 1909





Մարտին Մազմանյանի մետ. Մոսկվա, 1928

Գ. Աֆրիկյանի, Ս. Աբովյանի, Կ. Արքարյանի, Մ. Կոստանյանի և Վ. Վարդանյանի մետ. 1926



22 մայիսի — Թոներից հիվանդ Արմեն Գուլակյանը բուժվելու համար մեկնեց Սոչի, որ մեաց մինչև հուլիսի 25-ը:

13 օգոստոսի — Մասնակցեց Մոսկվայի Հայկական ստուդիայի՝ Երևանի Բանվորական ակումբում խաղացած «Մալամանեյան բարանձավը» և «Երկու շատախոս» հերկայացումներին:

«Հորհրդագին Հայաստան», 15 օգոստոսի

15 սեպտեմբերի — Ա. Մասշյանը, ստուդիականների հետ, վերադառնալ Մոսկվա, իսկ Գուլակյանը, վատառողջ լինելու պատճառով, մեաց Թիֆլիսում:

29 Հոկտեմբերի — Ընդունվեց Թիֆլիսի Հայ դրամա՝ իրեւ տեխնիկական ոեժիսոր, ամսական 60 ռ. աշխատավրձով:

1925

3 փետրվարի — Թիֆլիսի «Մարտակոն» թերթում լույս տեսավ նրա հոդվածը վրացական «Փորուրկի նախօրյակին» ֆիլմի մասին (սցենարը Շալվա Դադիանու, բեմադրիչ Կոտե Մարշանիշվիլի), որը պատկերում էր անցյալ դարի 70-ական թվականների հեղափոխական շարժումները Վրաստանում: Այդ հոդվածում, որ ստորագրված է «Ար. Գ.», կարդում ենք «Զեյյած թեմայի հետաքրուրյանը և սրան վերաբերող նյութերի առառուրյանը, հեղինակը շիկարողացել ըմբռնել, ապա և հարազատուրեն նկարագրել՝ ա) ժամանակի կենցաղը, բ) առաջարված պայմանների էլուրյունը և գ) սրանից բխած հետեվանեները: ...Ուժիսորը կինոյին մոտեցել է քառորնական մասշտաբով, որի հետևանքն է եղել կինոյի թատրոնականացումը: Ֆիլմը կազմված է մի քանի տասնյակ քառորնական ահասարանների լուսանկարների շարքերից, որոնք աշխատանքությամբ և գեղագործությամբ են ծական գեղագործության քառորնականացումը: Վերոհիշյալը ոչնչացնում է կինոյի առանձնահատկությունները և վերջին տարիների նվաճումներն այդ խնդրում: ...Թույլ ֆիլմ է, զուրկ որևէ գաղափարից: Եյուրը ձգձգված է: «Միծաղելի» դրամա է կամ «ախուր» կուտեղիա»:

23 ապրիլի — Յու. Յուրիին «Սկանա ներուր». Թիֆլիսի Հայ դրամայում: Բեմադրիչ Ա. Քափանակյան, ուժիսոր Ա. Գուլակյան:

«Заря Востока», 30 аպրիլ



17 Հուլիսի — Ստացավ Թիֆլիսի Հայարտան վարչության համաձայնությունը, Մոսկվայի Հայկական ստուդիայի շրջանավարտների մասնակցությամբ, իր դեկավարությամբ կազմակերպելու քատրոն-ստուդիա:

1 օգոստոսի — Ստեփանավանում Գովակյանը գրույց ունեցավ Երևանի Մոսկվայի պետքարտոնի գլխավոր ռեժիսոր Լենդ Քալանքարի հետ՝ Մոսկվայի ստուդիայի շրջանավարտներին քատրոնում տեղավորելու հարցի շուրջը: Ուրոշված էր եղել ստուդիայի բոլոր շրջանավարտներին ընդունել Երևանի Առաջին պետքարտոն, բայց հաստի հային հետարկությունների սղության պատճառով հրավիրվել են միայն Սուրեն Քոչարյանը և Արշավիր Կորիույանը (Վերջինն շկառողացավ օօպել այդ իրավունքից և մնաց Մոսկվայում):

10 սեպտեմբերի — Ա. Գովակյանի միշենորդությամբ Վրաստանի լուսադողկոմար որոշեց Մոսկվայի ստուդիայի բոլոր շրջանավարտներին ընդունել Թիֆլիսի Հայ դրամա: Բայց քատրոն ընդունվեցին միայն հինգը՝ Վավիկ Վարդանյան, Մուրադ Կոստանյան, Սարգիս Սրովյան, Կարո Ալվարյան և Գեղամ Աֆրիկյան:

18 նոյեմբերի — Հ. Պարոնյան՝ «Մեծապատիլ մուրացկաններ». Թիֆլիսի Հայ դրամայում, խաղաշրջանի քացմանը: Բեմադրիչ Ա. Գովակյան (ըստ Մոսկվայի ստուդիայի), նկարիչ Գ. Շարբարյան: Ա. Կորիույանի հիմքության պատճառով Արխոնդոմ աղայի դերը կատարեց Խսահակ Սլիխանյանը:

Ներկայացումը հաջողություն ունեցավ, արժանացավ մամուլի դրական գնահատականին: Թատերախոս Պրավդինը գրեց. «Դեվառանում ենք դերակատարներից որևէ մեկին առանձնացնել: Բոլորը հավասարապես իրենց դերերուն լավ էին: Խաղի անսովոր կենսականությունը, հարուստ միմիկան, շարժումները գեղարվեստականությունը, իմաստավորված առոգանությունը՝ ահա այն բոլոր հատկանիշները, որոնք ստեղծված են կոլեկտիվ աշխատանքով: Հենց նրանք աշխատանքով էլ պետք է բացատրել հայկական քատրոնի ունեցած հաշողությունը: Կուեկտիվի աշխատանքն աննանաշելիութեն վերափոխել է հայ դերասաններին» («Յարա Յօստոկա», 20 նոյեմբերի):

20 նոյեմբերի — Թիֆլիսի Հայարտան դամբինում կայացավ Հայ դրամայի «Մեծապատիլ մուրացկաններ» ներկայացման հնարկումը, որտեղ բեմադրության սկզբունքների պաշտպանությամբ հանդես եկավ Գովակյանը:

25 նոյեմբերի — Ա. Պրկոնֆլէ «Բոռ» (ըստ է. Վայնիշի համանուն վեպի):

Թիֆլիսի Հայ դրամայում: Բեմադրիչ Ս. Քափանակյան, ռեժիսոր Ա. Գովակյան, հկարիչ Գ. Շարբարչյան:

Առն [Մարկոս Դարբինյան] «Բոռ», «Մարտակող», 27 նոյեմբերի

9 դեկտեմբերի— Ա. Շիրվանզադե՝ «Պատմի համար». Թիֆլիսի Հայ դրամայում, մասնակցությամբ Ամերիկայի Միացյալ Նահանգներից վերադարձած Հովհաննես Արելյանի (Ելիզարյան): Ներկայացման երրորդ արարից հետո կայացալ պատվո ցույց: Ելույր ունեցավ Ա. Գովակյանը. «Հարգելի ընկեր Արելյան: Ես ողջունում եմ Ձեր վերադարձը հայրենիք և մայրենի բեմ Պետական հայ դրամայի այն երիտասարդների կողմից, որոնք մինչև այսօր հնարավորություն չեն ունեցել աշխատելու Ձեզ հետ, սակայն այսօրվանից ցանկանում են զործել մեծ արտիստի հետ՝ ի փառ հայկական բեմի ծաղկման և զարգացման: Մենք նոր կյանքի շեմքին ենք կանգնած և դրա համար էլ միահամու ուժերով պետք է ստեղծենք այն բատրոնը, որն այդ նոր կյանքի ծրնունդը հանդիսանա և արժանի լինի նրան: Այդ բատրոնի գաղափարակիցներս նախանձախնդիր ենք մեր շարքերը ստվարցնելու հայ բատրոնի մեծ երախտավորությունը: Մենք հեռու ենք հոգով ու մտուի զառամյալներից և դիետանաներից: Մեր շարքերն ենք ընդունում և աշխատում նրանց հետ, որոնք կենսունակ են, երիտասարդ ոչ միայն տարիեղով, այլև հոգով ու մտածելակերպով: Մենք այդպիսին ենք կարծում և Զեզ: Կցանկանայինք Ձեզ հետ, որպես հայ բեմի մեծ արտիստի, մասնակցել այնպիսի աշխատանքների, որոնք բատրոնական արվեստի բարձ դրսուրմամբ նոր կյանքի ողին են արտահայտում, նրան ծառայում: Աշխատեցե՛մ երիտասարդի նման, երիտասարդների հետ, հանուն մեր բատրոնի բարզավաճման: Սովորեցե՛մ և սովորեցրե՛մ՝ ահա մեր ցանկությունը» (ԳԱԹ, Գովակյանի արխիվ, № 433):

«Մարտակող» 11 դեկտեմբերի

1926

10 փետրվարի— Թիֆլիսի Ռուաթավելու անվան բատրոնում, Օլգա Գուլացյանի բեմական զործունեության 25-ամյակի առիջի, ցույց տրվեցին հատվածներ Գ. Սունդովյանի «Քանդած օջախ», Գ. Դեմիրենյանի «Գատաստան» և Ա. Ֆրանսի «Համր կին» պիեսներից: Բեմադրիչներ Ս. Քափանակյան և Ա. Գովակյան:

24 մարտի— Թիֆլիսի Մուսքավելու անվան քատրոնում մասնակցեց Հովհաննեսի թումանյանի մահվան երրորդ տարելիցին նվիրված երեկոյին:

12 ապրիլի— Ն. Ազիանի (Դոնդարյան)՝ «Գեղեցակրկա». Թիֆլիսի Հայ դրամայում: Բեմադրիչներ Ս. Քափանակյան և Ա. Գուլակյան, նկարիչ Գ. Շաբբարչյան:

«Մարտակող», 16 ապրիլի

18 ապրիլի— Թիֆլիսի Բանվորական քատրոնում մասնակցեց Հայ դրամայի «Մեծապատիվ մուրացկաններ» ներկայացմանը՝ թժշկի դերում:

2 մայիսի— Մեկնեց Դիլիջան բուժվելու: Այստեղ Միջմիուրենական բանվորական ակումբի վարչուրյան բարտութար, բանաստեղծ Վաղարշակ Նորենցի հրավերով մայիսի 15-ին կազմակերպեց «Կապույտ բլուզ» քատերախումբը, ապա նշանակվեց այդ ակումբի վարիչ: Դիլիջանում գործեց շուրջ մեկ տարի:

14 հունիսի— «Կապույտ բլուզ» խմբով Դիլիջանի Բանվորական ակումբում ներկայացրեց իր գրած «Տնտեսելու ռեժիմի պաշտպանները» մեկ արտով կատակերգությունը:

12 նոյեմբերի— Դիլիջանի Միջմիուրենական բանվորական ակումբի վարչուրյան գործուղումով մեկնեց Մոսկվա՝ ծանոքանալու մայրաքաղաքի քատերական կյանքին:

20 նոյեմբերի— Մոսկվայում այցելեց հիվանդ ընկերոջը՝ Արշավիր Կոռկոտյանին:

21 նոյեմբերի— Մոսկվայի Երկրորդ Գեղարվեստական քատրոնում դիմեց «Համլետը», մասնակցուրյամբ Միխայիլ Չեխովի: Նոյեմբերի 22-ին Ս. Մասշյանին գրել է. «Ներկայացումը հիանալի էր... Սնննար է հաղորդել այն ապրումները, որ ես ունեցա այդ երեկո»:

22 նոյեմբերի— Մոսկվայի Հայկական կուտուրայի տանը ներկա է գտնըվել Մոսկվան Երկրորդ ստուդիայի՝ «Թատերական արհեստանոցի» բացմանը: Ստուդիան դեկավարելու էր Ռ. Սիմոնովը: Ուսանողների մեջ էին Թարիկ Սարյանը, Արշավիր Կոռկոտյանը, Սարգիս Աբովյանը, Արտավազդ Աղանբեկյանը, Վարդումի Մելքոնյանը և ուրիշներ:

25 նոյեմբերի— Մելերհալդի քատրոնում ներկա էր Մ. Պողոսյանը կու (ըստ ի. Էրենբուրգի) «Ծ. Ե.» պիեսի ներկայացմանը: «Նրա (Մելերհոլդի—Բ. Հ.) մոտ ուզած ներկայացումը հայտնագործություն է, ինչը տաղանդավոր է, հանճարեղ, իսկ դերասանները անշունչ են, անտաղանդ: Մելերհոլդի բեմադրություններում շատ բան կորչում է հենց իր՝ Մելերհոլդի մեղքով: Միաժամանակ

աեղի են ուսենում իրար հետ շկապված տարբեր գործողություններ... հասարակությունը զգալի՝ նա՞յի քել լի և քել ի՞նչն է կարեռ, ի՞նչը՝ ո՞չ: Խորապես գեղարվեստական տեսարանների կողմին շատ են անմշակ, վատ արված պատկերներ» (նոյեմբերի 27-ին կենցը գրած նամակից):

26 նոյեմբերի— Վախրանգովի քատրոնում դիտեց Մ. Բոլգակովի «Զոյկայի բնակարանը»: «Երբ դիտում ես «Եվգրաֆը» երկրորդ Գեղարվեստական քատրոնում, իսկ այսուեղ հիշյալ պիեսը, կամա քել ակամա մտածում ես՝ ինչքան են այդ քատրոնները մանրացել: Բեմ են հանում այսպես կոչված «ժամանակակից» պիեսներ, որոնք իրք քետք է համահնչուն լինեն էպոխային, բայց ոչնչից միայն ոչինչ է ստացվում: Պիեսը նման է անեկդոտի...» (նոյեմբերի 27-ին Ա. Մասչյանին գրած նամակից):

29 նոյեմբերի— Ներկա էր Վախրանգովի հիշատակին նվիրված ցերեկոյթին, որտեղ ելույր ունեցան Վ. Մելերհոլլը և Մ. Զեխովը:

6 դեկտեմբերի— Ցերեկը Վ. Մելերհոլլի քատրոնում ներկա է գտնվել Գոգոնի «Ծեփոր» կատակերգության ավարտական փորձին: «Հեց միայն այս բեմադրության համար արձե զալ Մոսկվա...».— գրել է Գուլակյանը դեկտեմբերի 4-ին, Ա. Մասչյանին:

14 դեկտեմբերի— Ավարտվեց Ա. Գուլակյանի ստեղծագործական գործուղումը Մոսկվայում, որտեղ, բացի վերը հիշածներից, դիտեց հետևյալ ներկայացումները. Ա. Ֆայկոն՝ «Եվգրաֆ» (23 նոյեմբերի, Գեղարվեստական երկրորդ քատրոն), Պ. Նիվուա և Մ. Պանչյոն՝ «Փառքի շարշըները» (24 նոյեմբերի, Գեղարվեստական քատրոն), Ա. Տրետյակով՝ «Մոնշա», Զինաստան» (27 նոյեմբերի, Հեղափոխության քատրոն), Ա. Գլեբով՝ «Զագմուկ» (28 նոյեմբերի, Փոքր քատրոն), Բ. Ռումաշով՝ «Կրիվոռիլսկի վերջը» (30 նոյեմբերի, Հեղափոխության քատրոն), Վ. Բիլ-Բելոցերկովսկի՝ «Շտորմ» (1 դեկտեմբերի, ՄԴՍՊՍ-ի՝ այժմ Մոսսովետի քատրոն), Յու. Օ'նիլ՝ «Սեր ծփիների տակ» (2 դեկտեմբերի, Կամերային քատրոն), Գ. Գուտման և Վ. Տիպոն՝ «Սիրո մասին» (3 դեկտեմբերի, Սատիրայի քատրոն), Լ. Սեյֆովինա՝ «Վիրինեյա» (4 դեկտեմբերի, Վախրանգովի անվան քատրոն), Ի. Կալման՝ «Սիլվա» (5 դեկտեմբերի Օպերետային քատրոն), Ա. Բիկով՝ «Միստեր Գառունի խողաքանությունը» (8 դեկտեմբերի, Սեմպերանտե քատրոն), Գ. Զիմեսկի՝ «Ալեքսանդր Առաջին» (9 դեկտեմբերի, Կորչի քատրոն), Բ. Ռումաշով՝ «Օդային կարկանդակ» (10 դեկտեմբերի, Հեղափոխության քատրոն), Վ. Հյուզոն՝ «Մարինե Դելում» (11 դեկտեմբերի, Վախրանգովի անվան քատրոն), Կ. Գոցցի՝ «Արքայադրաստ Տուրանդու» (12 դեկտեմբերի, ցերեկը, Վախրանգովի անվան քատրոն), Յ. Պունի՝ «Էսմերալդա» (12 դեկտեմբերի, Երեկոյան, Մեծ քատրոն):

21 Հունվարի — Վ. Ի. Լենինի մահվան երրորդ տարեդարձին Դիլիջանի «Կապույտ բլուզ» քատերախումբը ցուցադրեց Ա. Գովակյանի «Հեռագրատուն. Լենին» մեկ արարով պիեսը: («Կապույտ բլուզ» խմբի համար գրված ինչպես նիշյալ, այնպես էլ մյուս պիեսների ձեռագրերը պահպան են Գրականուրյան և արվեստի քանդարանում (ԳԱԹ), Գովակյանի արխիվում):

1 փետրվարի-30 Հուլիսի — Դիլիջանի «Կապույտ բլուզ» քատերախումբը ներկայացրեց Գովակյանի «Պղուկյան» գրոտեսկը. «Մասշտար» պիեսը, «Զայնազուրկներ» կատակերգուրյունը:

2 օգոստոսի — Ա. Գովակյանը Դիլիջանից տեղափոխվեց Երևան՝ ընդունվելու Առաջին պետական քառորդ կամ Հայկին:

1 սեպտեմբերի — Լուսժողկոմ Ա. Մոռվայանի կարգադրությամբ Առաջին պետքատրոնի վարչությունը որոշեց Արմեն Գովակյանին ընդունել որպես ուժիսորի ասիստենտ:

11 Հոկտեմբերի — Երևանի Առաջին պետքատրոնի գեղարկոմը հաստատեց Գ. Սունդուկյանի «Խարաբալա» կատակերգուրյան Գովակյանի կատարած դերաբաշխումը և սկսվեցին փորձերը:

15 Հոկտեմբերի — Երևանի Առաջին պետքատրոնում վերականգնեց Արշակ Բուրշալյանի բեմադրած ն. Էրդմանի «Մանդատը»:

«Խորհրդային Հայաստան», 19 Հոկտեմբերի

11 նոյեմբերի — Դ. Շեգլով՝ «Յուլք». Երևանի Առաջին պետքատրոնում: Բեմադրիչ Լ. Քալանքար, ճկարիչ Միքայել Արուտչյան, ուժիսորի ասիստենտ Ա. Գովակյան:

Քալանքարի առաջարկությամբ Գովակյանի գրած ուժիսորական մեկնաբանությունից բերում ենք մի հատված. «Այժմյան քատրոնում յուրաքանչյուր պիես, լինի դա նոր, թէ հին, պետք է բեմադրվի, մեկնաբանվի, անցնի ժամանակակից պրիզմայով, որովհետև խորհրդային քատրոնը (ինչի մենք ձրգուում ենք) բացի խոնեմ ժամանակավայրից, պետք է լինի խորհրդային հաստարակայնության գաղափարական դաստիարակության տրիբուն և դրա համար էլ յուրաքանչյուր բեմադրվելիք պիես պետք է (գոնեք մինիմալ շափով) բավարարի վերոհիշյալ պահանջներին: Այդ տեսակի պիեսների շարքը պետք է դասել Դ. Շեգլովի «Յուլքը», որը գեղարվեստորեն վեր է հանում այն նշմարտությունը, որ կեցությունն է որոշում գիտակցությունը, պատմում այն մասին, թէ ինչպես առընդ դասակարգերին պատկանող և իրենց դասին հատուի

Հասկացողությամբ մի խումբ մարդիկ, նույնիսկ զածան տարերի խստությունների ու մահվան սարսափի տակ, չեն կորցնում իրենց դասակարգային գիտակցությունը և փոխադարձ անտաղոնիզմը: Պիեսը հոգեբանական դրամա է, աշխի է ընկնում զաղափարական հագեցվածությամբ, բայց մերկապարանոց ազիտիս չէ, զաղափարն անցնում է կենդանի հոգեբանությունների միջոցով»:
(Երիվ տեխսող պահուում է Գուլակյանի արխիվում):

«Խորհրդային Հայաստան», 24 նոյեմբերի, 7 գևոտեմբերի

3 գեկտեմբերի — Գ. Սունդովյան՝ «Խարաբալա». Երևանի Առաջին պետքառունում: Բնմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Ստեփան Թարյան, կոմպոզիտոր Մերգեյ Շարիբյան:

Սեպտեմբերի 27-ին, «Խարաբալայի» նախապարաստական աշխատանքներն սկսվելու կապակցությամբ, Ա. Գուլակյանը գրեց «Սունդովյանի «Խարաբալայի» բեմադրության առքիվ» հոդվածը, որը մեաց անտիպ: Լեզվական խմբագրմամբ և մասնակի հապալումներով բերում ենք այդ հոդվածի տեխսողը. «Ծեպերտուարային այն ճգնաժամը, որը տիրում է ներկա բատրունում, հանախ հարկադրում է բատրոնի դեկադար մարմիններին այս առգեապը բերեացնել այն կլասիկներով, որոնց գրվածքները չեն կորցրել իրենց զեղարկեստական արժանիքները մեր ժամանակի համար, չեն մեղանչում զաղափարապես և, ենքարկելով նոր բատրոնական ինսենյարեացիայի, կարող են հետաքրիր լինել այժմյան հանդիսատեսին: Ծեպերտուարի իննդրում ավելի և մեծ ճգնաժամ է ապրում հայկական բատրոնը, որը համարյա գուրկ է ժամանակակից ինքնուրույն պիեսներից: Սա բացասական երեսուր է, որը վերացնելու համար մեր բատրոնը ուզում է դիմել հին դրամատուրգների այն երկերին, որոնք մեզ համար ունեն դասական արժեք:

Սյովիսի կլասիկներից է Գ. Սունդովյանը, որի գրվածքներից մի բահիսը, շնորհիլ իրենց տենդենցիոզ զաղափարախոսության, ձեփ և բեմադրական նյուրի, համահնչում են մեր ժամանակին: «Խարաբալան» մեկն է դրանցից, որը, շնորհիլ տիպերի կենդանության, ինորիգայի մեռամբիր զարգացման, դիալոգի աշխուժության և հարուստ դերակատարության, կարող է բավարարել բատրոնին և հանդիսականին:

Սակայն «Խարաբալայի» մեկնաբանությունը, դերակատարությունը և հանդիսականի վերաբերմունքը այն չի լինելու, ինչ որ եղել է 60—70 տարի սրանից առաջ: Հիմնովին փոխվել են կարգերը, մարդիկ, փոխվել է բատրոնն որ նրան ներկայացված պահանջները: Եվ, որ գիտավորն է, փոխվել է մեր կյան-

Քի ոիրմն ու քատրոնի առողջառորիան: Մինչդեռ պիեսը մնացել է նույնը: Սա իր այժմյան տեսլով հնագիտական արձեք է:

Պարզ է, որ «Խարաբալան» իր նախնական դրույյամբ չի կարող բավարարել այն պահանջներին, որ կներկայացնի քատրոնը պիեսին և հանդիսական քատրոնին: «Խարաբալան» պետք է ենթարկվի նոր ինտերվրետացիայի, բեմադրվի որպես հին և նոր թիֆլիսի ժաղթենի դասի վերաբերյալ կծու սատիրա և իրեւ իդեալիստ սիրահարի և խարդախ մոցի հովի արկածների մասին սուր անձեռուություն: Պիեսի պերսոնաժները, խաղը, շարժուածները, միզանացենները, գրիմը պետք է լինեն շափազանցված, ամեն ինչ կրելու է կարիկատուրային բնույր: Մենք ծիծաղուած ենք բոլորի վրա, բացի Մարգրիտից, որի վրա ծիծաղուած են պիեսի գործող անձինք: Մեր համակրանքը պետք է լինի միայն Մարգրիտի կողմը:

«Խարաբալայի» դերակատարությունը պետք է տարբերվի մյուս պիեսների կատարումից երանով, որ այսակ դերակատարը պետք է ցուցադրի գեղական տիպն ունեցած իր բացասական երգիծական վերաբերմունքը: «Խարաբալայի» բեմադրության ոնն է գրուեսկը՝ խաղի և արտաժին ձեւավորման մեջ: Վերջինս մի ժիշ կմոտենա ոռուական լուրովիին:

Ի նկատի ունենալով բեմադրության հիշյալ ոճը՝ ներկայացմանը տրցվում է խաղի, բամաշայի բնույր: Թամաշան ունենալու է առաջարան, որտեղ օգտագործվում է գործող անձանց մասին Առնդրուկյանի տված նկարագրությունը, և վերշարան, որտեղ լինելու են հատուկ գրված երկու կոսալետ, ուր դերակատարները խնդրուած են հանդիսատեսներից դերակատարության պակասությունների նկատմամբ լինել ներողամիտ:

Ներկայացումը ընթանում է երաժշտության ուղեկցությամբ: Օգտագործվում են հին թիֆլիսի եղանակները: Երաժշտությունը օժանդակ միշոց է արտահայտելու դերասանական շափազանցված ձևեր՝ ոիրմիկ շարժումները, պիեսի սիրային ինտիմ մոմենտների հումորիստական բնույրը և բամաշայի մեջ մտցված երեք պահանջման խաղերը, որոնց իրեւ նյուր ծառայում են առաջարանը, վերշարանը և շորորդ պատկերի վերջը, երբ Խային բաղակում վինարում է Գեղրգին:

Արտաժին ձեւավորման մեջ օգտագործվում են փոքրադիր շիրմաներ և վարագույրներ՝ հին թիֆլիսին բնորոշ շտրիխներով:

Պիեսի բեմադրությունը կապված է մի շարք բարդությունների հետ, ուրնք զիսավորապես զալիս են դերակատարության դժվարությունները: յուրաքանչյուր դերակատարի շարժուածեր պետք է համապատասխանի գործող անձանց շարժումներին, երաժշտությանը և արտաժին ձեւավորմանը: Պիեսի լի-

զուն դերակատարներից շատերի համար դյուրամատչելի չէ, իսկ արտաքին ձևավորումը, չհայած իր պարզությանը, պահանջում է պատկերների արագ փոփոխության ծայր աստիճան մաքրություն: Նկատի ունենալով վերնիշյալ հանգամանքները, «Խարաբալան» բեմադրելու համար ինձ անհրաժեշտ է 35 փորձ» (ԳԱ.Թ, Գովակյանի արխիվ, № 171):

Տպագրվեց Գովակյանի «Խարաբալան» Պետական բատրոնում՝ հոդվածը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Գ. Սունդուկյանի «Խարաբալան», շնորհիլ իր արձարծած նյութի, կառուցվածքի, ինտրիքայի հետաքրքրական զարգացման, լեզվի գեղեցկության կարող է բավարարել մեր բատրոնին ու հանդիսականին և որոշ շափով բերեացնել մեր ինքնուրույն ռեպերտուարի տագնապը:

«Խարաբալան», ինչպես առհասարակ հին դրամատուրգներին, չի կարելի մեկնարանել և բեմադրել ժամանակակից բատրոնում այնպես, ինչպես այդ բարոնների էր հնում: Միանգամից պարզ է, որ 1927 թվին «Խարաբալայի» ներկայացնումը պետք է տարբերվի ոչ միայն իր արտաքին ձևավորումով, այլև մեկնարանությամբ: «Խարաբալան» այժմ մեզ համար մի սատիրա է, որոնց ցուցադրվում է մոտիկ անցյալի բարչելի բարչելի պատկերը, աղջկա «մարդու տալլը», նրա վախառքը:

Տեսադր մնում է նույնը, բայց փոխվում է ինտերպրետացիան: Մեր կողմից երբեք չեն արդարացվում հերոսների խարդախությունները «հոգեբանական հիմնավորումներով»: Այդ հերոսները, որոնք Սունդուկյանի նկարագրի համաձայն «ըստ երևույթին պատվավոր մարդիկ են», մեզ համար շատ անպատճիլ դասակարգի «ազնիվ» ներկայացնություններ են: Նրանք ոչ թե 60-ական թվականների պատմական դեմքեր են, այլ մեր առօրյա կյանքում դեռևս գործող շարշիներ, որոնց համար սեփական աղջիկը «միրամ շիր է, միքամ փողոցի ապրանք է»՝ ցուցադրված վաճառքի համար:

Մեզ համար երեմնի դրական հերոս Մասիսյանը նույնպես չի տարբերվում մյուսներից, նա ևս իր շահի համար իրեն բանկ վաճառող շարժի է, յուրատեսակ Զամբախով, որ անց է կացել «քաղաքակրթության» կողմից: Մեր այս մոտեցումը, թերևս, «ակադեմիկ չէ» ու թերևս մեղանչում համարվի «արքական» տրադիցիաների դեմ: Այնուամենայնիվ, մենք «Խարաբալան» սոցիալական այսպիսի լուսաբանությամբ պետք է ցուցադրենք: Պիեսից կրնատված են ինտրիքայի զարգացմանը շնորհանդեր կառուները: Բեմադրության ոնք գրանցեսկն է, մեզանցեները կառուցված են շարժուձեռքի արտահայտիչ ընդունումով: Դերակատարումը հիմնված է գլխավորապես դերասանական վարպետության, արտաքին տեխնիկայի վրա: Դերասանը ոչ թե վերապրում է, այլ

ներկայացնում է տիպը: Գրուեսկի միջոցով մենք կմասնենք ցանկալի էթեկտի, հետափորուրյուն կունեանք ցայտուն գույներով ընդգծելու և մերկացնելու սատիրայի գործող անձանց: Հին Թիֆլիսի ժողովրդական երգերից կազմը վաճառությունը նույնպես պետք է օգնի սատիրային և տրագիկական մոմենտների ընդգծմանը, միենույն ժամանակ, առաջին գործողուրյանը, նախապատրաստելով զիսավոր անձանց մուտքը:

«Խարաբալան» ծայրաստիեան պայմանական պիես է, այդ պատճառով գործող անձինք ներկայացման ընթացքում շարունակ գրուցում են հանդիսականի հետ և հանդիսականը դառնում է կատարման անհրաժեշտ մաս: Այդ պատճառով մասսիմալ շափով օգտագործվելու է ավանցենան՝ ներկայացումը մոտեցնելով հանդիսականին: «Խարաբալայի» արարքին ձևավորումը հանձնված է նկարիչ Ստ. Թարյանին: Այդ ձեավորման մեջ ուսիմուար կերպով գործ են ածվում փոքրադիր շիրմաները և բեմահանված բոլոր պարագաները: Թիֆլիսը տրված է թերե դեկորատիվ շարիխներով, բայց Թիֆլիսն արտահայտված է վառ կերպով՝ զգեստներով» («Խորհրդային Հայաստան», 1 դեկտեմբերի):

Երիտասարդ ուժիսուրի դերյուտն ունեցավ բացառիկ հաջողուրյուն, արժանացած հայկական, ոռուական, վրացական, աղրբեջանական մամուլի բարձր գեահատուրյանը:

Մամուլում «Խարաբալայի» մասին անդրանիկ գրախոսականի հեղինակն է Վահան Թոքովինը, որի հոդվածից բերում ենք մի հատված. «...Հին պիեսները վերարժեավորվում են այն ժամանակ, երբ դրվում են մեր հասարակուրյան առջև նոր մոտեցումով: «Խարաբալան» բեմադրող Ս. Գուլակյանին Պետական բարոնի վարչությունը պատեհություն էր ընձեռնել մի պիես բեմադրելու իրեւ փորձ: Բեմադրող Գուլակյանն ընտրել էր Սունդուկյանի «Խարաբալան»: Մեր թերերում հրապարակվել է Գուլակյանի տեսակետներն այդ պիեսի բեմադրության գործում: Նա, միենալու հայտարարեց, որ համարձակվել էր Սունդուկյանի մի տիպի, աստիճանավոր Գեորգ Մասիսյանցի մեջ փոփոխություն մացնել: Սունդուկյանի Մասիսյանցը իդեալիստ է, Պետրովություն կրություն ստացած մի ինտելիգենտ: Գուլակյանի Մասիսյանցը փողով աղջիկ որոնող մի թերեսոլիկ է, մայրակաղաքից եկած: «Խարաբալայում» Սունդուկյանը ջանացել է իր իդեալիստը հակադրել պիեսում գործող մյուս տիպերին: Գուլակյանը, փոխելով Մասիսյանցի տիպը՝ նպատակ է ունեցել պիեսի բոլոր գործող անձերը դնել սոցիալական միենույն մակարդակի վրա: Գուլակյանը ջանացել է պիեսը դարձնել դասակարգային մի ամբողջուրյուն, որովհետեւ, որքան որ մեր այժմյան հասարակուրյան համար իդեալիստը և

դրական տիպ չէ, բայց եթե մնար պիեսում սունդուկյանական սահմագործությամբ, ապա մեր հասարակությունն իրավամբ պիտի ասեր. «Մա” է խանությանների, վաճառականների, շուկայի խարդախների հակադրությունը»: Գուլակյանն այս հարցից ազատվելու համար փոխել է Մասիսյանց իդեալիստին՝ Մասիսյանց փողով աղջիկ ոռոնողի:

Հարց է ծագում՝ ո՞րն է, ուրեմն, պիեսի գործող անձերի սոցիալական հակադրությունը: Դա ինքը, այժմյան հասարակությունն է, անմ ըև ինչու Գուլակյանի բեմից գործող անձերը միշտ խոսում են հասարակության հետ: Մարգրիտը, Զամբախովի աղջիկը, որի նշանվելու շուրջն է դառնում ամբողջ պիեսը, չի կարող հակադրություն համարվել, որովհետեւ, եթե հասարակությունը մի ժիշ նրան խղնում է, դա դեռևս չի նշանակում, որ այդ աղջիկը ևս մի օղակը չի կազմում բաղմենի ընտանիքի: Մեր «համակրությունը» ֆիզիկական է և ոչ ըև իդեալիստ, մենք խղնում ենք նրան իրեւ տգեղ արտաքին ունեցողի, որ փետուրի նման խաղալիք է բաղմենի բարեերում: Զամբախովի ծառան, Սարգիսը, բեկ հայտարարում է, որ, «Եթե աղին տիրի, դու ես շարշարվելու, եթե աղին ուրախանա՝ կի դու ես շարշարվելու», նա ել պասիվ է, դեր չի կատարում բաղմենի ընտանիքամ:

Գուլակյանի բեմադրությունը կատարյալին մոտեցալ բեմակրություն է: Ոչ մի շարժում անպատճառարանաված չէ, միզանսցենները սերտորեն, օգանական կերպով կապված են մտքի, բռվանդակության հետ: Բեմադրողի առաջնակարգ գեղարվեստական մտահոգությունն է եղել խուսափել ավելորդություններից, բեմը դարձնել բերե (բարի լավագույն իմաստով), ազատվել բարդություններից, որոնք ոչ մի դեպքում չեն պայմանավորում բարդ հոգերանություն, բեմը երբեք չի հանդիսացել երիտասարդ բեմադրողի համար ինքնանական պատճեն, բեմի ամեն մի առարկա ամենահարմարագույն ձեռվ ծառայում է խաղարկության:

Մրանով դեռ չեն վերջանում այս բեմադրության առավելությունները: Բեմադրությունը պարունակում է իր մեջ բարձր որակի սրամտություններ, զիտակից խորն ընդգծումներ: Եթե Զամբախովն իր դասակարգի ամբողջ փիլիսոփայությունն է հայտարարում ստի, կեղծիքի, խարելու փիլիսոփայությունը՝ բեմադրող Գուլակյանը նրան բարձրացնում է դանդաղ, ծանրածանր հայերով, փոքրիկ մի բարձրության վրա: Միծաղը կատարյալ դարձնելու համար՝ նա պարզ մի նկարով հանդիս է բերում Ամուրը, սիրո խորհրդանշան Կուրիդը, Մասիսյանցի անձանոր սիրունու, տգեղ Մարգրիտին իրեւ հակադրություն, և լույսի շատ հաջող խաղով, սիրութի միջոցով, Կուրիդի ետև մի վաճառական և մի մոցիքով սիրո սակարկությունն են անում: Զամբախովն եկեղեցու իրիկ-

նային դողանշների հնչյունների տակ աղոքը է անում և միաժամանակ հաշվեշոտկն է զցում: Եթի Զամբախովն աղջկա վաճառքը գուստ բերելու համար իր բարեկամ վաճառական Խայուն պահում է իշանոցում և նրա գեղեցիկ կինը պատշգամբից ցույց է տալիս փեսացոփն իրեւ իր աղջիկը՝ Խային իշանոցից նայում է դուրս էշի աշխերի միջից: Եթի Զամբախովի աղեղ աղջիկը լացակումած մի ժամկ խոսք է արտասանում իր բախտի մասին՝ նրա հոգեկան տառապանին արտահայտելու համար՝ ներսից լավում է տխուր մելամաղձում մի երածշտորթում և դեռևս մի շաբէ սրամատորյուններ և ընդգծումներ, որոնք կապվում են իրար հետ և կազմում են գեղարվեստական մի ամբողջուրյուն:

Ս. Գուլակյանի բեմադրուրյունը խորն է, գիտակից, մաքուր, սրամիտ ու նաշակավոր: Նա դառնալու է մեր բեմական արվեստի կարևորագույն ուժերից մեկը: Նա երիտասարդ է, խանդավառ իր գործով և մանավանդ աշխատունակ («Խորհրդային Հայաստան», 7 դեկտեմբերի):

Թիֆլիսի մամուլը գրեց. «Ներկայացումն ամբողջուրյամբ հագեցած է կենցաղով, պատկերավոր լեզվով, խոր բեմականուրյամբ, հետաքրի գործողուրյամբ, կենդանի կերպարներով: Բայց եթե անցյալում այդ պիեսը եղել է կենցաղային կատակերգուրյուն, այժմ նա մեզ համար կարող է կրել միայն անցյալի բարքերը դաժանուեն ու անխնա ծալրող սատիրայի բնույր... Գուլակյանը հրաժարվել է «սուրբ պահպայքներից», Սունդուկյանի պիեսը բռնի է գրեք անձեռնմխելի, բայց այդ տեխնի մեկնաբանուրյամբ և առհասարակ ողջ բեմադրուրյամբ խոշոր և համարձակ առաջընթաց ժայլ է կատարել» («Յարա Յունաստան», 9 դեկտեմբերի):

Գուրգեն Մահարին գրել է. ««Խարաբալան» երիտասարդ ուժիսոր Գուլակյանի բեմադրուրյամբ մեզ ներշնչում է հավատ դեսի նրա հետազա աշխատանքները: Գուլակյանի ծգուումը դեսի Սունդուկյանը գրավական է այն բանի, որ նա չի ուզում գնալ դիմադրուրյան բույլ գծով: «Խարաբալան» իր բերուրյուններով հանդերձ դրական ժայլ է այդ սուրբուրյամբ» («Խորհրդային Հայաստան», 1928, 3 ապրիլի):

Քատերախոս Դանիել Դղնունին, ամփոփելով Երևանի պետքատրոնի 1927—28 խաղաշշանի արդյունքները, «Խարաբալայի» մասին գրել է. «Ծնորհիվ ուժիսուրայի կողմից կատարված որոշ խստացումների, Սունդուկյանի այս կումեդիան ներկայացվեց մեր բարերանում սոցիալական գումեղ ընդգծումներով՝ պատկերելով առևտրական կապիտալի փոնի վրա զարգացող կենցաղն ու սովորուրյունները» («Քրական դիրքեռում», Երևան, 1928, № 6):

Քատերազետ Սարգսի Մելիքսերյանը, որն այդ ներկայացման ականատեսներից է և մամուլում բարձր գնահատողներից (տե՛ս «Խորհրդային Հա-

յաստան», 1928, 26 հոկտեմբերի), շատ տարիներ հետո, «Խարաբալայի» երկրորդ թեմագրության առիթով գրած գրախոսականում այսպէս է մտարեցել 1927 թվականի ներկայացման առանձնահատկությունները. «Գրական տեքստը խիստ կրնառելով և մասամբ վերաբասավարելով, ուժիսորը սյուժեն շափազանց սեղմել էր, բողնելով միայն այն մասերը, որոնք հպատակն էին նըրաւ արագ ծավալմանը, գործողության դիմամիկ զարգացմանը և ինտրիգների սրությամբ: Թողմված էին նաև այն մեճախոսություններն ու դիալոգները, որանք բնուրագրվում էին հասարակական կյանքն ու քարեցերը և ընդհանրացումներ արվում: Այսպիսի դեպքում Զամբախովը, օրինակ, քարեւանում էր նախարեմի երկու ծայրում շինված պատվանդան-ամբիոններից մեկի վրա, երեսը ուղղում հասարակությանը, կարծեք երա հետ խոսակցելով իր դատողություններն անում:

...Ներքին ուժեղ քափով և քատերական վառվունությամբ օժտված նըրաւ նախկին թեմագրությունը ոճական միասնություն չուներ: Այնան առանձնապէս արտահայտված գրուեսկը և բուֆոնադի որոշ տարրերը ձուլվել էին զուտ կենցաղային երանգով տրված դերասանական խաղարկություններին, որից ներկայացնում մի քազման կերպարանն էր ընդունել: ...Սհա այսպիսի խիստ պայմանական ոճով էր կառուցված Գուլաջյանի անդրանիկ ստեղծագործությունները: Եղ թեև նա գեղարվեստական նման մերողով հանդիսականին մեր կլասիկից շատ ավելի էր հեռացենում, այսուհանդերձ ցույց էր տալիս երիտասարդ արվեստագետի ուժիսորական լուրջ բանեարը, նրա ստեղծագործական վառ երեակայությունը և հնարագիտությունը» («Սովետական Հայաստան», 1945, 15 մայիսի):

Ռուբեն Միմոնովը Մուկվայից շնորհավորական նամակ է ուղարկել Գուլայանին, գրելով. «Շատ եմ ուշախանում Ձեզ համար և հպարտանում երանով, որ իմ աշակերտը կարողացավ օգտակար և պետքական լինել հայ քառարենին» (ԳԱԹ, Գուլայանի արխիվ, № 783):

Խահակ Ալիխանյանը 1928-ի ապրիլի 4-ին Թիֆլիսից ուղարկած նամակում գրել է. «Արմեն. ի սրտե շնորհավորում եմ քո հաջողությունը, սպասում եմ նոր և նոր հաղթանակներիդ և հաջողություններիդ: Ես ուրախ եմ, որ իրականանում են իմ ասածները—այսինքն «հայոց քատրոնի ամենալավ ուժիսորը լինելու է Արմենը». սա իմ խորին համոզմունքն է և հույս ունեմ, շատ շուտով բոլորը կհամոզվեն այդ բանում...» (ԳԱԹ, Գուլայանի արխիվ, № 584):

Ապրիլի 23-ին Ալիխանյանին ուղարկած պատասխանում Գուլայանը գրել է. «...երբեք ես այսպիսի պայմաններում չեմ աշխատել, երբեք այսպէս

աշխատունակ և եռանդում չեմ զգացիլ ինձ: Յուրաքանչյուր հաջողություն. իմ նանապարհին ինձ ավելի է խրախուսում և զգալ տալիս պաշտոնիս պատասխանատվությունը, իմ ապագա անելիքների համար ուժ տալիս» (ԳԱԹ, ի. Ալիխանյանի արխիվ, բաժին № 30—I):

20 դեկտեմբերի — Ս. Տրետյակով՝ «Մոնշա՛, Զինաստան». Երևանի Առաջին պետրատրոնում: Բեմադրիչ Ն. Ֆրիդ, ռեժիսոր՝ ասիստենտ Ս. Գովակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

«Խորհրդային Հայաստան», 25 դեկտեմբերի

1928

31 Հունվարի — Յու. Օնիլ՝ «Սերբ ծփիների տակ». Երևանի Առաջին պետրատրոնում: Բեմադրիչ Ն. Ֆրիդ, ռեժիսոր՝ ասիստենտ Ս. Գովակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

«Խորհրդային Հայաստան», 2 միստրվարի, 3 միստրվարի

27 Միստրվարի — Նշանակվեց Երևանի Առաջին պետրատրոնի ներքական ռեժիսոր:

1 մարտի — Բ. Լավրենյով՝ «Բեկում». Երևանի Առաջին պետրատրոնում: Բեմադրիչ Ն. Ֆրիդ, ռեժիսոր Ս. Գովակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

«Խորհրդային Հայաստան», 3 մարտի

20 մարտի — Ելույթ ունեցավ Երևանի Առաջին պետրատրոնի դահլիճում, «Խորհրդային Հայաստան» բերքի խմբագրության և Գեղաշխի վարչության կազմակերպած «Բեկում» բեմադրության բննարկմանը: Զեկուցեց Եղիշե Զարենցը:

29 մարտի — Մ. Գորկի՝ «Հատակում» (Երկրորդ արար). Երևանի Առաջին պետրատրոնում, հեղինակի ծննդյան 60-ի գրական գործունեության 35-ամյակին նվիրված Երեկոյում: Բեմադրիչ Ս. Գովակյան:

«Խորհրդային Հայաստան», 25 մարտի

14 ապրիլի — Դ. Ֆուրմանով՝ «Խոռվություն». Երևանի Առաջին պետրատրոնում: Բեմականացում Ս. Պոլիվանովի, բարգմանիշ Ե. Չարենց, բեմադրիչ Հեր Ն. Ֆրիդ և Ս. Գովակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

Վ. Թ. [Երգիբայան], «Խոռվություն», «Խորհրդային Հայաստան», 19 ապրիլի
և Ն. [Ս. Մելիքսերյան], «Խոռվություն», նույն տեղում, 12 դեկտեմբերի

16-18 մայիսի — Երևանում դիտեց Մոսկվայի Հայկական ստոլիչայի ներկայացումները («Պաղտասար աղբար», «Աստամեաբուժն արևելյան» և «Խարաբալա»): Ստուժիայի դեկանվար՝ Ռ. Միտոնով:

1-31 Հուլիսի — Գիլիջանում ավարտեց Գ. Սուճուկյանի «Թեպո» պիեսի թեմադրական նոր կոմպոզիցիան: Պիեսը բաժանել էր Երկու մասի, բաղկացած 21 միջադեպից (նետագյում, տեխնը վերամշակելուց հետո, բողոք 19-ը), որոնցից յուրաքանչյուրն ուներ վերնագիր. «Նախերգանք», «Թեպոյի խրնիք», «Զիմզիմովի տունը», «Մարմարովի խանուրը», «Լոտո և խրնչոյի Զիմզիմովի տանը», «Հաշտարար դատարան», «Մետեխի բանտի դրանը» (Փիճալ) և այլն: Օգտագործված էին հատվածներ «Քանդակ օչախ» կատակերգույունից (լոտոյի տեսարանը): Ավելացրել էր նոր գործող անձնին. Մարմարով (հետո՝ Դարչո), նարեկ, բամադա, վաճառականներ և կինտոններ դատարանում, կանայք՝ էլեմիայի հյուրերը, դատավոր, շինովնիկ, ինստիտուտկա, զորդովոյ, աղյատ՝ դատարանում, մշակներ, լոտո խաղացող կանայք:

1 օգոստոսի — Երևանի Սուաշին պետքառունում սկսվեցին նոր խաղաշրջանի նախապատրաստական աշխատանքները: Գովակյանը սկսեց աշխատել «Մեծապատիվ մուրացկաններ» պիեսի թեմադրույթան վրա:

1 սեպտեմբերի — Ա. Գուլակյանի միջնորդությամբ Երևանի Սուաշին պետքառոնի դիրեկցիան Դիլիջանից, իրեւ բատրոնի երաժշտական մասի վարիչ, հրավիրեց կոմպոզիտոր Սերգեյ Բալասանյանին:

1 նոյեմբերի — Գ. Ֆուրմանով և Ս. Պոլիվանով՝ «Խոռվորյուն». Լենինականի նորակզմ պետքառոնի բացմանը: Բեմադրի Ա. Գովակյան, նկարիչ Մ. Արուտչյան, ուժիուրի ասիստենտ Վարդան Անեմյան:

Մագրել էր նոյն բատրոնում թեմադրել նաև «Մեծապատիվ մուրացկանները», «Խարաբալան» և «Ոչխարի աղբյուրը», բայց չի թեմադրել:

«Թանգոր», Լենինական, 4 նոյեմբերի

2 նոյեմբերի — Թանաստեղծ Հակոբ Հակոբյանը Երևանի Սուաշին պետքառոնում դիտեց «Խարաբալան», որի մասին գրեց. «...անպայման բացակայում է շարժը, շարլոնը, խալուռան: Նրա արախսորմացիայի ենթարկած տիպերը ցայտուն են, ընդգծած, դերասանների խաղը կենսալի, աշխուժ, զբար, լիարոք ծիծաղ առաջցենք: ...Պիտի շնորհակալ լինել բնկեր Գովակյանին իր ուժումատորական աշխատանքի համար» («Խոռհրդային Հայաստան», 4 նոյեմբերի):

17 նոյեմբերի — Հ. Պարոնյան՝ «Մեծապատիվ մուրացկաններ». Երևանի

Առաջին պետքատրունում: Բնմավորում Վահան Թորովենցի և Մկրտիչ Զահանի, հարակից հեղինակ և բեմադրիչ Ս. Գոլակյան, նկարիչ Ս. Թարյան, կոմպոզիտոր Ս. Շարիջյան:

Թատերագիտ Ս. Մելիքսերյանը ներկայացումը պատրաստելու շրջանում գրեց. «Անհրաժեշտ է շեշտել, որ պիեսի հեղինակները և ռեժիսորը՝ ամբողջությամբ պահպանելով Հ. Պարոնյանի տեխնոլոգիա, դիտավորյալ կերպով ավելացրել են մի շարք տեսարաններ և տիպեր, որոնք հնարավորություն են տալիս բեմականութեն ավելի խորացնելու և ցայտուն դարձնելու հերոսներին և միջավայրը: Անժիսոր Արմեն Գոլակյանը յուր բեմադրությամբ հպատակ է դրել սպուտնիկ բեմականութեն կառուցել այնպես, որ դառնա սոցիալական ուժեղ բարիք» («Խորհրդային Հայաստան», 7 նոյեմբերի):

Երբ ներկայացումն արդեն հանձնվել էր, նոյնի հեղինակը գրել է. «Այդ հետաքրքրական ներկայացումը դիտելու խսկուց աշխի է զարնում, որ բեմադրողը երկի բնույթից ելնելով՝ գտել է բեմականութեն ձևավորելու այնպիսի առանձնահատուկ արտահայտիչ միջոցներ, որոնք հնարավորություն են ընձեռում հանդիսականին երկը մեկնարանելու ժամանակակից նիշտ մոտեցումով: Մյուս կողմից այդ միջոցներն ուշագրավ են դերասանական վարպետությանը նախապատվորյուն տալու անսակետից: Դերասանների խաղի միջոցով խնդիրների լուծումը դյանությամբ սրան հասցնելու համար այդ միջոցները լավագույն պատվաճանդաններից մեջն են հանդիսանում:

Այս բեմադրությամբ դերասանի ստեղծագործության ինքնուրույնության համար լայն շրջանակներ է տրված: Անժիսորին հաջողվել է «մուրացկանների» սոցիալական դիմագիծը դրսելուն: Նրանց դասակարգականությունը որոշ չելուց հետո, նա չի բավականացել դրանով, այլ աշխատել է գրեթե յուրաքանչյուր տիպի մեջ խտացնել իր խավի բնորոշ կողմերը: Այս հանգամանքը մի տիպը մյուսից որոշ շափով առանձնացրել է ու կենանություն մտցրել: Չնայած դրան, որ բոլորն էլ մի մտանություն ունեն և ձգում են մի նպատակի, սակայն Փաստաբանն իր կեցվածքով, շարժումնենով, խուելու եղանակով տարբերվում է Վարժապետից, Քահանան՝ Բանաստեղծից:

Բեմադրողն աշխատել է յուրաքանչյուր դրույթուն իմաստավորել թե՛ նրա պատակահարմար կերպով կառուցված միզանացիններով, թե՛ իրերի խաղով, թե՛ երածշառությամբ, թե՛ համապատասխան շարժումներով, թե՛ երգով, թե՛ պարով և այլն» («Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի):

Նոյեմբերի 17-ին, ներկայացումից հետո, Ս. Մասշյանին լենինական ուղարկած համակում Գոլակյանը գրել է. «Ներկայացումն անմիջապես իր վրա գամեց հանդիսարանի ուշադրությունը, յուրաքանչյուր ևսպիկից նետո դահ-

լինում պայրում էր ծիծաղը, և դա շարունակվեց մինչև ներկայացման ավարտը: Հանդիսարահում տիրում էր մի տեսակ տռնական տռամադրություն: Առաջին, երկրորդ և շորրորդ արարեներից ենտո ինձ բեմ կանչեցին: Ներկայացումը բոլորին հիացրել է, նրանք, առանց բացառության, գոհ էին»:

30 դեկտեմբերի — Դ. Շեգովի՝ «Տրանսատլանտիկ»: Երևանի Առաջին պետրատունում: Թեմադրիչ Ն. Ֆրիդ, որդիսոր Ա. Գոլակյան, նկարիչ Մ. Արուսյան:

31 դեկտեմբերի — Երևանը հրաժեշտ ավեց դեկտեմբերի 28-ին վախճանված հշանավոր նկարիչ Գեորգի Յակովովի անյունին (դագաղը զնացեով ուղարկվեց Մոսկվա): 1929-ի հունվարի 1-ին, Ա. Մասշանին գրած նամակում, Ա. Գոլակյանը պատմել է հետեւյալը: «Մինչև հոգուս խորք զայրացած եմ երեկով համար: Զկար հարգանք Յակովովի հիշատակի հանդեպ: Ժամը երկուամբ դագաղը դրված էր Սնատումիկի շենքում, մեե-մեենակ, առանց հարազատների և ծանրոների: Գեացի նրան հրաժեշտ տալու: Եթր ներս եկա ու տեսա այդ մեծ վարպետին, կուտուրայի խոշոր գործին այդպես մոռացված, ատելուրյամբ լցվեցի բոյոր նրանց հանդեպ, որոնք սիրում են խոսել կուտուրայի անունից և փաստուն շեն հարցում այդ կուտուրայի ամենազարգացած ներկայացուցչին... Երևանում պարզ չեն պատկերացնում, թե ո՞ւ թաղեցին, ումի՞ց գրկեցին... Կառավարությունից ներկա էր միայն Ա. Մոավյանը: Հին և կեղտոտ դեկտրատիվ ավանորդիրով ուզում էին դագաղը տանել Երկարուղային կայարան: Արվեստի աշխատողներս որոշեցինք դագաղը ինքներս համալսարանից հասցեն կայարան... Սյրպիս էլ արեցինք... Գազաղի ետևից գեռում էին միայն Գեացինի ներկայացուցիչները, մյուս հասարակական կան կազմակերպություններից ոչ ոք չկար, չկար ոչ մի պրոլետարող, հավանաբար նրան իրենց արժանապատվուրյունից ցածր էին համարում քաղման մասնակցելը... Դա նշան է այն բանի, թե կուտուրայի ինչպիսի ցածր աստիճանի՝ վրա են կանգնած նրանցից շատերը, որոնք կոշշած են դեկավարելու մեր երկրի կուտուրական նակատը...»:

1929

10 Հունվարի — Ն. Սաց և Վ. Մելքիսուկա՝ «Ֆրից Բաուեր». Երևանի Առաջին պետրատունում: Թարգմանիչ Ստեփան Զորյան, բեմադրիչ Ա. Գոլակյան, նրակարիչ Մ. Արուսյան: Այդ առիվ Ա. Գոլակյանը հունվարի 8-ին «Խորհրդակին Հայաստան» լրագրում ապագրեց «Ֆրից Բաուեր» հոդվածը:

«Խորհրդակին Հայաստան», 13 Հունվարի

12 փետրվարի — Վ. Կիրշն՝ «Ռելիսերը գրնզում են». Երևանի Առաջին պետքատրոնում: Թարգմանիչ Մ. Գևորգյան, բեմադրիչ Ս. Գովակյան, նկարիչ Մ. Արուչյան:

Այդ առթիվ գրած և անտիպ մնացած հոդվածում Ս. Գովակյանը նշել է. «Վ. Կիրշնը «Ռելիսերը գրնզում են» պիեսը շոշափում է այնպիսի խոչոր ժամանակակից սոցիալական խնդիրներ, լցված է այնպիսի ոգևորող պարուսվ և այնքան համոզեցուից է իր ներքին գարզացումավ, որ մեր քարոզի վարչությունը ոչ մի դժվարության առաջ կանգ չառավ և իր ռեպերատուարի մեջ մըսցը եց այս պիեսը, որպեսզի լայն մասսաների սեփականություն դառնա մեր մեծ օրերի առօրյայի գեղարվեստութեն հաջողված վերարտադրությունը:

...Պիեսում նկարագրվում են այն դժվարություններն ու պայմարը, որնց միջոցով անցնում է մեր տնտեսության ամրապնդման գործը: Գլխավորը սոցիալական մոմենտներն են, անհատական և հասարակական շահերի բախումը»: Նույն խնդիրներն են շոշափվել ուժիսուրի այն գրուցում, որ տպագրվեց «Խորհրդային Հայաստան» թերում գետրվարի 8-ին:

Ներկայացումը բարձր գնահատեցին բաներախոս, հետազայում հոգեբան Միքայել Մագմանյանը («Խորհրդային Հայաստան», 19 փետրվարի) և բանաստեղծ Նաիրի Զարյանը («Աշխատանք», Երևան, № 4, էջ 15—16): Վերջինս հատկապես նշել է «այն մեծ ոգեռությունը, որ սիրում էր դահլիճում այս պիեսի բեմադրության ժամանակ»:

Ամենաընդարձակ հոդվածի նեղինակը Ս. Մելիքսերյանն է, որի բաներախոսականից բերում ենք մի հատված. «Ռելիսերը գրնզում են» պիեսի բեմադրությամբ երիտասարդ ուժիսուր Արմեն Գուրակյանը կրկին, եթե կարեի է այսպիս ասել, փայլում հնանություն տվեց: Հերթական իր այս բեմադրությամբ ապացուցեց, որ նա ոչ միայն ըմբռում է մեր այսօրվա խնդիրները, այլև խորապես զգում է տնտեսական ասպարեզում կատարված հեղափոխության շոնչը, ոքրմը, անսնում հասարակական շահերից առաջացած կոնֆլիկտների սահմանները: Բեմադրողի միահետամայն խափուսելի մոտեցումը հնարավորություն ընձեռեց բեմում սյուժեն գեղարվեստութեն կառուցելու: Գուրակյանը բեմադրության ընդհանուր ֆոն է դարձել շինարարությունը՝ դեպի Մրանով հպատակ է ունեցել լայնուեն օգտագործել արտադրական տարրերը էպիգողների համար: Էպիգողները նա կառուցել է այնպիս, որ նախնից յուրաքանչյուրը բերուց է դարձել զործողությունների ընդհանուր կապակցության մեջ և իմաստավորվել: Սակայն անհնիկապես բարդ կառուցվածքից խնդիրների լուծումը հանդիսականին հասցնելու համար բեմադրողը դիմել է արտահայտչական պարզ միջոցների: Մելինաների ձայների, մուրերի պիբմիկ

հարվածների, լույսերի, շշակի նպատակամարմար օգտագործման միջոցներով թեմական այնպիսի «Փինալներ» է առեղծել, որ պիեսի ֆինալում հանդիսականի տրամադրությունը հասցեում է բարձր, առաջգ աստիճանի: Գործողություններին ուժեղ դիմամիկական շարժում է հաղորդվում: Գերասանների և իրերի խաղը սիածնչելի կերպով միավորվել են: Գոլակյանը խոշոր տեղ է հատկացնում խոսքին: Նրան հաշողվել է այդ շարժման մեջ կրստից փազճերն ապահովել: Այդ իսկ պատճառով միզանցենների վրա առանձին ուշադրություն է զարձրել: Տեղ-տեղ նա լույսերի միջոցով ոչ միայն հանդիսականի աշխը կենարնեցնում է տեսարաններին, այլև սահմանը, որ դերակատարի խոսերը պարզ կերպով լսվեն: Կան պատկերներ, որտեղ բեմական սամկանները համարձակութիւն լայնացնելով՝ մեռած շշապատի չի վերածել: Թե՛ առանձին ինդիվիդունների և թե՛ մասսայի նորերանական նկարագիրները ուուր շարիխներով ցուցահանված են:

Սյս պիեսի մեջ կան կենցաղային այնպիսի տարրեր, որոնք հեշտությամբ կարող են մի որևէ բեմադրողի գոտին կենցաղամոլության գլուխը նետել, բայց Գոլակյանը կարողացել է դրանից խուսափել, որից բեմադրությունը շատ է շատել: ...Իզուր չէր, որ քատերացարի բերեն-բերան լցված հասարակությունը բոլոն ու տեսական ծափահարություններով փակեց վերշին վարագույրը:

...Դերասանական ուժերը գրեթե բոլորն ել զբաղված են բեմադրության մեջ: Պեստ է ասել, որ բոլորն ել շատ լավ են խաղում: Նրանց խաղարկության մեջ մտերմական համագործակցության աշխատանք է երևում: Սյս պարագան, անշուշտ, ուրախալի է և խրախուսելի: Ոչ ով չի ուզում իր դերակատարությամբ առանձնանալ և աշխի բնկենէլ, այլ բնեհակառակը՝ խաղում են միմյանց աշակելով, կամ ինչպես ասում են՝ խաղերի գույները փոխադարձարար լրացնելով» («Խորհրդային Հայաստան», 21 փետրվարի):

2 մարտի — Ս. Գրիգորյանը՝ «Եսելից պատուա» (Երկրորդ արար). Երևանի Առաջին պետքարտուսում, հեղինակի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկոյին: Թարգմանիչ Գ. Արով, բեմադրիչներ Ն. Ֆրիդ և Ս. Գոլակյան, հրկարիչ Մ. Արտուրյան:

«Խորհրդային Հայաստան», 5 մարտի

9 մայիսի — Գ. Առնելյանի «Թեպո», Երևանի Առաջին պետքարտուսում: Բեմադրիչ Ս. Գոլակյան, նկարիչ Մա. Թարյան, կոմպոզիտոր Ս. Թալասան-յան:

Այդ առքիվ հրապարակած նոդվածում Ա. Գոլակյանը գրել է. «Թետական

բատրոնը տեղ է տալիս իր ռեպերտուարի մեջ ոչ միայն մեր առօրյան և ապագան շոշափող ժամանակակից պիեսների, այլև կլասիկներին (թե մեր և քեզուարազզի): Կլասիկները տեղ ունեն ոչ միայն մեր, այլև Միուրյան բոլոր խոշոր բատրոններում: Նոր բատրոնի նոր հանդիսականը պետք է ծանրանա և բաս արժանակույն գնահատի մեր հին արժեքները, բայց ոչ ռոպես հնագիտուրյուն, այլ ռոպես հին կյանքի մի տիպիկ ընդհանրացում ժամանակի մանրադիտակի տակ: Մեզ բողած հին ժառանգությունը մենք պետք է վերանայենք, վերարժեքավորենք՝ շահնձահարելով մեր ստեղծագործական բափն ինչ-որ «սուրբ արադիցիաներով և ակադեմիզմով», այլ ունենալով ժամանակակից մուտեցում և գեղարվեստական կլասիկ երկերի մեջ հենվելով երեսուրի սոցիալական արժանաներին, ժամանակիս ըմբռնմամբ:

«Պեպոյի» բովանդակությունը հայտնի է բոլորին: Սա միակ պիեսն է մեր կլասիկներից, որ լայն մասսայականություն է վայելում թե ժաղանի թեմում և թե գյուղում՝ շնորհիվ իր սոցիալական և գեղարվեստական արժանիքների: ...Պիեսի տիպերը թեև պատկանում են տարբեր դասակարգի, սակայն Սունդուկյանը չի ընդհանրացնում նրանց, նա տվել է մի դեպք «լորի պաժարենիների կյանքից», թե ինչպես կվարվեր մեկը դրանցից, եթե «մեր հարստահարուներից դրան փող պարտ լինի և ուրանա» (Սունդուկյանի խոսքերը): Այս ճյուրի շուրջը հյուսել է մի հետաքրքրական, լի սոցիալական նշանակությամբ պիես: Սունդուկյանը «Պեպոյի» նախաբանում ասում է, որ նպատակ է դրել կինստոնների դասից տալ «բարձր տիպ», այնպիսի մեկին, որն իր բարոյականությամբ, մեծահոգությամբ և վեհանձնությամբ օրինակ լինի շատ ու շատ բարձր դասին պատկանող մարդկանց: Բայց նա տվել է ավելին: Իր գրվածքի մեջ նա օրյեկտիվորեն նկարագրել է դեմքեր և դեպքեր շատ ցայտուն գույներով և տվել ժամանակի «ցածր ու բարձր դասի» կենցաղի տիպիկ պատկերը: Մենք մեր թեմադրության մեջ մի ժիշ փոխել ենք հեղինակի նպատակը, ընդհանրացնում ենք պիեսում գործող տիպերը և շեշտը դնում նրանց սոցիալական էության վրա: Այնտեղ, որտեղ պիեսի տեսար մեզ այդ քույլ չեր տալիս, ավելացրել ենք նոր տեսար հեղինակի մյուս գրվածքներից, այդ նպատակով փոփոխել ենք ու կտրատել «Պեպոյի» մի բանի մոնուղգները: Ենթելով հիմնական նպատակից, մենք կազմել ենք մեր առեւտրական շրջանի և մանր բուրժուական «լումպեն պրոլետարիատի», «բարձր և ցածր դասի» փոխհարաբերության սոցիալական դրամա: Տրված է երկու դասակարգ, երկու կյանք: Պիեսը բաժանված է երկու մասի: Առաջին մասում մենք տալիս ենք այդ երկու դասի կյանքը, առօրյան՝ հակադրելով մեկը մյուսին էպիգոններով... Այնտեղ, որ տեղ Սունդուկյանը կարենու չի համարել վառ ցուցադրել, տվել է միայն թերեւ

ակնարկներ, մենք այդ տեղերը դարձրել ենք ցայտուն: Մտցված են երեք նոր տեսարան, մի ժամկ տեսլիներ և բազմարիվ նոր տիպեր (դատարանի մուտքը, Զիմգիմովի հեֆքը, փեսայի խանուրը և այլն): 1917 թիվը շնչեց ընդդիշտ երկպլաստի արձիվը, բայց դեռ բոլորովին չլ շնչել զիմգիմովներին: Մենք ցուցադրում ենք շնչվելի Զիմգիմովին և շնչում:

Արտաքին ձեավորումը բխում է նյութից: Բեմը բաժանված է երկու մասի: Մի մասում անշարժ մինչև վերջը Պեպոյի բնակարանը, մյուսում՝ Զիմգիմովի տունը, դատարանը, խանուրը և այլն: Մեր փոքրիկ և սեխմիկական հնարավորություններից զուրկ բեմի վրա մենք աշխատել ենք փոքրիկ հարքությունների վրա դիճամիկ կերպով տալ այս ներկայացումը: Կինոկադրերի ձեռվ (ոչ ամբողջովին) գործողությունները փոխադրում ենք մի հարքությունից մյուս (մոնտաժի ձեռվ): Սա մի էխայերիմենս է իրերը և արտաքին ձեավորման հնարավորությունները ծառայեցնել իմաստի (նյութի) պարզաբնահանք: Արտաքին ձեավորումը պայմանական-ուսալիստական կինսարուկափիկովն է գունավորման թերումով (ցլետոպիս): Ինչպես բեմադրության, նույնպես և արտաքին ձեավորման մեջ մենք չենք աշխատել անպայմանութեն տալ ամենայն մանրամասնուրյամբ և ամբողջությամբ էքնոգրաֆիկ և կենցաղային նըշմարտություն, այլ աշխատել ենք տալ խարակտերիկ մանրամասնուրյամբ դետալներ: Դեկորատիվ մասերն իմաստավորված են:

Երաժշտությունը կազմված է հին Թիֆլիսի ժողովրդական եղանակներից: Բեմադրությամբ մենք վերակենդանացրել ենք տիպերին, վերակենդանացնում ենք նրանց հետ ապրած և մեռած երաժշտությունը: Երաժշտությունը կատարում է իլյուստրացիոն դեր:

Բայց ամենազգլաւորը, ինարկե, դերակատարությունն է, դերասանը: Նա է ներկայացման շարժիչ ուժն ու դրսեռողը և դրա համար էլ մեր զիավորությունները դարձված է եղել դերակատարության վրա: Պիեսում շատ կան էմոցիոնալ մոմենտներ, մեր նպաստին է եղել նիշտ դրսեռել այդ մոմենտները, որովհետև այդ մոմենտների վրա է կառուցված պիեսը: Խաղարկությունը ուսալիստական է: Թե միզանսցենների կառուցվածքը, արտաքին դիճամիկան և թե դերակատարների շարժուածելի մեջ մենք ծայր ասաինան ծլատ ենք ենել: Ներկայացումը հագեցված է ներքին դիճամիկայով: Բարբառն անփոփոխ է: Տեսայի վերամշակումը և կուպողիցիան կատարել եմ ես: Ներկայացումը կունենա մեկ ընդմիջում» («Խորհրդային Հայաստան», 7 մայիսի):

Դ. Դգնունու քատերախոսականից. «Ինչնին արդեն արժեքավոր «Պեպոն» էլ ավելի արժեքավորվեց նրա գեղարվեստական ձևավորումով այս սեզոնում Պետական քատրոնում: Ամենից առաջ պետք է հիշատակենք տեսափ այն հաջող կոմպոզիցիան, որ կատարել է ոճիքուր Գոլզակյանը: Երեք գործողությամբ «Պեպոն» նա վեր է ածել երկու գործողության և 19 պատկերի՝ տառնց մի խոսք անզամ ավելացնելու իրենից, զուտ Սունդուկյանի բառերով տալով և դատարանը, և խնջույքն ու «լոտոն», և կիբեմիայի սիրարանուրյունները իր «լակեյի» հետ, և Պեպոյի բանտ գնալը: Հանախ դիմելով կիննեմատոգրաֆիի պրիումների, բեմադրողն ամենայն հաշողությամբ օգտվում է կոնտրաստների ձևից: Գերակշռող լեյտմոտիվը նրա մոտ սոցիալական շեշտն է, որն այնպէս ցայտուն ընդգծված է քե ընդհանուր կոնստրուկցիայի, քե գույների, քե կենցաղի և քե կատարման մեջ: Զիմգիմովի «ոսկե պատերին» և կիբեմիայի «անամոք» սեապարծությանը հակադրված են ձկնորս Պեպանի աղբատիկ սենյակն ու «դարդիմանդ» տեղեցիները: Ռեժիսորի մացրած նոր պերսոնաժները զայիս են խաղացնելու սոցիալական ֆոնը: Ռեժիսորին և նկարիչ Ս. Թարյանին հաշող վել է տալ հին Թիֆլիս իր հիստ ու կացող և արտաքին տեսով (Մետեխ, միրովյա սուդ, ձկնորսի տունը և այլն):

Բեմադրության բացերից ենք համարում վուգար տեսարանները, որոյ ձգձգումները (դատարանից դուրս զայիս Զիմգիմովի վերևազգեստի ձեռքին ձեռք տալը, Մարմարովի խանուրը), որ հեշտությամբ և գործին ավելի նրա պատերով կարելի էր հանել: Ընդհանրապես նկատվում է նյուրի և տեսարանների որոշ կուտակում, որ ծանրացնում է դիտումը, իսկ տեսարանների հանախակի փոփոխությունները որոշ շափով վնասում են բեմադրության ամբողջությանը և իշեցնում են տեմպը: Գալիք սեզոնում եքս պիեսը մի քիչ «քեննարափի» և բերեացվի հիշյալ բացերից, մեզ քվում է, որ բեմադրությունը կդառնա անբերի:

Սակայն, շնայած հիշյալ բերություններին, «Պեպոյի» բեմադրությունը վկայում է, որ բաֆված է խոշոր և հսկում մարդու աշխատանք ոճիքուր Ս. Ե. մեն Գոլզակյանի կողմից, որով վերջինս իր արժանի տեղին է բնում արդիականության պահանջն ընդունած մեր քատերական մասնագետների շարքում և լավագույն ձեռվ ապացուցում է, որ խորհրդային քատրոնը գտնել է արդին իր խորհրդային ոճիքուրին: Բեմադրովի մտահիմացումը վերին աստիճանի շոնորհալի կերպով եկամ լրացնելու դերասանական խումբը» («Խորհրդային Հայատան», 15 մայիսի):

Երբ 1930-ին Երևանի Առաջին պետրարկանը պատրաստվում էր գաստրոլյային շրջագայության Անդրկոմիկանում և Թուսաստանում, Ս. Մելիքսերյա-

նը, ամփոփելով Ա. Գոլակյանի ուժիուրական գործունեությունը, գրեց. «Սուսնդուլյանի «Խարաբաղս» և «Պեպոն», Վ. Կիրշնի «Մելսերը զբնութեն» իրենց ուժիուրական ինտերվետացիայով, քեմադրական լավորակ կառուցվածքով նույն քատրոնի պատմության մեջ նրա արվեստի լավագույն ուրիշ գործերի հետ միասին առաջնակարգ տեղ բռնեցին: Այդ քեմադրությունները (մասնավորապես առաջին երկուը) քատրոնի ստեղծագործական պատեզիալ հարուստ ուժերի ներկայությունն էր վկայում: Մյուս կողմից՝ կասմիկների երկերը հնանարատարար օգտագործելու և քեմականութեն վերամշակելու (առանց տեխնոր փոխելու) հայտնի քեզը քատրոնը իր մի բանի քեմադրություններով լիովին արդարացեց» («Պրոլետար», Թիֆլիս, 1930, 1 մայիսի):

26 մայիսի — Երևանի Առաջին սկետրատոնի «Պեպո» քեմադրության բննարկումը: «Եռերեքային Հայաստան» լրագրում մայիսի 28-ին տպագրված հաջվետու հորդվածից բերում ենք զեկուցողի և ելույր ունեցողների կարծիքները քեմադրության մասին:

Զեկուցող Վ. Երեմյանն ասել է, որ «Պեպոն» ունի նաև աշողական մեծ նրանակություն, որ «նրա սոցիալ-դաստիարակչական արժեքն անժմատելի է»: Պիեսում կատարված փոփոխություններն ու լրացումները զեկուցողը համարել է արդարացված, բանի որ դրանք նպաստում են պիեսի սոցիալ-դաստիարակչին էլուրյան բացահայտմանը:

Ելույր ունեցողներն ասել են.

Ն. Դարադյան. «Պիեսի նոր քեմադրության մեջ նրա արժանիքների կաղըին կան քազմաքիվ անբնական և չափազանցված մոմենտներ, որոնք երբեմն հասցված են շարժի և դրա հետեւանքով տուժում է հիմնական սոցիալական մուտքերը»:

Մ. Մազմանյան. «Պիեսի համբավնու արժանիքները խոշոր շափով ունեցված են, որ ավյալ քեմադրության մեջ էլ, սխալ է ասել, թե շեշտը դրված է սոցիալական կողմի վրա: Ընդհակառակը, պիեսը քեմադրված է կենցաղային խոտացված գծերով»:

Հ. Մկրտչյան. «Մեր քատրոնը դեռևս տապահնվում է ուելիզմի և կոպիտ հասուրալիզմի միջև և դրա ցայտուն ապացույցներից մեկն է «Պեպոյի» նորաձև քեմադրությունը, որտեղ քեմադրական խոշոր հվանաւմների կողմին կան այդ կոպատության արտահայտիչ բազմաթիվ դետալներ»:

Վ. Թորովենց. «Քեմադրությունում ցայտուն կերպով դրսերդած է պիեսի սոցիալական աստարք: Ներկայացումն այժմ ունի շատ խոշոր արժանիքներ և

աննշան թերություններ, որոնք դյուրությամբ ուղղելի են: Դեռասանական կուլտուրի խաղն անքերի է»:

Վ. Վարդանյան. «Կենցաղային արտահայտությունների որոշ շափազանցված կոպտություններ վերացնելուց հետո նոր բեմադրությունը մեր բեմի խոշորագույն նվաճումներից մեկը կլինի»:

Գ. Գեմիրենյան. «Նոր բեմադրությունից մեծապես շահել է պիեսի սոցիալական կողմքը, բայց տուժել է դրամատուրգիականը: Եզր դա նրանից է, որ «Պեպոն» որպես օրգանական մի ամբողջություն, որպես վարպետութեն գրած գործ ունկնաւորուկցիայի չի ենթարկվում»:

Գ. Գրիգորյան. «Կոնտարասանների խտացման միջոցով բեմադրված նոր «Պեպոն» ավելի է հասնում և ազդում մեր մասսաների վրա, բան երբեք»:

Գ. Արու. «Ինարկե, «Պեպոն» պետք էր վերակառուցել, ինարկե, այդ աշխատանքում կան որոշ թերություններ, բայց դրանք ուղղելի են և երգարդական: Հիմնական տոնը նիշտ է վերցված և տալիս է այն, ինչ որ էական ու կարեռ է «Պեպոնի» մեջ»:

Վ. Երևանը, Ելնելով բնարկման ընթացքից, եզրակացրել է. «Պեպոնի» նոր բեմադրությունը և երա նոր մեկնաբանությունը մեր քատրոնի խոշորագույն նվաճումներից մեկն է»:

29 Հովհանիսի— Երևանի Կոմունարների այցու ամառային քատրոնում դիտել է Մոսկվայի Հեղափոխության քատրոնի «Խնձա» ներկայացումը:

«Խորհրդացին Հայստան», 3 Հուլիսի

11 Հովհանիսի-1 օգոստոսի— Երևանի Առաջին պետքարոնի համար պիեսներ ընտրելու և ոեմիսուններ հրավիրելու նախատակով ստեղծագործական գործողման մեջ էր Մոսկվայում և Լենինգրադում: Մոսկվայում պայմանավորվել է, որ Ռ. Սիմոնովը Երևանի պետքարոնում բեմադրի Ս. Օստրվոկովի «Արյունավոր պաշտոնը» և Վ. Կիրշների «Հողմերի բաղաքը»: Սյոյ ընթացքում աշխատում էր Յու. Օլեշայի «Երեք հասալիկներ» կատակերգության ոեմիսուրական պլանի վրա, որի բեմադրական աշխատանքները Երևանի Առաջին Պետքարոնում կիսատ մնացին:

14 Հովհանիսի— Մոսկվայում ծնվեց նրա դուստրը՝ Սյուզան Գովակյանը:

1 օգոստոսի— Ռ. Սիմոնովի հետ Մոսկվայից ուղևորվեց Երևան, ու հասան օգոստոսի 5-ին: Հետեւալ օրը Սիմոնովը սկսեց «Արյունավոր պաշտոնի» փորձերը:

14 օգոստոսի— Ակսեց «Խնձայի» փորձերը Երևանի Առաջին պետքարոն

նում: Նոյն օրը ստացավ Հայաստանի լուսժողովումատի համաձայնությունը՝ հիվանդ Արշավիր Կորկոռյանի համար բոշակ նշանակելու կապակցությամբ: Գովալյանի նախաձեռնությամբ Երևանի և Լենինականի քառորնների դերասանների միջոցով նավագվեց 24 ուրիշ և ուղարկվեց Ա. Կորկոռյանին՝ Մոսկվա:

22 օգոստոսի— «Արդյունավոր պաշտոն» պիեսի ավարտական փորձերից մեկը: Օգոստոսի 23-ին Գովակյանը Ա. Մասշյանին գրեց. «Հրաշալի ներկայացում է: Ես ուրախ եմ, որ Սիմոնվը իրեն արդարացրեց»:

24 օգոստոսի— Ռ. Սիմոնովի հետ միասին սկսեց «Հողմերի բաղաբ» պիեսի փորձերը Երևանի Առաջին պետքարտոնում:

10 սեպտեմբերի— «Հողմերի բաղաբ» պիեսի ամրոջական փորձը բեմում: Նոյն օրը սկսվեցին քառորնին կից դրամատիկական ստուդիայի պարապմունքները: Ուսման տևողությունը երկու տարի: Մասնիչայի կազմակերպիչը, գեղարվեստական ղեկավարը ու «Դերասանի վարպետություն և ոեթիսուրա» առարկայի դասաստուն էր Ա. Գովակյանը:

20 սեպտեմբերի— Ռ. Սիմոնովը վերադարձավ Մոսկվա՝ բողնելով «Հողմերի բաղաբ» բեմադրության ավարտը իր «ամենահիճն և ամենաշնորհայի աշակերտին» (Սիմոնովի խոսմերը): Մեկնելուց առաջ Սիմոնովը հրավիրեց Գովակյանին՝ իր մոսկովյան ստուդիայում բեմադրություն տալու:

10 հոկտեմբերի— Վ. Կիրշոն՝ «Հողմերի բաղաբ». Երևանի Առաջին պետքարտոնում: Բեմադրիչներ Ռ. Սիմոնովը և Ա. Գովակյան, նկարիչներ Մ. Արուտչյան և Ս. Ալաջալյան:

Ս. Մելիքսեբյանի քատերախոսականից. «Մեր կարծիքով, բեմադրությունը շատ բան կշահեր, եթե երան տեսարաններից մի քանիսը կրնատեին: Սյսմեկ: Եվ երեսորդ՝ եթե արտաժին ձեւվորումը ծանրաբարդ չիներ: Նման արտաքին ձեւվորումը բացասական է անդրադառնում պիեսի գործողության ակտիվ ընթացքի վրա և տաղոտու առաջացնում» («Խորհրդային Հայաստան», 17 հոկտեմբերի):

20 հոկտեմբերի— Հրավիրվեց Բայու Ադրբեյչանական քառորնում բեմադրելու Գ. Առնեղովիյանի «Քանդած օջախը», որը ադրբեյչաններն էր քարգմանել Լենին Երամյանը:

23 նոյեմբերի— Ա. Գերով՝ «Ինգա». Երևանի Առաջին պետքարտոնում: Թարգմանիչ Ստ. Զորյան, բեմադրիչ Ա. Գովակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

Բեմադրության սկզբունքների մասին Ա. Գովակյանը գրել է. «...Ան. Գերովի «Ինգա» պիեսը ծանոր է Երևանին՝ Մոսկվայի Հեղափոխության քառորնի ներկայացնումներից: Մեր բեմադրած «Ինգան» հեղինակի վերամշակած նոր

վարիանուն է, ուր դրամատուրգը վերացրել է պիեսի հերոսություն ինքայի տիպը վարկարեկող մի ժանի կտորներ: Պիեսը դրամից շահել է: Պիեսում շոշափած նյութը շափազանց ակտուալ է մեր օրերի համար: Գրված է հին կենցաղից կենչ ազաւագրման թեման, նռա պայմանը իր իրավունքների համար և կնոջ ու աղամարդու փոխարքարերությունները ժամանակիս խորհրդային կենցաղում: Ցուցադրված են հինգ կիբ և հինգ աղամարդ, որոնց միջոցով հեղանակն աշխատում է, մի շարք հոգերանական և կենցաղային պատկերներով, լուծել վերոհիշյալ խնդիրները:

...Հոգերանական դրայբյունների միջոցով Գլեբովին հաջողվել է տալ կենդանի մարդկանց մի պատկերաշարք: Պիեսն ունի և «հրապարակախոսական» կտորներ, որոնք հերոսները «հոգերանորեն» նառում են պրակտարական մորայի և նոր ընտանիքի մասին: Այդպիսի «հոգերանական» մոմենտները մենք պարզացրել ենք, աշխատել ենք դրամի դրսությունը հակիրճ, բայց արտահայտիչ շարժ ու ձևով: Բեմադրության և խաղաղության մեջ մոցրել ենք ուռող պայմանականություն, որի շնորհիվ ներկայացումն ավելի դիմամիկ ու սար պետք է հնչի:

...Բեմ են նաև վերացվում անհրաժեշտ պարագաներ: Գործողության ընթացքում զեկորատիվ մասերը ձևավորվում են բայ անհրաժեշտության: Սա մի փառձ է, որպեսզի ընդգծվեն ոռոշ մոմենտներ և երեսն դիմամիկ դրամենքն ոչ այնքան դիմամիկ դեկոր: ...Օգտագործվում է ուղին որպես ներկայացման անհրաժեշտ էլեմենտ՝ ընդգծելու նրանքարակախոսական տեղերը և հոգերանական վիճակների երաշտական իլլուստրացիայի համար՝

«Խորհրդադրության Հայոստան», 23 նոյեմբերի

Անձիսորի մասհացման հաջող իրավունքում հաստատում են Մ. Մազմանյանի («Ավանդարդ», 6 դեկտեմբերի) և Ս. Մելիքսեբյանի («Խորհրդային Հայոստան», 8 դեկտեմբերի) բատերախոսականները: Վերջինս գրել է: «Երմադրողն աշխատել է բեմական արտահայտական ձևերով ֆարուկան սեր: Հոգերանական դրայբյունները լավ են ընդգծված, որն իր երբոքյուններով սրահի հասցնելու նպատակով տեղ-տեղ արտաքին շարժունները նվազեցրել են Գործող անձանց տիպերի բնորոշ կողմերը հաջող կերպով է շնչառել: Նկատի ունենալով պիեսի բերությունները, Ա. Գուլակյանին իրավամբ հելինակի երի բեմական լավագույն սրբագրողներից մեկը կարելի է համարել, ուղևենակ իր դիմամիկության ունեցող պիեսը բեմադրովի շամեթեռվ անհրաժեշտ շափով դիմամիկ է դարձել: Այս խնդիրը լուծելու համար բեմադրության և խաղա-

կորյան մեջ նա որոշ պայմանականություն է մտցել: Պիեսը դիճամիկ դարձնելու համար ներկայացման ժամանակ դեկորների և այլ պարագաների մոնտաժ կատարելու փորձը (պտույտ) պետք է, անշուշտ, հաշող համարել: Այս փորձը մասամբ շակում է պիեսի գործողության վայրի և դիալոգների անհամապատասխանությունը»:

25 նոյեմբերի — Ելույր ունեցավ «Արդյունավոր պաշտոն» թեմադրության ժննարկմանը:

«Խորհրդային Հայաստան», 1 գևկումբերի:

29 նոյեմբերի — Երևանի Առաջին պետրատոնում կազմակերպվեց ուժի-սուրական կոլեգիա, որի անդամներն էին Լևոն Քոլյանը, Արմեն Գոլակյանը և Տիգրան Շամիրխանյանը:

«Խորհրդային Հայաստան», 13 հոկտեմբերի, 6 նոյեմբերի

1930

17 Հունվարի — Սկսեց «Յասումի» փառակեր Երևանի Առաջին պետրատոնում:

30 Հունվարի — Նշանակվեց նոյն քատրոնի գլխավոր ռեժիսոր:

11 Փետրվարի — Ե. Յանձնուկի՝ «Յասում». Երևանի Առաջին պետրատոնում: Փոխադրություն Տիգրան Հայոսմյանի, թեմադրիչ Ս. Գոլակյան, նկարչ Մ. Արուտչյան:

Աշուա Հայոսմյանի քառերսիսոսականից. ներկայացման «քուն ընդունելության գլխավոր պատճառներից մեկը պիեսի բավանդակության այժմեականությանը պետք է վերացրի: Մեր օրերի համար եռա հասարական-ֆազաբական հշանակությունն այնքան հետապն ու կենական է, որ չէր կարող անմիջականորեն ու, մասնակի, ակտիվությամբ շնամակել հանդիսականներին:»

..Մեզ մոտ «Յասումի» թեմադրության հաշողության պայմաններից երկրորդը պիեսի փոխադրությունն է: Պետական քառունը լավ է առել, որ պիեսի միջավայրը և գործող անձինք մեր հանդիսականներին հարազատ է դարձնել: Փոխադրված պիեսը տալիս է մեր գլուխի կոլորիտը: Այս հանգանակն ավելի է նպաստու պիեսի մատչելիության ու պարզությանը:

...Սուր ու հետաքրքրական թեմական դրայբուներով զարգացող այս պիեսը Ա. Գոլակյանի թեմադրությամբ կրկնապատիկ ցայտուն է դարձել: Հասարակական ուժերի փոխարեւությունը իր աստիճանաբար զարգացող բախման մոմենտներով այնպիսի թեմադրական միջոցներով է արտահայտ-

ված, որ նպատակադրությանը լիովին հասնելու նկատմամբ ամենաշնչին կասկած անգամ լինել չի կարող: Բեմադրությունը ուսալիստական է: Դասակարգային առանձին խմբավարությունը իրենց սացիալական նշանակելիությամբ ինդիվիդուալիզացիայի ենթարկելով, ուժիուրը յուրաքանչյուր խմբավորման մեջ մտնող գործող անձի անհատականությունը չի ջնջել, ընդհակառակը՝ աշխատել է այս կամ այն անհատին օժտել բնորոշ կողմերով»: («Խորհրդային Հայաստան», 2 փետրվարի):

16 մարտի — Ն. Սաց և Վ. Մելիխովա՝ «Ֆրից Բաուեր». Երեանի Պատաճի հանդիսատեսի քատրոնում: Բեմադրիչ Ա. Գոլակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

«Ավանդաբեր», 20 մարտի

4—13 մայիսի — Երեանի Սուազին պետքատրոնի հյուրախաղերը Թիֆլիսի Բանվորական քատրոնում: Բացմանը ներկայացվեց «Յասումը», որից առաջ ողջույնի խոսք ասաց Իսահակ Ալիխանյանը: «Յասումից» բացի Գոլակյանի բեմադրություններից ցուցադրվեցին «Խարաբալան» (մայիսի 5-ին) և «Պեպոն» (մայիսի 9-ին): Երեանում լույս տեսավ՝ «ՀՍԽՀ Պետական քատրոն գասարուային շրջագայություն» գրքովկալիքումը՝ հայերեն և ռուսերեն:

Գոլակյանի ստեղծագործությունն արժանացավ Թիֆլիսի հայկական գրացական և ռուսական մամուլի բարձր գնահատականին:

«Յասումի» մասին արձակագիր Մարքսու Գարբինյանը գրել է. «Պիեսի գեղարվեստական ծևավորումը բեմի վրա տեղ-տեղ հասել է անվիճելի կատարելության: Բեմական տեխնիկան օգտագործված է ամեն կերպ, անգամ կինոմունտաժի ձևով: ...Սյստեղ մենք տեսնում ենք ոչ միայն ընդհանուր խաղի սահմանություն, այլև առանձին դերասանի անհատական խաղի շեշտը, նրա տաղանդի դրսելորումը, նրա խաղի բազմազեհությունը և երանգավորումները» («Պրոլետար», 6 մայիսի):

Նույն հեղինակը «Պեպոյի» մասին. «Մեր օրերի, մեր տեմպերի ուժն է տվել «Պեպոյին» Գոլակյանը: Սակայն խոսքը դարձել պատկեր, հակադրություններով ցույց տալ այն՝ ներեմում արյուն-արցունք բափել տալով, վերելում ենք ու լուսոյի խաղ անել տալով—ահա այս է «Պեպո» բեմադրության հատկանշական կողմը: Նրանում պահպանված է իր ժամանակի ոճը, արդ ու գարդը, շարժ ու ձեր, լեզուն, կենցաղը:

Բայց ահա մի բոլորովին նոր պատկեր, Գոլակյանի ստեղծագործության բեմական պատկերը, ուր նա ուժեղացնում, կատարելության է հասցնում «Պեպոյի» սոցիալական արձեքը: Յարական դատարան—այսպես կոչված «ազատարար կայսեր» կենդանագրով—և եկեղեցի: Ճնշիր խեղին («Արուրինը

զբներ»), դատը հօգուս զիմզիմովների վենիր, ապա դուրս եկ նույն զիմզիմովների ու նմանների հետ միասին աղոթելու գնա: Այստեղ «զողաճում է» ցարական դատարանի ննջող ու հարստահարող խոսքը, այնուեղ դոշանջում են խեղի ու կրակների միտքը մթագեղ եկեղեցու զանգակները: Երկգլխանի արձվի հովանու տակ պարախտիկ դատավորը կատարում է իր ահեղ գործը, որպեսզի էփեմիանների «սիրտը շուտ չզա»: Նարքի կանգնած Զիմզիմովի լակեյները պատվում են, մեծարում երան, զիսներին պահապան ունենալով ժանգուած ու դաժան ցարիզմը: Այս նոր էպիզոդը «Թեպոյի» մեջ նոր ու բարմացնող շեշտ է:

«Թեպոյի» նման կլասիկ երկը ձեակերպն նոր, անհանաշելիության հասնելու շափ շրջանակներում և մատուցել այն առանց աղավաղելու տեխնոր, ենթարկելով այն տրամաբանական կոմպոզիցիայի, սա արդեն ազդեցուրյան խնդիր չէ, այլ ստեղծագործություն. արվեստի բնագավառում նոր նվաճում է երիտասարդ ոեժիուր Գոլակյանի համար մասնավորապես, և Երևանի պետքարունիքներու համար ընդհանրապես: ...Երևանի պետքարունիքները այս բեմադրությունը, համոզված ենք, Օիմպիադայում (Մոսկվայի—Բ. Հ.) նշանավոր տեղ է գրավելու իր ինքնուրույնուրյամբ» («Պրոլետար», 11 մայիսի):

Թատերախոս Գ. Թարուլովը «Թեպոյի» մասին գրել է. «Թատրոնի խնդիրն էր ամբողջովին հաշվի առնել պիեսում արտահայտված դասակարգային զաղափարախոսության առանձինահատկությունները և դրան համապատասխանաբար պիեսը բեմադրել պրոլետարական հեղափոխության զաղափարախոսության լույսի տակ: Դա արտակարգ զմվար խնդիր է և չի կարելի ասել, որ քարոզները լիովին այն լուծել է: Բայց այս բեմադրության մեջ արդեն կարողացել է շատ բանի հասնել: Պիեսի հյուրի բնադրատական յուրացումը իրագործվել է նրա ոնական վերամշակմամբ: Սունդուկյանի «Թեպոն» ուսախտական կատակերգություն է: Գոլակյանի ոեժիուրական պլանով «Թեպոն» պայմանական-ուսալիստական ներկայացում է՝ գրուեսկի ուժեղ տարրերով: Կինոկադրերի սկզբունքը զգալի կերպով բարձրացնում է ներկայացման դինամիզմը: ...Սունանձին մանրակրկտությամբ մշակված է ներկայացման ոիքմիկ կողմը: Բեմադրության վրա առկա է Վախրանգովի բարոնի ոնական որոնումների որոշակի ազդեցությունը, սակայն այդ հանգամանքը բոլորովին չի բուզանում Գոլակյանի բեմադրության ինքնատիպությունը»: («Заря Востока», 11 մայիսի):

16-28 մայիսի— Երևանի Առաջին պետքարունիքի հյուրախաղեր Բաֆվի Բունիադրզաղեի անվան քատրոնում: Գոլակյանի բեմադրություններից ներկա-

յացմեցին. «Յատումը» (մայիսի 16-ին, 22-ին, 23-ին և 26-ին), «Խարաբալախ» (մայիսի 18-ին և 23-ին) և «Պեպոն» (մայիսի 19-ին և 24-ին): Տեղական մամուկը բարձր գնահատեց այդ թեմադրույթունները:

«Յատումի» մասին գրվել է. «Այդ առաջին խոկ ներկայացումից հասկանալի է դառնում այն հսկայական հետաքրքրությունը, որ հանդես է բերում բանվորական հանդիսականը այդ բատրոնի հանդեպ: Հասկանալի է դառնում, թե ինչու «Յատումը» երեանյան թեմում մնի սեզոնի ընթացքում խաղացվել է 25 անգամ, իսկ գյուղերում, կալմողնիկների պահանջով, մի երեկոյում կրկնվել է երկու անգամ: ...Բատրոնի գեղարվեստական հզորությունը հենվում է խմբի գերասանական ուժերի միասնական կամքի և համագործակցված խաղի վրա» («Բակինսկի рабочий», 19 մայիսի):

Քննադրատ Սարգս Գասպարյանը (Էմիլ ծածկանունը) «Պեպոյի» մասին գրել է. «Մեծիսոր Գուլակյանը փախել է պիեսի բնագրի կոմպոզիցիան այնպես, որ ամելի, քան հեղինակը, շեշտի սոցիալական հակասուրյուններն ու այդ հակասուրյուններն ավելի ցայտուն կերպով պատկերացնի: Դրա համար նա, հսկառակ նին բատրոնի բարացած ձեռի, ստեղծել է սոցիալական համապատասխան ֆոն և շրջապատ, որի շնորհիվ սուր կերպով դրսեարվում են Զիմգիմովի և Պեպոյի միջև տեղի ունեցող պայմանի շատ մոմենտներ: Մինչդեռ նին բատրոնի հին թեմադրույթամբ այդ մոմենտներից շատեր երեան շեն հանվում ամրաց սրույթամբ, երեմն էլ հանդիսականի համար անհատ էին մնում: Պետք է գործունակուրյամբ շեշտել, որ ուժինորդի առաջարած ստեղծագործական նպատակը լիովին արդարացել է» («Կոմունիստ», 26 մայիսի):

Դրվատական հոդվածներ տպագրվեցին նաև «Կոմունիստում» (մայիս 18-ին և 22-ին), «Բակինսկի рабочий» -ում (մայիսի 30-ին), «Рабочее искусство» -ում (հունիսի 10-ին), «Рабочий зритель» -ում (մայիսի 25-ին):

Ա. Գուլակյանը Մոսկվա, կենջը ուղարկած մայիսի 19-ի համակում գրել է. «Երե երեկո ներկայացումը («Խարաբալա»—թ. 2.) անցավ շատ մեծ հաջողությամբ և գեղարվեստական, և՝ նյուրական տեսակետից (մուտք՝ 1490 թ.), ապա այսօրվա ներկայացումը («Պեպո»—թ. 2.) ինձ համար իսկական հաղթանակ էր. (մուտք՝ 1550 թ.): Վերջում, երբ թեմ հրավիրեցին, հանդիսարարից վեց երիտասարդ ինձ ձեռերի վրա բարձրացրին և սկսեցին վեր բացնել, սիրա նվազում էր ոչ թե հաջողությունից, այլ վախից՝ այնքան բարձր էին բացնում... Այդ բաղաբը մեր ներկայացումների մասին է խոսում»:

Այդ նոյն երեկո Ադրբեյջանական պետքատրոնի ղեկավարույթունը հրա-

վիրեց Գուլալյանին թեմադրելու «Խարաբալան», որը, սակայն, չի արվել:

1-11Հունիսի — Երևանի Առաջին պետքատրոնի հյուրախաղերը Գոնի Թուստովի Ս. Լուսաշարսկու անվան քատրոնում: Գուլակյանի թեմադրույթներից ցուցադրվեցին «Յասումը» (հունիսի 1-ին և 11-ին), «Խարաբալան» (հունիսի 3-ին) և «Պեպոն» (հունիսի 5-ին և 7-ին):

«Խարաբալայի» առքիլ քառերախոս Ամբառելի թարսելյանը գրել է. «Թուստովում, գոն այս վերջին մի բանի տարիների ընթացքում, չեր տեսնված այդքան քազմուրյուն, որի մեծագույն մասը կազմում էին մեր գործարանների, արակենարի բանվորությունը: Չափաված ոգևորությունների ժամանակ և թե ընդմիջնամեների» («Մուր ու մահցաղ», 4 հունիսի):

«Մուր ու մահցաղ», 4 հունիսի, 8 հունիսի, 11 հունիսի, 20 հունիսի

«Մոլոտ», Գոնի Թուստով, 6 հունիսի

15 Հունիսի-11 Հուլիսի — ՍՍՀՄ ժողովուրդների արվեստների (քառորն, կինո, ժողովրդական երաժշտության և պար, կերպարվեստ) օլիմպիադան Մոսկվայում: Երևանի Առաջին պետքատրոնը Հեղափոխության քատրոնի թեմում ներկայացրեց «Պեպոն» (հունիսի 22-ին) և «Յասումը» (հունիսի 23-ին), ինչ Օլիմպիադայի ծրագրից դուրս՝ «Խարաբալան» (հունիսի 24-ին), «Հրե կամուրջ» (թեմադրիչ Վ. Վաղարշյան, հունիսի 25-ին) և «Արդյունավոր պաշտամուր» (թեմադրիչ Ռ. Միմնոնի, հունիսի 26-ին): Մոսկվայում ուսուերեն տպագրվեց «Պեպոն» և «Խարաբալան» պիեսների լիբրետոն:

Թատերախոս Գ. Թարուպնիք գրել է. «Թատրոնը, օգագործելով ժամանակակից լավագույն թեմերի փորձը, աննկոն կերպով գետմ է սեփական ոճը մշակելու հանապատճենը: Այսպիսի ներկայացում, ինչպիսին է «Յասումը», փայլուն կերպով ցույց է տալիս բարացած տրադիցիաների բացաման ուղղությամբ քատրոնի խիզախումը և նրա կողմից սովետական իրականության առողջ սեմպի սուր ընկալումը» («Литературная газета», 16 հունիսի):

«Բազում և թատրոն» (Լենինգրադ, № 42, էջ 7) հանդիսում գրվել է. «Յասումի» գործողությունը տեղափոխված է նայ զյուղի պայմանները ոչ թե մեխանիկարար, այլ ներուսների և սյուժետային բոլոր դրայրյունների օրգանական վերամշակման հանապատճենը: Այստեղից էլ ներկայացման կոնկրետ ազգային ձեւը, որն իրեն զգացնել է տալիս և հայկական երաժշտական ֆոլկուրի տարրերում, և կերպարանների ազգային թնութագրման, և թեմական ֆոնի կազմակերպման մեջ»:

Ս. Ռուսովը «Պեպոնիկ մասին» գրել է. ««Պեպոն» ամուս տեղ է գրավում ժամանակակից հայ քատրոնում: Պիեսի կյանքի երեք կոտապները՝ երեք տարբեր մեկնարարանուրյուններ են: Սունդուկյանը հայ Մոլիերն է՝ այսպես էին

մեկնաբանում նրան հնում: Սունդովյանը հայկական Օստրովսկին է՝ առան
էին մոսկովյան քատերական գործիչները մոտիկ անցյալում: Սակայն մեզ
մոտ հյութախաղերի եղած Երևանի սեւական քատրոնը Սունդովյանին ներ-
կայացրել է բոլորովին յուրովի: Տաղանդավոր ուժիսոր Մ. Մ. Գուլակյանը
«Պեպոն» բեմադրել է նոր մեկնաբանուրյամբ: Նրա «Պեպոն» Օստրովսկու ո-
նով կենցաղային կատակերգուրյուն չէ, ոչ էլ Մոլիերի դասական կոմեդիան:
Նրանում բացահայտված է Երկու հակադիր ուժերի՝ պրոլետարիատի և կապի-
տալի նոր սկսվող պայքարի սոցիալական էուրյունը: Մրտիստական ուժերի
խելաք ընտրուրյունը, երիտասարդ և շնորհալի ուժիսուրյալի հեղափոխական
բոփչը Հայաստանի քատրոնը դնում է մայրահաղաքային լավագույն քատ-
րոնի կողքին: Անհրաժեշտ է հայկական քատրոնի ներկայացումները ցուցա-
դրել Մոսկվայի լայն մասսաներին»: («Վեчерняя Москва», 27 հունիսի):

Քննադատ Ի. Կրուտիի «Հայաստանի պետրարոնը» հոդվածում կարդում
ենք. ««Պեպոն», «Խարաբալա» և «Արդյունավոր պաշտոն» ներկայացումները ար-
տահնապես կարծեն թե միայն ծիծաղաշարժ են, բայց արժե մի ըստք մտա-
ծել, թե ինչի վրա են ծիծաղում ու դու կիհասկանաս, որ այսուել ոչ թե պետք
է ծիծաղել, այլ մարտնչել է պետք այդ զգինի և արգահատելի աշխարհի
դեմ: ...Անհրաժեշտ է ընդունել, որ երիտասարդ ուժիսուրյան հոյակապ է տի-
րապետում այդ մերոդին, իսկ փորձված և օճակած դերասանները վարպետու-
րեն են լուծում իրենց առաջ դրված խնդիրները: «Յասումն» այսուել նեշեց
նորովի, առավել սուր, խտացրած գույններով: ...Այդ քատրոնը գիտե ու՞ր է
գնում, ինչի՝ է ձգում և ում համար է աշխատում: Մոսկվայում խաղացած
հինգ ներկայացումները գործողուրյան մի ամբողջական ծրագիր է, բեմական
և հասարակական ձգումների վառ, անմնացորդ ցուցադրում: Խորհրդային
Հայաստանի քատրոնը մի կողմից քննադատաբար յուրացնում է ինչպես իր
ազգային, այեպէս և մյուս ժողովուրդների դասական դրամատուրգիան, մյուս
կողմից եռանդուն աշխատում է բեմատիկ անսակետից առավել հրատապ-
այսօր քաղաքական իմաստով անհրաժեշտ սիեսները փոխադրել իր ազգային
հողի վրա: Երկու դեպքում էլ քատրոնը ուզում է ետ շմբալ խորհրդային քատ-
րոնի լավագույն նվաճումներից: Երկու դեպքում էլ նա տարել է որոշակի հաղ-
քանակ: ...Թատրոնը այդ պիհեների («Պեպոն» և «Խարաբալա»—Բ. Հ.) բեմա-
դրույթանը մոտեցել է ոչ թե իրեւ պատմաբան, այլ իրեւ հեղափոխական
թատրոնը ոչ թե ժպտում է, այլ ծաղրում է, նա ոչ թե ծիծաղում, այլ մերկաց-
նում է: Նա ոչ թե «կարեկցում է», այլ իր ողջ համակրանք տալիս է աղքա-
տիկն հարուստի դեմ մղած նրա պայքարում: Նա ոչ թե «հաշվառում» է փա-
սերը, այլ դասակարգայնորեն բացատրում: ...Մերկով քննորագրումները

կարողանալով ընդգծել գործող անձանց սոցիալական էությունը, քատրոնք կարողացել է ժամանակակցի աշխեռով ընթերցել դասական երկերը» («Радочий и искусство», Մոսկվա, № 38)

Ն. Վալեկովը հովիսի 14-ին «Օլիմպիադայի քատրոնները» հոդվածում գրել է. «Հայկական քատրոնն իրեն դրսկուեց նախ իրեւ ամուր դերասանական կողեկտիվ, նա որոշակի տիրապետում է խաղի ուսախուական այն դպրոցին, որն աշխի է ընկնում կերպարների հստակ մշակմամբ և ազգային հույր հումորով: ...Երեք «Յասումում» երան հաջողվել է վար գույներով ցույց տալ հայկական գյուղի կոլորիտը, պիեսի պյութեն օրգանապես տեղափոխել այլ պայմաններ, կենցաղային այլ միջավայր, ապա Սունդուկյանի կատակերգությունների բեմադրության մեջ մենք տեսանք հին տեխստի տաղանդավոր քարմացումը և վերափոխումը: Գովակյանն ուժեղացրել է դրամատուրգի մերկացնող տեհնդեցները, տվել է պերսոնաժների առավել որոշակի դասակարգային մեկնաբանություն և, գործողությունը քաժանելով էպիգոնների, միաժամանակ կարողացել է պահպանել սյուժետային գծի անընդմեջ զարգացումը» («Известия», 14 հովիսի):

Թերում ենք մի բանի հատված ՍՍՀՄ ժողովուրդների արվեստների օլիմպիադայի Ժուրիի հովիսի 11-ի որոշումից. «Հայաստանի պետքարտուրնը պետք է դիտվի իրեւ կոլտուրական և բաղաքական հսկայական նշանակություն ունեցող փաստ ոչ միայն Սովետական Միուրյան, այլև արտասահմանյան երկրների համար: ...Քատրոնն անկասկած երես բերեց դերասանական կոլտուրայի բարձր մակարդակ, կոլեկտիվի կողմից քատերական արտահայտչականության միջոցների ազատ տիրապետում, շարժման որոշակի ոիթմ և խաղի մայուր նկարագիծ, խոսի բարձր զարգացած կոլտուրա և ժեստի գուսապ ու տպագորիշ ուժ: ...Քավական բարձր մակարդակի վրա է ուժիուրական աշխատանքը, որին հատուկ է ժամանակակից քատերական կոլտուրան և դերասանների հետ աշխատելու կարողությունը: ...Հայաստանի պետքարտուրնը զեղարքվեստական և բաղաքական այն նիշտ զեկավարությամբ, որ հայտնաբերվեց նրա աշխատանքում, կանգնած է իր ստեղծագործական անհատականության դրսելումն նիշտ ուղղությունը վրա և ունի սովետական առաջավոր քատրոնների շարժում աշխի ընկնող տեղ գրավելու բոլոր տվյալները» («Советский театр», Մոսկվա, № 8,էջ 10):

Երեսնի պետքարտուրնի «Յասում» և «Պեպո» բեմադրություններին նվիրված հոդվածներից առավել ուշագրավը հայտնի քատերական բննադատ Պ. Ա. Մարկովի «Հայկական քատրոն» ակնարկն է: Առաջին անգամ ընթերցողի ու-

շադրության ենք ներկայացնում այդ հոդվածի հայերեն լրիվ բարգմանուրյունը. «Հայկական բատրոնի ներկայացումների դիտելիս: հիշում ես իտալական՝ վենետիկցինների կամ նեապոլցինների բատերախմբերը: Նրանց ի մի է բերում դերասանների հոյակապ տեմպերամենար, որը բեմից բերև ու հնչեղ սուրում է դահլիճ. խաղի փոքր-ինչ պայմանական մաներ, որ ուղղված է հանդիսատեսին և ամուռ կերպով նրան կապում է դերասաններին. հիանալի ոփրմ, որ բույլ է տալիս առանց ձանձրույրի դիտելու Սունդուկյանի «Պեպո» հինավուրց կատակերգության մեկովինսական ժամ տեղու երկու գործողուրյունը: Բայց համանման գծերով հանդերձ կան և մեծ տարբերություններ. իտալացինների հասային անկազմակերպվածուրյանը հայերը հակադրում են արդի բատերական կուտուրայի մակարդակով կազմակերպված ներկայացում: Ներքին լրջուրյուններ անբաժան է նրանց բատրոնից և քե՛ այս, քե՛ իտալական բատրոնին հարազատ է լավատեսուրյունը, որով ներքափանցված է ներկայացումը, և դա ձեռն է բերում ոչ քե՛ անառարկայական և կենսարանական հրեվականի, այլ պարզունացիական հպատակապահության գծեր: Փոքր բեմում, տեխնիկական դրվագարին պայմաններում հայ արվեստագետները կուտուրական մեծ զործ են կատարում:

Երեանն ունի իր ազգային բատրոնը՝ ևս մի տարբերություն իտալացիններից, որոնք... ստիպված են եղել ունենալու բափառող և բոչվոր բատերախմբեր, նոյնիսկ Հռոմում շունենալով մշտակայուն դրամատիկական բառն:

Այդ ներկայացումների ինքնատիպուրյունը, որ խստորեն առանձնացնում է նրանց բուրքերից և բելոսուսներից, բացահայտ է: Դա առանձնապես ցայտուն արտահայտվեց Սունդուկյանի «Պեպո» ներկայացման մեջ և հաստառումըն գտավ «Յատումի» բեմական յուրահատուկ մեկնաբնուրյամբ: Խոսք ուժիությական նոր հնարեների նորության մասին չէ: Ուժիությական առումով հայերն ընթանում են խորհրդային բատրոնի հիմնական հնարեների յուրացման և վերամշակման ուղիղով: Ներգործուրյան ուժն անում է այդ հնարեների և հայդերասանի յուրահատկուրյունները հմտորեն նկատի առնելու գուգորդուրյամբ:

Հայկական բատրոնի վերը բվարկված յուրահատկուրյունները միանում են ձեփ տեսակեալից ավարտուն և հստակ ցուցադրման նրանց փորձերին՝ առանց գոենկացման կամ «հարավային» բատրոնով հրապուրվելով: Բատրոնը շափազանց լուրջ է վերաբերվում իր խնդրին, որպեսզի ընթանա այդպիսի նաև անպարհով:

Ընդունելով ժամանակակից բատրոնի հիմունքները՝ հայերը ցանկանում են անցյալի ժառանգուրյունը ևս ընկալել արդի հայեցակետով: Նրանք ուկիզիայի

են ենրարկում իրենց դասական Սունդուկյանին: Թատրոնը այսպես է բանաձել իր խնդիրը. «Պեպոն» իր վերջին բեմադրությամբ (ուժիուր Գովակյան) լճքացել է զործող անձանց դասակարգայնության խտացման, ուժեղացման ու բացահայտման տեսանկյունով, ոչ թե բարոյապես հակադիր ուժերի բախման, ինչպես պիեսի հեղինակ Սունդուկյանն էր պատկերացնում, այլ հասարակայնուրեն տարբեր դասակարգային ուժերի պայքարի պլանով: Այդ խնդիրը քատրոնը լուծել է զուտ բատերական եղանակներով, շահալով իր բեմական միջոցների գիտանոցից դուրս բերել այն միջոցները, որոնք հարմար են զայխ իր սոցիալական մտահղացման դրսերմանը: Միշտ չէ, որ դյուրին է «Էրիկականը» փոխադրել «դասակարգայինի»:

Ամեն ինչով չէ, որ դա հաջողվել է նաև հայ քատրոնին: Շատ կողմերով հակասություններ կան Սունդուկյանի ստեղծագործության մեջ:

Սունդուկյանի «Պեպոն» ոմանց ստիպում է հիշել Օստրովսկուն. նմանություն ոչ թե երանց մերողների հարազատության էությամբ, այլ դրամատուրգիայի զարգացման մեջ երանց ունեցած պատմական դերի գեահատությամբ: Ավելի ստույգը Գոլդոնիի հետ տարկող զուգահեռն է: Սունդուկյանը շունի ո՞չ կենցաղային խոր գծանկարներ, ո՞չ էլ կենցաղի ծայրահեղ քանձրացում, չկա Օստրովսկուն հատուկ գրելաձե: Սունդուկյանը գրում է յուրահատուկ «դիմակների կատակերգություն»: Նրա կատակերգության ձկնորսներն ու վանասականներն առիր են համարյա պլակատային կերպարների կառուցման համար: Նրա այդ յուրահատկությունից էլ օգտվում է քատրոնը կատակերգության դասակարգային լուարանման համար: Նա հմտութեն որսում է քատերական շափազնցման գծերը և դրանի միացնում է սոցիալական ընդգծված բնութագրմանը: Սունդուկյանի կենցաղային ակնարկները քատրոնը ծավալում է առանձին տեսարաններով և մի շարք պայմանական, երբեմն դիմախաղային էտյուդներով նկարում է անցյալ դարի Հայաստանը իր բնորոշ կերպարների շարով:

Բայց դիմակների կատակերգությունը մնում է դիմակների կատակերգություն: Սունդուկյանի պիեսում չկան «խարակտերներ»: Իր դիմակները Սունդուկյանը միացնում է կողքից զուգահեռաբար ընթացող ինտրիգների շարքին, հիմնական սյուժետային հենքից հանդիսատեսին նետում է կողմնակի ինտրիգների շարքը, հանդիսատեսին ստիպում հետեւլու մեկ ձկնորս Պեպոյի հակատագրին, մեկ երա երոշ ամուսնության պատմությանը, երա քշնամիներին,— և պիեսի այս պայմանական բազմապլանայնության և դրամատուրգիայի այս հատկանիշների մեջ է ընկած Սունդուկյանի անվիճելի հարազատությունը Գոլդոնիի հետ: Ուստի և ներկայացնումք «սոցիալական դիմակների», «պայմանա-

կան», «քատերայնացված» պատկերում է: Այդպիսի ցուցադրության համահայ դերասանները հմուտ են ու նրարվեստ: Դիմակները տեղափոխելով «սոցիալական» ընդհանուրացումների պլանը, քատրոնը չի կորցրել խաղի «պայմանական» մաները:

«Վաճառականությանը» ընդգծված պատկերելով շափազանցված և սատիրական ծաղրանկարի երանգներով, քատրոնն իր համակրանքը տալիս է «ձկնորսներին», երանց հարորդելով պարզություն և կինոտախուրյուն: Լավ տեմպով և հիանալի տեմպերամենտով ընթացող այս ներկայացման մեջ կան «ժողովրդական խաղի» տարրեր:

Եթե «Պեպոն» ընկած է անցյալի ժառանգությունը հաղթահարելու գծում, ապա «Յասումը» ժամանակակից դրամատուրգիայի վերամշակման փորձ է: Հայերը գործը զբով են բերել առանց տեխստային կտրուկ վերամշակման: Ամենաներգործուն վիճակներում և ամենադրամատուրգիական իրադրություններում երանք հիշատությամբ գտել են Խոսաստանը Հայաստանին մերձեցնող գծեր: Երանք խոսափել են բռնազրոսիկ լինելուց, և Հայաստանի գյուղական կենցաղը բեմում հանդես է գալիս համոզիչ պարզությամբ: Այս ներկայացումն ավելի լուրջ ու խորն է, քան «Պեպոն»: Սա նոյնքան դիմամիկ է, նոյնքան քատերային, որքան հայերի առաջին ներկայացումը: Բայց այս անգամ հայ դերասաններն իրենց արվեստը հմիրում են «քենափորությանների» կառուցմանը՝ իրենց տեմպերամենտը երանք ճվանում են պարզության և հակիրենության ձևով, հստակութեն շեշտում են կերպարների զարգացման գիծը և երանց դասակարգային բնուրագիրը, շեշտում են պայմանական պահերը, բայց այնպիսի հստակությամբ, որ խաղի հուզական ուժը, խոռոքը զերծ են մնում հավակնություններից: Այս ներկայացման մեջ երանք որոնում են դերասանական խաղի նոր ձեռք և գոնում են դրանք: «Յասումի» սոցիալական իմաստը տեղ է հասնում լիակատար և ամբողջ ուժով:

Հայկական քատրոնը թերևս շատ ուժիշներից ավելի նիշտ է զգացել «ձկնորսականությամբ պրոլետարական» բանաձեր, քանի որ հայ դերասանի հատկանիշներից ոչինչ չկորցնելով, բայց և զարգացնելով դրանք արդիական կուլտուրայի սահմաններում, նա, միաժամանակ, ներկայացումը հագեցնում է դասակարգային բռնազրությամբ: Պետք է կարծել որ քատրոնն այդ նախապարհից այլևս չի շեղվի» («Советский театр», № 8, էջ 11—12):

Կարեն Միքայելյանը, Օլիմպիադայի արդյունքներն ամփոփող հոդվածում, գրել է: «Այժմ քատրոնի մեջ առաջին խոսքը պատկանում է ուժիսութիւն: Եվ այդ ուժիսութիւն ունի այժմյան հայ քատրոնը: Արմեն Գուլակյանը:

այդ երիտասարդ ուժիսորը, իր մտահղացությամբ, Երևակայությամբ, ստեղծագործական մտքով, գեղարվեստական շափի և տակսի ըմբռնումով խոչոր արվեստագետի բոլոր տվյալներն ունի» («Անահիտ», Փարիզ, 1930, Բ տարի, թիվ 4):

7 սեպտեմբերի— Ելույր ունեցավ Երևանի Առաջին պետքատրոնում կայացած խորհրդակցությունում, որտեղ ամփոփվեցին ՍՍՀՄ ժողովուրդների արվեստների օլիմպիադայի արդյունքները: Զեկուցող՝ Գ. Աբով:

9 սեպտեմբերի— Նշանակվեց Երևանի Առաջին պետքատրոնի գեղարվեստական բաժնի վարիչ:

15 հոկտեմբերի— Ա. Կրոն՝ «Հրացան 492116», Երևանի պատանի հանդիսատեսի քատրոնում: Բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Մ. Արուտչյան:

Վահրամ Թերգիբաջյանը գրել է. «Մեծիսոր Արմեն Գուլակյանը ջանացել է տալ պատանեկուրյանը հանելի, մարսելի բեմադրություն (լույսերի խաղ, կոմիզմ, պարզություն և ալլե) և նա հաջողությամբ հասել է իր հետապնդած նպատակին» («Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի):

13 նոյեմբերի— Վ. Վիշնեսկի՝ «Առաջին հեծելազորը». Երևանի Առաջին պետքատրոնում: Բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Մ. Արուտչյան, կոմպոզիտոր Վ. Շահերլինգ:

«Առաջին հեծելազորը» պիեսը Պետթատրոնում (գրույց Ա. Գուլակյանի հետ), «Ավանգարդ», 11 նոյեմբերի

«На рубеже Востока», № 1, էջ 73—76

18 նոյեմբերի— Ա. Գերով՝ «Ինչե» («Ինզա»). Երևանի ադրբեջանական քատրոնում: Փոխադրություն Ա. Խմամզադեի և Ա. Թահիրովի, բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Ա. Թարյան:

25 նոյեմբերի- 12 դեկտեմբերի— Հայկական արվեստների (քատրոն, կինո, երաժշտություն, գրականություն, կերպարվեստ, գրքի ձեավորում, պարարվեստ, աշուղական արվեստ) առաջին օլիմպիադան Երևանում: Գուլակյանը դրան մասնակցեց «Օղակում» և «Խարաբալա» (Երևանի Առաջին պետքատրոն), «Հրացան 492116» (Պատանի հանդիսատեսի քատրոն), «Ինչե» (Ադրբեջանական քատրոն) բեմադրություններով:

Օլիմպիադայի առթիվ հնեադատ Գուրգեն Վանանդեցու գրած հոդվածում «Խարաբալա» ներկայացման մասին կարգում ենք. «Այդ բեմադրությունը կրկասիկ պիեսի ժամանակակից բեմական մեկնաբանության լավագույն նմուշն է: Տիպերի սոցիալական էության շեշտված ցուցադրումով և այդ էությունն անզուգականորեն դրսեռող դերասանական խաղով, բեմադրության պարզությամբ, ամբողջապես գործողությանը ծառայող իր ամփոփ կառուցվածքով մի

գեղարվեստական ամբողջուրյուն է» («Խորհրդային Հայաստան», 1931, 7 հունվարի):

«Խորհրդային Հայաստան», 25 նոյեմբերի, 26 նոյեմբերի, 28 նոյեմբերի, 5 դեկտեմբերի

2 դեկտեմբերի — Վ. Վաղարշյան՝ «Օղակում». Երևանի Առաջին պետքատրոնում: Թեմադրիչ Ս. Գոլակյան, նկարիչ Մ. Արության:

28 հունիսի — Ա. Տիգրանյան՝ «Թափիք Թեկ» (գերաբեմադրություն): Սպինդիարյանի անվան բատրոնում: Բեմադրիչ Ա. Գուլակյան, ռեժիսոր Գ. Մելքոնյան, դիրիժոր Մ. Թավրիզյան, նկարիչ Կ. Մինասյան, պարերը Զ. Մուրալյանի:

«Սովետական Հայաստան», 17 հունիսի

5 հուլիսի — «Անհանգիստ մարդիկ» պիեսը Լենինականի Մոավյանի անվան բատրոնում: Բեմադրիչ Ա. Աբարյան:

«Բանվոր», 14 հուլիսի

15 հուլիսի — Զեկուցեց Մ. Երմոլովյանի մասին Հայկական բատերական ընկերությունում, դերասանուհու ծննդյան 100-ամյակին նվիրված երեկոյում: Զեկուցման տեխսոր պահպում է Գ.Ա.թ., Գուլակյանի արխիվում (№ 436):

1 օգոստոսի — «Արշալույսին» պիեսը Գորիսի Վաղարշյանի անվան բատրոնում: Բեմադրիչ Ա. Թորոսյան:

13 հոկտեմբերի — Բացման խոսք ասաց Ստեփան Շահումյանի ծննդյան 75-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյում: Ելույթի տեխսոր պահպում է Գ.Ա.թ., Գուլակյանի արխիվում (№ 440):

8 նոյեմբերի — «Խանդուր» բալետի նոր բեմադրությունը Սպինդիարյանի անվան բատրոնում: Լիրետոն Ա. Գուլակյանի և Լ. Լավրովսկու, դիրիժոր Գ. Բուրալյան, բալետմայստերներ Վ. Վարկովիցկի և Զ. Մուրադյան, նկարիչ Ս. Միքոնյան:

«Կոմունիստ», 18 նոյեմբերի

18 նոյեմբերի — Սպատվեց Սունդուկյանի անվան թատրոնի գլխավոր ռեժիսորի պաշտոնից: Նրան փոխարինեց Վարդան Անեմյանը: Դադարեցին Գ. Տեր-Գրիգորյանի և Լ. Ղարազյանյանի «Լուսաշող առավոտ» («Վերածնունդ») պատմա-հեղափոխական դրամայի բեմադրական աշխատանքները: Այլև Գուլակյանը Սունդուկյանի անվան թատրոն շվերադարձավ: Արվեստակիցներից շատերը երես դարձրին նրանից, բայց կային այնպիսիք, որոնք չդավանանեցին իրենց ստեղծագործական բարեկամուրյանը: Դրանցից էր բեմանկարիչ Միքայել Արուաշյանը, որի 1954-ի հունվարի 1-ին Մոսկվայից գրած նամակը մեջ ենք բերում հաղվածաբար: «Ես աշխատում եմ դեպքերը գնահատել ոչ այն մարդկանց մանր կրերի և շահերի տեսանկյունից, որոնք անձնապիս ինչ-որ բանից զգո՞ք են ու դադլած: Իմանալով քո տաքարյուն բնավորությունը, ես նույնիսկ բույլ եմ տալիս մտածելու, թե դու միշտ չե, որ նիշտ ես վարվել, երբ ուզեցել ես որոշել քո վերաբերմունքը այս կամ այն մարդու նրկատմամբ (մասնավորապես իմ հանդեպ դու շատ փոփոխամիտ էիր): Զնայած դրան, ես, այնուամենայնիվ, կարծում եմ, որ դու քո տեղի ունես թատրոնում, պատմական ամուս տեղը: Ինչպես յուրաքանչյուր ո՛վ արվեստում, դու էլ ունեցել ես և վերելքներ, և անհաջողություններ ստեղծագործության մեջ, իսկ քո հաջողությունները տոն էին ո՛չ միայն քո, այլ նաև այն բոլորի համար, որոնք սիրում էին իսկական արվեստը, իսկ անհաջողություններդ չեն կարող ուրախացնել երանց, որոնք ազնվորեն հոգում են իրենց հայրենիքի կովտուրայի զարգացման մասին: Բայց անձնապես ինձ միշտ բվացել է, որ քո մեջ կա ինչ-որ անվաստիորյուս ուժերիդ հանդեպ, որ ժեզ. համար ժիշտ է սեփական համոզմութենքներդ քո արվեստի հշմարտության մեջ, որ դու հենարան էիր փետրում դրսից: Ահա այդ ժամանակ դու կորցնում էիր այն հատկանիշը, որը միշտ հատուկ է եղել իսկական արվեստագետին՝ ինքնուրույնություն և անկախություն: Ու չեմ հասկանում, թե այդ բոլորը ինչի՞դ էին պետք: Վէ՛ որ դու այնքան մեծ վարպետ ես, որ բացի արվեստից, կարող ես այլ բրնձագալառում ոչինչ շինարել: ...Ես ուրիշ հպատակ չունեմ, թանկագին Արմեն, բացի այն ճպատակից, որին կարող է հետապնդել մի արվեստագետ հանդեպ մի այլ արվեստագետի, որին նա գնահատում է: Մենք արգեն այն տարինում չենք, որպեսզի իզուր տեղը շուալիներ մեր զգացմունքներն ու բաները: Ես կորկենայի, որ դու զայիր, որ ամենարանկագինը, արժեխափոր քո մեջ՝ արվեստագետի նու հատկանիշներն են, իսկ մեացածեներ՝ բոլոր տեսակի աստիճաններ, կոչումներ, տիտղոսներ, — չարժեն, որպեսզի նրանց պատճուղ կանգ առնեի արվեստագետի ստեղծագործական անը: Ստեղծագործությունը միակն է, որը բնուանից չի հեռանա, իսկ մնացածը ժամանակավոր է: Եվ դու,

իհարկե, դեռ կաշխատես և լավ գործեր կստեղծես: Համենայն դեպս ես կուզենայի այդ: Ահա թե ինչու ցանկանում եմ, որ հոգով կայուն մնաս» (ԳԱ.Թ, Գուլակյանի արխիվ, № 609, թեր 70):

1 դեկտեմբերի— Շնորհավորական հեռագիր ուղարկեց Մ. Յայրովին, նրա ծննդյան 50-ամյակի առթիվ:

դեկտեմբերի— Դիմեց Երևանի քառերական ինստիտուտի դեկանարությանը, ապահովելու իրեն դասախոսական աշխատանքի լրիվ դրույժով: Հարցը լուծվեց 1954-ի հունվարի 1-ից: (Դիմումի տեխսոք պահպում է իր արխիվում, ԳԱ.Թ, № 487):

14 դեկտեմբերի— Սունդուկյանի անվան քառերանի երիտասարդ դերասանների ստեղծագործական երեկոն Արվեստի աշխատողների տանը: Ներկայացվեց հատված «Աճհանգիստ մարդիկ» բեմադրությունից:

19 դեկտեմբերի— «Դիմականանդեսի» 100-րդ ներկայացումը Սունդուկյանի անվան քառերանում:

31 դեկտեմբերի— Նրա մոտիկ ընկերոջ, Մուսկվայի Գեղարվեստական քառերնի դերասան Նիկոլայ Դորոխինի մահը: Հեռագրեց հանգուցյալի ամուսնուն, նոյն քառերնի դերասանուհի Սոֆյա Պիլավսկայային: (ԳԱ.Թ, Գուլակյանի արխիվ, № 541):

1954

7 մայիսի— «Կոմմունիստ» թերթում լույս տեսավ «Սունդուկյանի անվան քառեր և հայկական դասական ժառանգությունը» հոդվածը, որով խապան և անհիմն կերպով ժխտվում էր Ա. Գուլակյանի վաստակը Սունդուկյանի պիեսների բեմադրության ասաւածքում:

10 մայիսի— Թատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի երրորդ կուրսի (Գուլակյանի դասարան) «Պեպո» բեմադրության ավարտական փորձը: (ԳԱ.Թ, Գուլակյանի արխիվ, № 487):

3-22 Հուլիսի — Սունդուկյանի անվան քատրոնի հյուրախարերը Բագվում: Գովակյանի բեմադրություններից ներկայացվեցին «Խարաբալան», «Օրելլոն» և «Դիմակահանդեսը»: Զնայած դրան, նյուրախաղերի առթիվ լույս տեսած հոդվածներում նրա անունը ոչ մի անգամ չի հիշատակվում:

«Սովետական Հայաստան», 24 Հուլիսի

25 սեպտեմբերի — Կինոռեժիսոր Ա. Կեռոկովի հետ ավարտեց «Հայկական կինոհամերգ» սցենարը: Այդ ֆիլմում, որը էկրան բարձրացավ 1955-ին, կատարվում էին հատվածներ Ա. Գովակյանի բեմադրած «Անուշ», «Դավիթ Բեկ» և «Արշակ Երկրորդ» օպերաներից:

«Գրական թերթ», 1955, 8 ապրիլի

20 Հոկտեմբերի — Ավարտեց «Արեկիլ» («Հանուն երջանկության») բալետի լիբրետոն: Զեռագիրը պահվում է ԳԱԹ, Գովակյանի արխիվում:

13 դեկտեմբերի — Ներկա էր Երևանի պատանի հանդիսատեսի քատրոնի 25-ամյակին նվիրված երեկոյին:

25 դեկտեմբերի — Ռու. Հաջիբեկով՝ «Արշին մալ-ալան». Պարոնյանի անվան Երաժշտական կոմեդիայի քատրոնում (ըստ Մոսկվայի Ստանիսլավսկու և Նեմիրովիչ-Դանչենկոյի անվան քատրոնի 1953-ին բեմադրած տարբերակի): Թարգմանիչ Սուրեն Սարովիսանյան, բեմադրիչ Ա. Գովակյան, նկարիչ Գրադեն Գևորգյան:

1955

24 Հունվարի-15 փետրվարի — Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի շուրջորդ կուրսի ուսանողների հետ ուսումնարտադրական գործողման մեջ էր Մոսկվայում:

11 մարտի — «Անուշ» օպերայի 500-րդ ներկայացումը Սպիտակարյանի անվան թատրոնում:

«Սովետական Հայաստան», 11 մարտի

1 հունիսի — Նշանակվեց Երևանի Ստանիսլավսկու անվան ոռոսական թատրոնի գլխավոր ռեժիսոր:

6-7 հունիսի — Երևանի գեղարվեստարատերական ինստիտուտի ղերասական ֆակուլտետի Գուլակյանի կուրսի դիպլոմային առաջին ներկայացումը. Ա. Աբրուզով՝ «Տաճա»: Բեմադրիչ Մ. Կոստանյան, նկարիչ Գ. Գևորգյան:

8-9 հունիսի — Գեղարվեստարատերական ինստիտուտի ղերասական ֆակուլտետի դիպլոմային Երկրորդ ներկայացումը՝ «Պեպո»: Բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Հրաչյա Մեհրինյան:

11 հունիսի — Գեղարվեստակարատերական ինստիտուտի ղերասական ֆակուլտետի դիպլոմային Երրորդ ներկայացումը. Լոպե ղեկավար՝ «Ոշխարի աղբյուրը»: Բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Գ. Գևորգյան, պարեր Զ. Մուրադյանի: Կրնելից հունիսի 14-ին:

15 հունիսի — Գեղարվեստարատերական ինստիտուտի ղերասական ֆակուլտետի Ա. Գուլակյանի դեկանարած կուրսն ավարտեցին Լևոն Թուլսիկյանը, Շահում Ղազարյանը, Սերգեյ Գևորգին, Թերեզ Գրիգորյանը, Ժամեն Մամին Մարյանը, Անժել Էհրամշյանը և ուրիշներ:

12 հուլիսի — Գրիգոր Բոյազիկի գեկուցումը Սուեդուկյանի անվան թատրոնի «Ընտանիք» բեմադրության մասին:

1 սեպտեմբերի — Գեղարվեստարատերական ինստիտուտի ղերասական ֆակուլտետի Երկրորդ կուրսը բաժանվեց Երկու խմբի. մեկի դեկանար Վարդան Անեմյանն էր, մյուսին՝ Արմեն Գուլակյանը:

8 նոյեմբերի — Ա. Շիրվանզադե՝ «Պատվի համար». Ստանիսլավսկու անվան ոռոսական թատրոնում: Թարգմանիչ Ա. Հովհաննիսյան, բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչներ Գ. Գևորգյան և Գ. Ասատրյան:

Այդ առիվ Ա. Գուլակյանը գրեց մի հոդված, որը լրիս շահսավ: Թերում են բաղվածարար. «Նշանակալից է այն, որ «Պատվի համար» ոռոսական թատրոն առաջին անգամ է ներկայացվում, այդ իսկ պատճեռով հասկանալի է այն մեծ հուզումը, որ համակել է ոռոսական թատրոնի ողջ ատեղծագործական

կազմին ոչ միայն առաջին ներկայացման օրը, այլև պիեսի բեմադրական աշխատանքի ողջ ժամանակաշրջանում, և դա օրինական է. չէ՞ որ մայրաքաղաքի հասարակությանը բազ ծանոր այդ կերպարները առաջին անգամ են մարմարվում ուստի արտիստների կողմից և այն էլ երևանում, որտեղ նրանք իրենց բեմական հրաշալի պատմությունն ունեն շնորհիվ Գ. Սունդուկյանի անվան բատրոնի դերասանների տաղանդավոր կատարման: Մուս դերասանները խոր հարգանք, սեր, ուշադրություն և զերմուրյուն ցուցաբերեցին հանդեպ հայ ժողովրդի մշակույթի կորողներից մեկը և նրանց համառ, քրտնազան աշխատանքը պասկից հաջողությամբ: Արդեն հինգ ներկայացում է տրվել, և մենք հիմք ունենք ասելու, որ «Պատվի համարը» մեծ գոհունակությամբ է ընդունվում ուստի և հայ բատերասեր հասարակության կողմից: Մուս դերասանները, հարազատ մնալով հեղինակին, զեղարվեստական համոզիչ կերպարներ ստեղծեցին. նրանք կարողացան ստեղծագործական շատ դժվարություններ հաղթահարել և «Պատվի համարում» պատվով դուրս եկան: 1956 թվականին Մոսկվայում կայանալիք հայ արվեստի և գրականության տասնօրյակին մասնակցելու է նաև Երևանի Ստանիլավսկու անվան բատրոնը: Մեր ստեղծագործական կոլեկտիվը հպարտ է նրանով, որ առաջին անգամ իրեն է վիճակում ուղարկեն լեզվով ծանոքացնելու Մոսկվայի հասարակությանը Շիրվանզադի գլուխգործոցներից մեկի հետ և լիահույս է, որ այդ բեմադրությունը նույնանման շերմ ընդունելություն կգտնի այնտեղ, և «Պատվի համարը» այնուհետև իր տեղը կունենա այլ բարողների խաղացանկում»:

I. Սամվելյանի բատերախոսականից. «Հայ գրամատուրգիայի գոհարներից մեկի սոսկական ծանոքացումը շի եղել բեմադրության հեղինակ Ա. Գուլակյանի հետապնդած նպատակը: Նա ձգտել է նոր հնչողություն տալ բեմական մեծ պատմություն ունեցող դրամատիկական երկին: Ի տարբերություն հայ բատրոնում հաստատված տրադիցիայի, Ա. Գուլակյանն իր բեմադրության հիմնական բեման դարձել է ոչ միայն էլիզբերքների աշխարհի անխուսափելի դատապարտվածությունը, այլև ընդգծել է այդ անքարոյական հասարակության դեմ բողոքող, նրա դեմ պայմանական փորձող երիտասարդների մերկացնող պարօսք: Եթե էլիզբերքների, բագրատների և մյուսների ֆենադատությունը պիեսում ունի, այսպես ասած, ինչնամերկացման բնույթ, բա-

նիոր նրանց մասին խոսում են նրանց իսկ գործողություններն ու մտմերը, ապա ներկայացման մեջ ոեժիսորն ու դերակատարները օքարյանին և Մարզարտին տվել են այն ակտիվ, հարձակողական ուժը, որն այնքան հաճախ սպակասում է կլասիկայի դրական պիետնածներին։ Հակաէլիզբարյանական բանակի ուժերի ընդգծումը հանգեցրել է այն բանին, որ դրամայի հակամարտ ուժերի բախումը ավելի է սրված, և բեմադրության լավագույն կտորներում (ինչպիս, օրինակ, շորորդ գործողության մեջ) հնչում է դրամատիկական մեծ ինտենսիվությամբ։ Մրանով Գովակյանը հստակորեն տեղ է հասցրել իր այն միտքը, որ երե զորեղ են էլիզբարյանները և նրանց արքանյակները, ապա պայքարի, անհաշտվողականության խոշոր մղումով են բռնված պիեսի նաև դրական դեմքերը։ Եվ երե սրանք չեն հաղորդ, ապա դա նրանց անհատական բոլորությունից չէ կամ պայքարի հետևողական կամք ու պատրաստակամուրյուն շունենալուց» («Ավանգարդ», 9 փետրվարի):

Ներկայացումը բարձր գնահատեցին նաև բատերախոսներ Յա. Խաչիկյանը («Կոմմունիստ», 2 դեկտեմբերի) և Ա. Հովհանյանը («Սովլետական արվեստ», 1956, № 2):

26 դեկտեմբերի— Սունդուկյանի անվան բատրոնում նշվեց Ամո-Խարագյանի ծենյան 75-ամյակը։ Ա. Գովակյանը հորելյարին հղեց շնորհալորական հեռագիր։ «Մեծ ու անգնահատելի են Ձեր ծառայությունները ինչպես նախահեղափոխական ժողովրդական բատրոնի ստեղծման, այնպես էլ սովետական շրջանում մայրենի բեմի զարգացման գործում։ Դուք բատերական շատ ու շատ աշխատաղների առաջին ուսուցիչը և զաստիարակն եք հանդիսացել։ Ձեր երեմնի աշակերտներից՝ Արմեն Գովակյան» (Գ.Ս.Թ, Գովակյանի արխիվ, № 520):

1956

25 Հունվարի— «Արշալույսին» պիեսը Կիրովականի Արելյանի անվան բատրոնում։ Բեմադրիչ Հ. Կարապետյան։

«Կալծ», 10 փետրվարի

29 Հունվարի — Տ. Չոխաշյան՝ «Արշակ Երկրորդ»։ Սպենդիարյանի անվան բատրոնում։ Լիբերտոն Ա. Գոլակյանի։ Բեմադրիչ Վ. Վարդանյան։

«Սովորական Հայաստան», 6 մարտի

5 փետրվարի — Ն. Պողոսին՝ «Կրեմլյան կուրանտներ»։ Ստանիսլավսկու անվան ոռոսական բատրոնում։ Բեմադրիչ Ա. Գոլակյան, նկարիչ Վ. Իվանով։

Բ. Հարուրյունյանի բատերախոսականից։ «Բեմադրող ուժիսոր Ա. Գոլակյանը, ստեղծագործական կոլեկտիվը «Կրեմլյան կուրանտներ» ներկայացման մեջ կառողացել են խոսափել մի կողմից՝ արտաքին պարուսից, մասներայնուրյունից, կերպարները գաղափարների ձայնափողեր դարձնելու վանդակից, մյուս կողմից, շշեղվելով կյանքի նշմարարյունից, առօրյա կյանքի վերաբարուրյունից՝ շեն ընկել կենցաղայնուրյան մեջ։ Ներկայացումը սոգորված է ոռմանափական օպտիմիստական բնդիմանրացնող շնչով։ Բեմադրուրյան մեջ աստիճանաբար, պատմական մեծագույն ուռուցիչն իրադարձուրյունների ֆոնի վրա տեղի է ունենում մարդկանց աշխարհայացքի զարգացումը, վերափոսումն ու կազմակերպումը։ Ստեղծված են ցայտուն անհատականուրյամբ օժտված կերպարներ, պարզ, անելեղ, անմիջական փոխարարերուրյուններ, որոնց բնականուրյանն ու նշմարարյանը հանդիսանեար լիովին հավատում է։ Ներկայացման մեջ զտնված են բազմաթիվ հետաքրքիր մանրամասներ, որոնք ստեղծում են համապատասխան մքնորոտ, գործող անձանց բնակուրուրյունները դարձնում են ավելի մարդկային, գունեղ ու կենդանի, երանց օրգանապես կապում են ունալ իրականուրյան հետ։ Բեմադրուրյունը դիմամիկի է, միզանցենները մեծ մասամբ պատկերավոր և իմաստավորված են։ Սատիրական միջոցներով մերկացնելով բացասական կերպարները, ցայտուն գծերով վեր հանելով երանց էուրյունը, թեմադրողը շի հեռացել ու ախիստական արվեստի շրջանակներից, այլ ուժեղացրել է ներկայացման սոցիալական արժեքն ու դաստիարակչական նշանակուրյունը» («Սովորական Հայաստան», 10 մարտի)։

20 փետրվարի — Շնորհավորում է Ա. Խորավային, երա ծրներյան 70-ամյակի առքիվ։ «Իմ սիրելի վաղեմի ընկեր և բարեկամ... Դու են անխոնց, բառաջան և ազնիվ աշխատանքով մեծ ծառայուրյուն ես մատուցել հայ բարոնի զարգացման պատվավոր գործին» (ԳԱԹ, Գոլակյանի արխիվ, № 501)։

29 ապրիլի — Շնորհավորում է Ա. Խորավային, երա ծննդյան 60-ամյակի առքիվ։ (ԳԱԹ, Գոլակյանի արխիվ, № 562)։

6 մայիսի — Մ. Օվչիննիկով՝ «Երշադարձ»։ Ստանիսլավսկու անվան ոռո-

սական բատրոնում: Թեմադրիշ Ա. Գոլակյան, նկարիչներ Շ. Հակոբյան և Ա. Շահարյան:

21 մայիսի — Ա. Տիգրանյան՝ «Անուշ». Սպէնդիարյանի անվան բատրոնում: Թեմադրիշ Ա. Գոլակյան, դիրիժոր Ռ. Ստեփանյան, նկարիշ Ա. Միրզոյան, պարերը Ա. Ղարիբյանի: Ա. Գոլակյանը նույն բատրոնում օպերան բեմագրեց շորորդ անգամ: Ներկայացումը գոյատեսեց շուրջ տաս տարի: Երբ բեմադրությունը ցուցադրվեց Բագվում, երածշտագես կլմիրա Արասովան գրեց. «Ներկայացումը հուզում է զգացմունքների խստաշունչ նշմարտացիությամբ և Ա. Տիգրանյանի երածշտուրյան կերպարային կառուցվածքի մեջ խորապես բափանցելու կարողությամբ: Նույր հոգերանուրյամբ աշքի ընկննող հեռուսների անձնական դրաման և կիեցաղի բազմակողմանի ցուցադրումը, միահյուսվելով, կազմում են մի անխախտելի ամբողջուրյուն: Թեմական գործողությունը, պարզ ու նկուն զարգանալով, աստիճանաբար հասնում է ողբերգական լուծման, որը և ձեռք է բերում գեղարվեստական խոչոր ընդհանրացման ուժ: ...Երեանի օպերային բատրոնի տաղանդավոր կոլեկտիվն իր ստեղծած միասնական շնչի բեմադրությամբ ունկնդիրներին է հասցնում նշանավոր հայ կոմպոզիտորի լավագույն ստեղծագործուրյան հումանիստական պարուր՝ հանդես բերելով կատարողական վարչետուրյան բարձր կոլտուրա» («Վայկա», 1962, 27 մայիսի):

24 մայիսի — Հայ արվեստի և գրականության տասնօրյակի մասնակիցների հետ մեկնեց Մոսկվա:

«Մովսեսկան Հայաստան», 26 մայիսի

1-10 Հունիսի — Հայ արվեստի և գրականության տասնօրյակը Մոսկվայում: Գոլակյանի բեմադրություններից ցույց տրվեցին «Անուշ» (Մեծ բատրոն, հունիսի 4-ին, 10-ին, 11-ին—ծրագրից դուրս), «Պատվի համար» (Վախրանգովի բատրոն, հունիսի 1-ին, 3-ին, 8-ին և 10-ին), «Կրեմլյան կուրանտներ» (Վախրանգովի բատրոն, հունիսի 2-ին, 5-ին, 6-ին, 10-ին), «Շշադարձ» (Վախրանգովի բատրոն, հունիսի 3-ին, 7-ին, 9-ին):

Բ. Զախարվայի հոդվածից. ««Պատվի համար» պիեսը բեմադրող Ա. Գոլակյանին հաջողվել է նիշտ բացահայտել դրամայի զաղափարական բովանդակությունը և ստեղծել մի ներկայացում, որը հագեցած է անտանելի ծանր, հեղձուցիչ այն մքնուրուով, որ ներհատուկ է մի միջավայրի, որ ամեն ինչ բունավորված է շահուրի ձգումամբ» («Պրավда», 9 հունիսի):

6 Հունիսի — Ելույր ունեցավ Համառուսական բատրական ընկերությունում, Երեանի Ստանիսլավսկու անվան բատրոնի տասնօրյակային ներ-

կայացումների բնարկմանը: Զեկուցեց Վ. Պիմենովը: Ելույթ ունեցան Ս. Բիրմանը, Ն. Չուչինը, Օ. Կերելը, Վ. Կոմիսարժեսկին:

30 Հունիսի— Հայ արվեստի և գրականուրյան տասնօրյակի եզրափակիչ համերգը Մեծ քատրոնում: Ռեժիսորներ Ս. Գուլակյան և Ռ. Սիմոնով:

«Правда», 14 Հունիսի

18-25 Հունիսի— Սպենդիարյանի անվան քատրոնի հյուրախաղերը Լենինգրադում: Գուլակյանի բեմադրուրյուններից ներկայացվեց «Անուշը» (հունիսի 19-ին):

«Вечерний Ленинград», 20 Հունիսի

27 Հունիսի— ՍՍՀՄ Գերագույն սովետի ճախազահուրյան հրամանագրով պարզեատրվեց «Պատվո ճշան» շբանշանով:

14 Հուլիսի— Համամիուրենական ռադիոն Մոսկվայից հաղորդեց Մ. Օլջենիկովի «Ծրադարձ» պիեսը Ա. Գուլակյանի բեմադրուրյամբ, Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական քատրոնի դերասանների կատարմամբ: (ԳԱԹ, Գուլակյանի արխիվ, № 568):

19 Հուլիսի— Դիմեց Արվեստի վարչուրյանը Ստանիսլավսկու անվան քատրոնի գլխավոր ռեժիսորի պարտականուրյուններից ազատվելու համար: Դիմումը կրկնեց օգոստոսի 29-ին:

1 սեպտեմբերի— Ազատվեց Ստանիսլավսկու անվան ռուսական քատրոնի գլխավոր ռեժիսորի պաշտոնից: Նրան փոխարինեց Լ. Քալանքարը:

1957

15 մարտի— Հեռագրով շնորհավորեց Յոլակ Ամերիկյանի ծննդյան 70-ամյակը: (ԳԱԹ, Գուլակյանի արխիվ, № 496):

22 սեպտեմբերի— Հայկական քատերական ընկերուրյան պատվերով գրեց «Ոգեշնչման անսպառ աղբյուր» հոդվածը «Վ. Ի. Լենինի կերպարը հայ բեմում» ծողովածուի համար, որը լրաց տեսակ նույն տարում: Հոդվածի բրենագիրը պահպում է ԳԱԹ, հեղինակի արխիվում (№ 449):

10 Հոկտեմբերի— «Արշալույսին» պիեսը Ստեփանակերտի Գորկու անվան քատրոնում: Բեմադրիչ Կարեն Ալիքյան:

14 Հոկտեմբերի— Ելույթ ունեցավ Հայկական քատերական ընկերուրյունում՝ Հասմիկի մահվան 10-րդ տարեդարձին նվիրված հուշ-երեկոյում:

17 Հոկտեմբերի— Արվեստակից ընկերոց՝ Սպենդիարյանի անվան քատ-

րոնի գլխավոր դիրիժոր Միքայել Թավրիզյանի մահը:

23 Հոկտեմբերի — Շնորհավորեց դերասանութիւն Նվարդ Ալիխանյանի ծննդյան 60-ամյակը: (ԳԱԹ, Գուլակյանի արխիվ, № 494):

25 Հոկտեմբերի — Ելույր ունեցավ Լենինականի Մոռավյանի անվան քառոնի իր «Օրեր, մարդիկ անմոռաց» պիեսի և բեմադրուրյան հնեարկման՝ ավարտական փորձից հետո:

26 Հոկտեմբերի — Ա. Գուլակյան՝ «Օրեր, մարդիկ անմոռաց» Լենինականի Մոռավյանի անվան քատրոնում: Բեմադրիչ Ա. Գուլակյան, նկարիչ Գ. Գևորգյան, կոմպոզիտոր Ա. Բաբաջանյան:

«Կոմմունիստ», 4 դեկտեմբերի
«Բանվոր», 10 դեկտեմբերի

29 Հոկտեմբերի-7 նոյեմբերի — Հայաստանի դրամատիկական և երաժշտական քատրոնների ստուգատեսր Երևանում, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 40-ամյակի առթիվ: «Օրեր, մարդիկ անմոռաց» բեմադրուրյան համար, որը նոյեմբերի 2-ին ճերկայացվեց Ստանիլավսկուու անվան քատրոնի դահլիճում, Ա. Գուլակյանն արժանացավ երրորդ կարգի դիպլոմի:

«Սովետական արվեստ», № 12, էջ 22—24

18 նոյեմբերի — Հայֆիլիարմոնիայի փոքր դահլիճում մասնակցեց Հայաստանի գրականության և արվեստի աշխատողների հավաքին:

«Սովետական գրականություն», № 12, էջ 3—10

10 դեկտեմբերի — Նամակ ուղարկեց «Սովետական Մեծ հանրագիտարանի» արվեստի խմբագրուրյան վարիչ Օ. Ն. Կայրալովային, գրելով. «Լույս է տեսել Հանրագիտարանի 50-րդ հատորը, որի 626-րդ էջում քարեկվում են հայ քատրոնի առաջնակարգ գործիչները. հայ ուժիտութերի շարքում (Քուրշալյան, Քալեքար, Անեմյան) ես շկամ: Զանդրադառնալով մեր այդ նշանավոր ուժիտութերի գործունեության գնահատականին, ես գտնում եմ, որ անարդարացի է, միտումնավոր և ճիշտ չէ ուժիտոր Արմեն Գուլակյանի անվան քացակայությունը, մի ուժիտորի, որի կյանքն ու գործունեությունը 40 տարիների ընթացքում սերտորեն կապված է եղել սովետական քատրոնին առհասարակ և սովետահայ բեմարվեստին. մասնավորապես» (ԳԱԹ, Գուլակյանի արխիվ, № 557):

24 դեկտեմբերի — Հեռագրով շնորհավորեց քատերական-գրական գործիչ

Մամիկոն Գևորգյանի ծննդյան 80-ամյակը. «Հայկական քատրոնը, երա աշխատողները, նոյն բվում և ես, պատական ենք Զեզ՝ մեզ տված լավ ու արժեքավոր խորհուրդների համար» (Գ.Մ., Գովակյանի արխիվ, № 502):

1958

13 կետրվարի— «Սովետական Հայաստան» լրագրում հրապարակեց «Ե. Բ. Վախրանցով» հոդվածը՝ արվեստագետի ծննդյան 75-ամյակի առթիվ: Զեղոազիրը պահվում է Գ.Մ., Գովակյանի արխիվում (№ 442):

3 մայիսի— Շ. Գունը՝ «Ֆառատ». Սպեճիարյանի անվան քատրոնում: Բեմադրիչ Ա. Գովակյան, դիրիժոր Ռ. Ստեփանյան, նկարիչ Կ. Մինասյան, պարեր Զ. Մուրադյանի:

Մ. Բերկովի բառերախոսականից. «Նրբուեն զգալով օպերայի առանձնահատկուրյունները և դրանք մարմանավորելով իր բեմադրուրյան մեջ, Ա. Գունչակյանը միաժամանակ աշխատել է օպերայի լիբերոյի սահմաններն ընդարձակել, շունչ տալ երան Գյորեի ողբերգուրյան օգտագործմամբ: Ճիշտ չէր լինի, եթե բեմադրողը տարվեր օպերան Գյորեի «Ֆառատին» չափից ավելի մոտեցնելու խնդրով, այդ դեպքում օպերային ներկայացնում չէր ստացվի, բեմը կիսակադրվեր երաժշտուրյանը: Գովակյանն այդ արել է բույլատրելի սահմաններում» («Կոմմոնիստ», 25 մայիսի):

7 մայիսի— Իր կուրսի հետ մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու Թատերական ինստիտուտների համամիութենական ստուգատեսին:

19 մայիսի— Երեանի գեղարվեստարատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետը Մոսկվայում, ստուգատեսի առթիվ, ներկայացրեց Գ. Սունդուլյանի «Կտակը» (ցերեկը, Ա. Գովակյանի դասարան) և Ա. Շիրվանգաղեի «Չար ոգին» (Երեկոյան, Վ. Անեմյանի դասարան), որոնք արժանացան առաջին կարգի դիպլոմի:

«Կտակ» բեմադրուրյան առթիվ ուժիուր Ի. Ռապովուրաք գրեց. «Գովակյանի ներկայացման մեջ դպրոցի բոլոր պահանջներն առկա են. ուսանողներից ամեն մեկն իր հնարավորուրյունների շափով ստեղծել էր կենցածի, հավաստի, ինքնատիպ կերպար, երանց բեմական կյանքին հետաքրիր էր հետեւել գործադրուրյան բնրացնում, հանելի էր հիշել երանց, իբրև նո հանապարհին հանդիպած իրական մարդու... Այստեղ առկա է ուժիուրական հասուն միտքը, պիեսի ժամերի՝ իբրև սատիրական կոմեդիայի ժամերի, սուր լուծում, առկա է դերասանական խաղի միասնական եղանակ, որ անհրաժեշտ է արվագայլ ժամերին և, վերջապես, առկա է ուժիուրի ձեռագիր՝ արտահայտիչ մա-

տուցված կերպարներով, հետաքրքիր միզանսցեններով և, որ հատկապես գրնահատելի է՝ խկալան հումորով: ...Այն հանգամանքը, որ պիեսը թեմ է բարձրացել թերեւ առաջին անգամ, պիես է ուժիութիւն կուրսի դեկավարի հատուկ ծտայուրյունը համարել» («Սովետական արվեստ», № 7, էջ 16—17): նոյն նեղինակի «Զարգացնելով տրադիցիաները» հոդվածը տպագրվեց «Советская культура» թերում, մայիսի 27-ին:

Պրոֆեսոր Գևորգ Գոյանը գրեց. «...Ուսանողների այդ խմբի դեկալար, ուժիուր-թեմադրող Ս. Գոլակյանը ընտրել էր կատակերգության հետաքրքրական թեմական մեկնարանուրյուն, բայ իս, դրամատուրգի մտահղացմանը միանգամայն համապատասխան: Երիտասարդ դերասանների խաղը խսորեն ունախստական էր, թե որոշ չափազանցված ընդգծումով, որ հասնում էր գրութեսկի: Նոյնպիսի բնույրի էին նաև ուժիուրական միզանսցենները: Իրենի և կենցաղային մանրամասների համապատասխան «օգտագործումը» դրանց հաղորդում էր սիմվոլիկ նշանակուրյուն, պատկերավոր ձևով արտահայտելով պիեսի հասարակական-սոցիալական բովանդակությունը: Ներկայացնում սկսվում էր այսպես. դահլիճում տիրող մրույրունը անսպասելի նեղում է նախարեմի կենտրոն ընկերության լույսի հատու նառագայրով: Թերեակի ետ տարված վարագույթների արանեում հայտնվում է պարանով լավ կապված մի սեղուկ: Աշից և ձախից դեպի սեղուկն են ձգվում անտեսանելի մարդկանց ձեռքեր, որոնք բռնել են սպո ժապավեններով զարդարված մահապակդիպչում էր: Պասկները նեղենով սեղուկին, ձեռքերը սկսում են շշափել պարանը, դիպչում են իրար և դաժան զոտեմարտ է սկսվում: Մի ակերարք հանգչում է լրւար, ապա հանդիսատեսի առջև հայտնվում է նոր վախճանված հարուստ վանառական և հայտնի բարեկործ Դավիթ Ալուբյանի տան պայծառ լուսավորված հյուրատենալիք: Անտեսանելի «չորրորդ» պատի մոտ, հախարեմին մոտիկ դրված է այդ նոյն կենցած, կտակը պարունակող սեղուկը, որ հնչում է իրեւ ներկայացման բնարան: Հարեւան սեղակում նոզեհանգիստ են տալիս հանգույցյալի պատվին: Մարդիկ, պասկները ձեռքներին, գոռողաբար ներս են մանում, իսկ նայելով նվիրական սեղուկին: Իսկ հանդիսականը, որ հենց նոր էր տեսել պայմանի մեջ մտած շղածիկ ձեռքները՝ սեղուկի ֆոնի վրա, իրեն լավ հաշիվ է տալիս նոզեհանգստի եկած այդ մարդկանց խկական զգացմունքների և խոների մասին: Անալիստական-կենցաղային բատրոնի մարդամոլները ուսերը բրդիկով կասեն. ի՞նչ իմաստ ունի ներկայացնումը սկսել կրտակի սեղուկով, երբ այդպիսի «ներածական» գրամատուրգի մոտ չեմ գտնի: Անշուշա, կարելի էր սեղուկով զբաղվել մի ժիշ ավելի ուշ, երբ տուն էր ներխուժում հանգույցյալի կրտսեր եղբայրը՝ իր բաժին ժառանգույթունը կորցնե-

լու վախից համարյա թե խելքը բոցրած: Իմ կարծիքով, մենք իրավունք չունենք խաճարելու ռեժիսորին յուրովի պայքարելու պիեսի բաղցր-մեղցր մատուցման դեմ:

...Ուսման արդյունքների մասին կարե կասեմ: Երիտասարդ կատարողները կարողանում են ոչ միայն խոսել, այլև լսել բեմում: Խոկ երկրորդը շատ պվելի դժվար է առաջինից: Լավ բատրոնում, ինչպես կյանքում, լսողը մասնակից է դիմացին ոչ ավելի պակաս ակտիվ, քան խոսողը: Բայց անհրաժեշտ է դա կարողանալ հաղորդել նուրբ խաղով: Այդպիսին էր, օրինակ, այն տեսարանը, որտեղ պատկերվում էր, թե ինչպես ենչոն (Ռ. Ամիրզույլյան)՝ վախճանված հարուստի կառավարիչը, լուս լսում է հանգուցյալի եղբոր՝ Անտոնի (Ա. Զիգարխանյան) երկար հառը: Նա նոր տերն է, որին չի կարելի հականառել, բայց ենչոն չի ուզում խախտել հանգուցյալի կամքը, որ իրեն է վստահել կտակը պարունակող սեղուկի բանալին: Անտոնի, չհամարձակվելով ուղղակի պահանջելու, որ բացեն սնդուկը, միաժամանակ բարբաջնով բարոյականության մասին, ցանկանում է լուսկաց կտակակատարից որևէ կերպ կորցել բանալին: Թեև շարունակ Անտոնին է խոսում, հանդիսականը ոչ պակաս հետաքրքրությամբ է հետևում ենչոյի խաղին» («Կոմմունիստ», 1 հունիսի):

16-17 Հունիսի— Գեղարվեստարատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի Գովակյանի կուրսի դիպլոմային առաջին ներկայացումը. Դ. Սունդուկյան «Կտակ»: Թեմադրիչ Ա. Գովակյան, նկարիչ Մ. Պետրոսյան:

18-19 Հունիսի— Գովակյանի կուրսի դիպլոմային երկրորդ ներկայացումը, Ա. Օստրովսկի՝ «Անմեղ մեղավորները»: Թեմադրիչ Ա. Գովակյան, նկարիչ Մ. Պետրոսյան:

20-21 Հունիսի— Գովակյանի կուրսի դիպլոմային երրորդ ներկայացումը. Ն. Ռախմանով՝ «Անհանգիստ ծերություն»: Թեմադրիչ Ա. Գովակյան, նրանք պարբեր Մ. Պետրոսյան:

22 Հունիսի— Գեղարվեստարատերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի Գովակյանի կուրսն ավարտեցին Արմեն Զիգարխանյանը, Հենրիկ Հովհաննեսյանը, Օրար Տեր-Հովհաննեսյանը, Գալյա Նովենցը, Ալեքսանդր Քոչարյանը, Ռոբերտ Եղյանը, Մարիաննա Շահվերդյանը և ուրիշներ:

17 օգոստոսի— Ավարտեց «Մարոն կամ Հույսը սրտներում» օպերայի իրենուն ճիշտված բաղակացիական կոիվներին:

30 օգոստոսի— Մոսկվայի Մեծ բատրոնի կոլեկտիվը ժամանեց Երևան: Հյուրախաղերը տեղի ունեցան սեպտեմբերի 2-10-ը: Կայարանում ողջույնի խոսք ասաց Ա. Գովակյանը: Այդ ելույթի բնագիրը՝ «Մեծ բատրոնի մեծ ար-

վեստին բարի գալուստ» վերեագրով, պահվում է ԳԱԹ, Գուլակյանի արխիվում (№ 454): «Սովետական Հայաստան թերում օգոստոսի 30-ին տպագրվեց նրա «Երախտագիտության զգացմունքով» հոդվածը:

1 սեպտեմբերի — Սկսեց պարապել Գեղարվեստա-քառերական ինստիտուտի դերասանական ֆակուլտետի նոր կուրսի հետ:

11 սեպտեմբերի — Նշանակվեց Սպենդիարյանի անվան քառորդի գլխավոր ռեժիսոր:

23 Հոկտեմբերի — Սպենդիարյանի անվան քառորդում նշվեց Միքայել Թավրիզյանի մահվան տարեկանը: Այդ առրիվ Գուլակյանը գրեց «Եմ բարեկամը» հոդվածը, որը լույս տեսավ քառորդի պատի թերում: Բնագիրը պահվում է ԳԱԹ, Գուլակյանի արխիվում (№ 437): Եւրուս ենք հոդվածն ամբողջությամբ. «Եմ լավագույն բարեկամի, երաշալի մարդու և ոգեշնչել արվեստագետ Միքայել Թավրիզյանի մասին շատ բան կարելի է ասել: Նա մեծ եւենոյր էր մեր երածշտական և քատերական կյանքում: Իր տաղանդավոր և արգասավոր գործունեությամբ Թավրիզյանը հարսացրեց մեր օպերային քատերական կուլտուրան ոչ միայն իրեւ դիրիժոր, այլև ռոպես նույր և խորազգաց երաժշտ, որը մեր կումպոզիտուրներից շատերին է ոգեշնչել ստեղծելու ազգային օպերա կամ բալետ: Այսօր ուզում եմ նշել այդ փայլուն վարպետի բնավորության մի արտասավոր յուրահատկությունը: Նա տիրապետում էր իր աշխատանքային բոլոր ընկերներին՝ լինի կոմպոզիտոր, ռեժիսոր, նկարիչ, մեներգիչ, երգչախմբի, նվազախմբի կամ բալետի արտիստ, նույնիսկ վարչական աշխատող, ոգեշնչելու բացադրիկ կարողությամբ: Նա գործընկերներին վարակում էր իր նպատակալացությամբ, մտքերով, ստեղծագործական հիմքանի երեակայությամբ: Նա անմնացորդ այրվում էր աշխատանքում, ապրում էր միայն ստեղծագործությամբ և, շնորհիվ մարդկանց իր ենեկից տանելու այլ անգին կարողության, դառնում էր ողին այն գործի, որ ձեռնարկում էր:

Կյանքումս արվեստի բազմարիվ մարդկանց եմ հանդիպել, բայց բանատեղծական այդքան խոր հոգու և ազենության տեր, իր նկատմամբ այլքան խստ ու պահանջկուտ մարդու շեմ տեսել: Ճիշտ է, նա իիշ է բեմադրել և իիշ է նվազախումբը դեկավարել, բայց նրա յուրաքանչյուր աշխատանք մեծ իրադարձություն էր մեր հանրապետության կյանքում, որովհետ ստեղծում էր նորը, ինհանակապր արվեստում և դրանով նպաստում էր մեր մշակույթի անբնական աշխատական առաջին հանդիպումը կյանքել է 1938-ին: Ես շը նորհակալ եմ իմ հակատագրից այդ հանդիպման համար: Այդ ժամանակի բնագագում բազմարիվ այլեալ բնույթի դեպքեր են եղել մեր կյանքում,

Սեր ստեղծագործական առաջին հանդիպումը կյայցել է 1938-ին: Ես շը նորհակալ եմ իմ հակատագրից այդ հանդիպման համար: Այդ ժամանակի բնագագում բազմարիվ այլեալ բնույթի դեպքեր են եղել մեր կյանքում:

բայց ոչինչ և ոչ մի բան սավեր չի գցել մեր համազործակցության վրա: Մի-
՞այել Թավրիզյանը ապրում է և կապրի բոլոր նրանց սրտեռում, որոնք բախտ
են ունեցել աշխատել այդ մեծ արվեստեափեափի հետ»:

3 նոյեմբերի — Մ. Շատրով՝ «Հանուն հեղափոխության», Երևանի պա-
տասճի հանդիսատեսի քատրոնում: Թեմադրիչ Ա. Գոլակյան, նկարիչ Գ. Գե-
վարզյան:

«Սովորական Հայաստան», 31 հոկտեմբերի

11 նոյեմբերի — Նշանակվեց Սպենդիարյանի անվան քատրոնի դիրեկ-
տոր, միաժամանակ մնալով զիսավոր ոեմիսորի պաշտոնում:

25 դեկտեմբերի — Ավարտեց «Արի համով զովուդ արա կամ Տհանն ու
հանելին» կատակերգությունը: Զեռագիրը պահվում է ԳԱԹ, Գոլակյանի ար-
խիվում:

1959

2 գիւտրվարի — Շնորհավորեց Սունդուկյանի անվան քատրոնի բեմադրա-
կան մասի վարիչ Սերգեյ Դալամիշչյանը ծննդյան 50-ամյակը. «Դու մեծ ա-
վանդ ունես ներդրած սովորական հայ քատրոնի ներկայացումների ձևակոր-
ման կուլտուրայի գործում: Դու վատահելի և հավատարիմ անձնավորություն
ես հանդիսացել ոեմիսորներիս համար և այդ է պատճառը, որ ու նվիրական
աշխատանքով, համբերատարությամբ, համեստ ու հանգիստ բնալորությամբ
սիրելի ես դարձել շատերի համար» (ԳԱԹ, Գոլակյանի արխիվ, № 509):

7 գիւտրվարի-8 մարտի — Մոսկվայի, Լենինգրադի և Կիևի քատերա-
կան ինստիտուտների ոեմիսորական ֆակուլտետում ուսումնական գործի դր-
վագծի հետ ծանորանալու համար գտնվում էր գործուղման մեջ:

22 ապրիլի — Հեռագրով շնորհավորեց Սրամ Խաչարյանին՝ նրան Լե-
նինյան մրցանակ շնորհելու առիվ. «Թանկագին բնկեր, ու երաշալի տա-
ղանդի երկրպագուներ ցանկանում ենք ու փայլում ձիրքի հետագա ծաղկում»
(ԳԱԹ, Գոլակյանի արխիվ, № 518):

17 մայիսի — Զ. Վերդիի «Օրելլո». Սպենդիարյանի անվան քատրոնում:
Ա. Մարգրիչ Ա. Գոլակյան, դիրիժոր Յու. Գալյան, նկարիչ Ա. Միրզյան, պա-
տերը Զ. Մուրադյանի: Օպերան ոեմիսորը բեմադրում էր Երկրորդ անգամ:

Ա. Ռոկանյանի քատերախոսականից. «Խոսելով «Օրելլոյի» բեմական
պարմինավորման մասին, պետք է նշել Գոլակյանի, որպես բեմադրողի, ոեմի-
սորական մանրակրկիտ աշխատանքը, բովանդակության ոեալիստական վար-
պետ բացահայտումը: Ճշմարտացի, կենսական շնչով են համակված ներկա-
յացման լավագույն տեսարանները: Գոլակյանն իր այս աշխատանքում, ինչ-

պեսև և իր ստեղծած ուրիշ շատ օպերային ներկայացումներում, կարողացիլ է կենսական նշմարտացիորյան և կոնկրետորյան հասնել նույնիսկ երկրորդական գործող անձերի բնուրագրման մեջ: Խսկ մասսայական տեսարանները աչի են ընկնում արտասովոր գունագեղորյամբ» («Սովետական Հայատան», ամսագիր, № 6, էջ 31):

20 մայիսի — Սպենդիարյանի անվան թատրոնի կոլեկտիվը ժամանեց Բաքու: Կայարանում տեղի ունեցած միտինգում հանդես եկավ Ս. Գոլակյանը:

21 մայիսի-30 հունիսի — Սպենդիարյանի անվան թատրոնի հյուրախաները թագվոր: Այդ առիջի թագի մամուկում լույս տեսան Ս. Գոլակյանի հողվածները («Կոմունիստ» 21 մայիսի, «Կոմունիստ» (աղրբեշաներեն), 21 մայիսի, «Բակինցի рабочий», 23 մայիսի): Նրա բեմադրություններից ներկայացվեցին «Անուշ», «Իոլանտա», «Ֆաուստը», «Ալիդան», «Կարմինը»:

«Ֆաուստ» օպերայի բեմադրության մասին Վ. Գորյակի գրած քաներախոսականից: «...բեմադրության մեջ ամբողջ ժամանակ զգացվում է օպերայի ֆեարական բնույրը շեշտելու ձգումը, և դրան ուժինորը հասել է մեծավայր ու նոխ լուծումների բացակայության, զիավակուապես կամերային տիպի միզանցեններով՝ իրագործված պարզ, բայց արտահայտիչ միշցներով: Նույնիսկ տաճարի մոռայլ տեսարանը մեղմացված է, իսկ հրաշալի նկարված դեկորները չեն բողոքում նեղող տպավորություն: Նման լուծումը մեր կարծիքով միանալամայն նիշտ է և համապատասխանում է երաժշտության բնդիմուր բնույրին: Գունեղ են և հյուրեղ մասսայական տեսարանները» («Վայսկա», 7 հունիսի):

Է. Սալշենիկի թատերախոսականից: «Ներկայացման ուժինութափան լուծումն արժանի է բարձր գեահատման: Այս բեմադրության օրինակից երեսում է, թե ինչպիսի մեծ, երբեմն էլ վեռական նշանակություն ունի օպերա բեմադրողի համար երաժշտության խոր ըմբռնումն ու ընկալումը: Ներկայացման բեմական մարմենավորությունը ոռոշվել է հենց երաժշտության բնույրով: Օպերայում ամբողջապես իշխող ֆեարական շունչը ելակետ է դարձել ուժինութիւն համար, որը օպերան բեմադրել է նույր կամերային գույներով, մեղմացնելով «մեծ» օպերային հասունի այն փոքրաբիլ տարրերն անզամ, որ Գունեն մրտցրել է ժամանակի տրադիցիաների համաձայն: Վառ և գունագեղ էին դրվագների վերադարձի տեսարանը և հատկապես տաճարի դրվագը» («Բակինցի բարեկայի աշխատանքում» 14 հունիսի):

29 հոկտեմբերի — Ս. Գոլակյանի առաջին ուսուցիչներից մեկի (Թիֆլի-

սի Ստ. Շահումյանի անվան թատրոնից), բեմադրիչ Ալոն Քալանքարի մահը Երևանում:

«Սովորական Հայաստան», 31 հոկտեմբերի

10 նոյեմբերի — Մոր՝ Թամար Գևորգի Գուլակյանի մահը Երևանում (ծնվ. 1877 թ.):

11 նոյեմբերի — «Անուշ» օպերայի 600-րդ ներկայացումը Սպենդիարյանի անվան թատրոնում:

1960

14 փետրվարի — Զ. Վերդի՝ «Պարահանդես-դիմակահանդես». Սպենդիարյանի անվան թատրոնում: Թեմադրիչ Ա. Գուլակյան, դիրիժոր Ա. Չարեֆյան, նկարիչ Ա. Միրզոյան: Թեմադրությունը գնահատեց երաժշտագետ Գևորգ Գյուղակյանը («Կոմմունիստ», 19 մարտի):

26 փետրվարի — Արմեն Տիգրանյանի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկո Սպենդիարյանի անվան թատրոնում: Ներկայացվեցին հատվածներ «Անուշ» օպերայից: «Կոմմունիստ» թերում նույն օրը լույս տեսավ Ա. Գուլակյանի «Կապրի դարեւր» հոդվածը, որի բարգմանուրյունը թերում ենք ամբողջությամբ. «Կան արևեստի գործեր, որոնք առանձնապես սիրելի են ժողովրդին: Դրանք հիշում են, զիտեն ոչ երեսումատիաներից, դրանց պահպանում է ժողովրդի անմեռ հիշողությունը: Այդ գործերի հերոսներն ապրում են ժողովրդի մեջ իրեւ կենդանի մարդիկ և ամեն մի նոր սերունդ երանց մատուցում է իր սերն ու երախտագիտությունը: Այդպիսի անմահ գործերից մեկը, որ զարդերով ավելի երկար են ապրում, բայ իրենց ստեղծողը, Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմն է: Գեղջուկ աղջկա ողբերգական հակատագիրը, աղջկի, որ զաման սովորույթների գոճ է դառնում, չի դադարում ընթերցաններին հուզուց: Բանաստեղծի հոյակապ տողերը մանել են ժողովրդի կյանքի մեջ ու թերեւ դժվար է գտնել մի հայի, որ անզիր շիմանա դրանք կամ, թեկուզ, շիմանա այն մենարքերն ու երգերը, որ գրվել են այդ բանաստեղծությունների տեխստերով: Ժողովրդի համար պակաս սիրելի չի ենք Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան: Մեղեդիների հարսությամբ, երաժշտական լեզվի ժողովրդայնությամբ աշխի ընկենող այդ օպերան մեզ համար զարձել է հույնեան մոտ և հարազատ, որքան Թումանյանի պոեմը:

«Անուշ» օպերան Սպենդիարյանի անվան թատրոնում բեմադրվել է չորս անգամ: Եվ ամեն անգամ իմ՝ բեմադրողին, առջև եղել է մի նայատակ. գրտնելի բեմական այնպիսի լուծումներ, որ տեսանելիութեն մարմնավորեն հեղինակի մտքերն ու զգացմունքները, նշմարտացի և համոզիչ կերպով հաղորդվեն

սարերի զավակներ Անուշի և Սարոյի կյանքի, նրանց աճքախտ սկրո տխուր պատմությունը, ստեղծեն նոյնան հոգի ժնարական մի ներկայացնում, որպիսին Թումանյանի պոեմն է, որպիսին Տիգրանյանի երաժշտուրյունն է:

Առաջին բեմադրուրյան պրեմիերան տեղի է ունեցել 1935 թվականին: Արմեն Տիգրանյանը անսովոր կերպով ոգեշնչված էր օպերայի բեմայով և մեզ նոյնպես՝ կատարողներին ու բեմադրող խմբին, հմայեց և ոգերեց: Անուշի և Սարոյի դերերով հանդես եկան Հայկանուշ Դանիելյանը և Շարա Տալլանը, որոնք ստեղծեցին դասական դարձած կերպարներ:

Առաջին բեմադրուրյունը հանդիսատեսն ընդունեց ջերմուն, բայց, ըստ իս, այնտեղ բավարար չափով չէին օգտագործված բեմական վերամարմարավորման այն հարատագույն հնարավորուրյունները, որ բացնում էր Տիգրանյանի երաժշտուրյունը:

Լայն ժողովրդականուրյուն նվաճած օպերան ներկայացվեց Մոսկվայում կայացած հայկական արվեստի առաջին տասնօրյակին: Այդ կապակցուրյամբ «Անուշի» պարտիստուրան վերանայվեց կոմպոզիտորի և բարոնի ստեղծագործական կոլեկտիվի կողմից: Նոր բեմադրուրյամբ մենք ձգտում էինք հաղորդել Տիգրանյանի ներուներին հատուկ ոռմանարկան, ողբերգուրյան ու սպոնսորար, և դրան զուգընթաց, ժողովրդի անխախտ լավատեսուրյունը, նրա կենսունակուրյունն ու մարդկայնուրյունը:

Ժամանակի փորձուրյանը դիմացած ներկայացումը նորից բեմադրվեց 1950 թվականին, այնուհետև 1956 թվականին, Մոսկվայում կայանալիք հայկական երկրորդ տասնօրյակին ցուցադրելու համար:

Անել էին հանդիսատեսի պահանջները: Ստեղծագործաբար անել էր բատոնը, ներկայացման մեջ ընդգրկվել էին նոր կատարողներ: Անհրաժեշտ էր խորացնել կերպարների մեկնարանուրյունը, վերանայել նկարչական ձևափորումը: Մենք աշխատում էինք ներկայացումը շաներարենել կենցաղային մանրութերով, խոսափում էինք սոսկ ազգագրական հավաստիուրյունից, միտումնավոր գունազարդումներից: Հանդիսատեսին հասցնել Տիգրանյանի երաժշտուրյան հարատարուրյունն ու գեղեցկորյունը, հասնել գրական և երաժշտական կերպարների ներդաշնակ միահյուսման՝ ահա ինչի էին ձգտում յուրաքանչյուր նոր ներկայացումով:


Վերջին խմբագրմամբ ներկայացումը ցուցադրվեց Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Սոչիում, Բաքվում: Հասարակուրյունը ամենուրեք շերմուրեն էր ընդունում օպերան:

25 տարվա ընթացքում «Անուշ» օպերան ցուցադրվել է մոտ 700 անգամ: Ինչպես արդեն ասվեց, ««Անուշ» օպերան բեմադրվել է շուրջ անգամ: Բայց



Ա. Քափանակյանի մետ, Թիֆլիս, 1926


Նկարիչ Ա. Թարխանի և պետքատրոնի «Խաթաբալա» ներկայացման մաս-
նակիցների մետ, 1927







Ուժինոր Ն. Ֆրիդի և պետքատրոնի քեմադրական մասի աշխատողների
մետ, 1928

Գ. Ավելացանի մետ, Երևան, 1928





Միքայել Արուտչյանի նկատ, Երևան, 1930






Ծխ լանգարի և «Ֆիզորի» ամբողջությունը՝ Ընկանառ շահմատից Ա. Անդրս աշի (Մուզան), Ռ. Վարդան աշի (Կամոնիք) և Զ. Գուրաց Չի (Մարտիքին) նետ, 1924

Համբ Բեկմազարյանի նետ, 1935





Հ. Աբելյանի, Մ. Մանվելյանի, Վ. Վարդամյանի հետ, Կիսլովոլուս, 1935

Գ. Հովհաննիսյանի, Ռ. Սիմոնյի, Ա. Ալաշարլի, Լ. Քաղաքաբարի հետ, 1939






Ա. Մելիք-Փաշանի մես, Արզնի, 1939



«Կարմեն» ներկայացումից ժաման
Գ. Վարժապետյանի, Պ. Լիսիցյանի (Էսկամիլը) և Վ. Դավիթյանի (Պարմեն) ժաման

25 սպրինգ, 1942





Գ. Վարժապետյանի և Մ. Թավրիզյանի հետ, 1944

Հ. Դանիելյանի, Ա. Խանովյանի, Շ. Տալյանի, Ս. Ավետիսյանի, Սարմենի,
Մ. Թավրիզյանի հետ. 1946





ՍՍՀՄ Գերագույն Սովետի դեպուտատների ժեռ. Մոսկվա, Կրեմլ, 1947

Հ. Հայտերդանի, Սարգիս Քոչարյանի, Ամո Խարազյանի և Սորեն Քոչարյանի
ժեռ, Երևան, 1946





Ա. Գոլակյան. մատիտանկար Մ. Սարյանի, 1947



Ա. Մելիք—Աղամյանի, Ն. Թուխիկյանի, Հ. Դանիելյանի, Հ. Բաղրամյանի,
Ա. Սալտախյանի, Դ. Մալյանի, Վ. Համբարձումյանի նկատ, 1950

Վ. Անձմյանի և Վ. Վարդամյանի նկատ, 1951





«Դիմակահանդես» ներկայացումից հետո. Արքենիճ՝ Վ. Փափազյան,
Նինա՝ Մ. Սիմոնյան, 1951

Սուստուկյանի անվան թատրոնի խմբի հետ. Երևան, 1951





Սովորությանի անվան թատրոնի երիտասարդ դերասանների մետք, 1951

Գեղարվեստա-թատրոնական խնամիության՝ յր կրտսեր ուսանողների մետք,
1955



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՐԵՆԱԼԻՆ ՄԱՐԿԵՐ




Հայ արվեստի և գրականության տասնօրյակի մասնակիցների դիմավորումը Մոսկվայում, 1956

Գեղարվեստա-թատրոնական ինստիտուտի «Կտակ» թեմադրության մասնակիցների հետ, 1958





Զիւայրա Պաղի (Ամերիկա) մետ. Երևան, 1957





«Յասուտ» օպերայի փորձի ժամանակ. Մարգարիտա՝ Գ. Գալստյան, Մեֆիստոֆել՝ Ն. Հովհաննիսյան, Ֆատուտ՝ Ա. Կովալյով. 1958

նրա ամբողջ խորությունը չի բացահայտվել մինչև վերջ։ Դեռևս շատ անգամ մեր հետեւդիները, հրապուրված երա մեղեդիների անքառամ հմայքով, կդիմեն հայ օպերային երաժշտուրյան առաջին էջերից մեկին։ Դեռ շատ անգամ բեմահարքակ կրաքարան քեքու, հմայիչ Անուշն ու առնական, հպարտ Սարոն։

13 մայիսի— նամակ գրեց Մուսկվայի թատերական ինստիտուտի պրոֆեսոր, ոեթիսոր Ի. Մ. Ռաևսկուն՝ Երևանի գեղարվեստարատերական ինստիտուտում ոեթիսորական կուրս ունենալու կապակցուրյամբ։ Մասնակի հապավումներով բերում ենք այդ նամակի բարգմանուրյունը։ «Ուզում եմ ամբողջուրյամբ զբաղվել միայն մանկավարժական աշխատանքով։ Օպերային թատրոնի քողնելուց հետո, սեպտեմբերի 1-ից, ինստիտուտում ինձ կտան ոեթիսորական առաջին կուրս։ Ահա ավելի քան 30 տարի ես միայն դերասաններ եմ պատրաստում։ Ամեն անգամ, երբ ինձ առաջարկում էին ոեթիսորական կուրս ղեկավարել, երաժարվում էի, որովհետև համաձայն չէի ո՛չ ուսանողների ընդունելուրյան սկզբունքի, ո՛չ էլ նրանց ուսուցման դրվագքի հետ։ Այժմ այդ հարցում ինչ-որ տեղաշարժեր կան և ընդունելու են ոչ քեզ ըստ ցանկուրյան, այլ ըստ կոշման։ Դա արդեն ինձ դուր է զալիս։ Առհասարակ, ես հայ քատրոնի հանդեպ պարտի տակ եմ, որովհետև մինչև այսօր ինստիտուտում երիտասարդ ոեթիսորների դաստիարակուրյամբ չեմ զբաղվել։ Պեսէ է ասել, որ երիտասարդ ոեթիսորների պատրաստման և դաստիարակման ասպարեզում գոյուրյուն չունի, իմ կարծիքով, մի ընդհանուր սիստեմ։ Ես կուզենայի խուսափել այն արգելվերից, որոնք խանգարում են ոեթիսոր-ստեղծագործողի ընդունակուրյունների լրիվ բացահայտմանը։ Չեմ ուզում, ոմանց նման, երանց սովորեցնել ինչ պատահի և ինչպիս պատահի, այլ ուզում եմ, որ նրանք ամուր տիրապետեն իրենց արհեստներ։ Խնդրում եմ այդ հարցում ինձ օգնես։ Գրիր ինչպես է դրվագքը լունաշարսկու անվան քատերական ինստիտուտում և Գեղարվեստական քատրոնի ոսումնարանում, ընդունելուրյունից սկսած մինչև ավարտելը՝ ըստ կուրսերի։ Բացի «ոեթիսորա» առարկայի ծրագրից, ինձ ի՞նչ նյութեր կարող ես ուղարկել, ի՞նչ կարող ես ինքդ հուշել» (ԳԱԹ, Գուլակյանի արխիվ, № 543)։ Այս նամակի պատասխանը ստացավ նույն թվականի հունիսի 9-ին։

15 մայիսի— Ազգարեց, «Արվեստին նվիրաբերած կյանք» հուշերը ոեթիսոր Սուրեն Խաչատրյանի մասին, որը լույս տեսավ «Սурեն Խաչատրյան» ժողովածուում, 1969 թվականին։

23 մայիսի— Ազատվեց Սպենդիարյանի անվան քատրոնի դիրեկտորի պաշտոնից (երան փոխարիննեց Գուրգեն Հայրապետյանը)։ Համաձայնեց մը-

նալ զիսավոր ուժիուր միջև Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը, նույն տարվա նոյեմբերի 29-ը:

25 Հունիսի — «Խանդուր» բալետը Սպենդիարյանի անվան բատրոնում: Երաժշտությունը Ա. Սպենդիարյանի: Կիրետուն Ա. Գուլակյանի և Լ. Լավրովսկու: Թեմադրություն Զ. Մուրադյանի, դիրիժոր Հ. Ռուկանյան, նկարիչներ Ա. Միքոյան և Գ. Վարդանյան:

«Սովետական արվեստ», 1961, № 1, էջ 29—35

1 սեպտեմբերի — Սկսվեցին գեղարվեստաբանական ինստիտուտի ուժիուրական առաջին կուրսի պարապմունքները Արմեն Գուլակյանի ղեկավարությամբ:

10 սեպտեմբերի — Բողոքում է Սպենդիարյանի անվան բատրոնի դիրեկտոր Գ. Հայրապետյանի դեմ. «Դանում եմ, որ ներկայացումների ազդագրերում և ծրագրերում իմ, իրեւ ուժիուր-թմադրիչի, ազգանունը դիրիժորի ազգահունից հետո դնելու Զեր որոշումը նիշտ չէ: Վեռականապիս պահանջում եմ հանել ազգանունը իմ բոլոր թմադրությունների, այդ բվամ և «Լուսաբացին» օպերայի ազգագրերից և ծրագրերից» (ԳԱԹ, Գուլակյանի արխիվ, № 482):

16 սեպտեմբերի — Սպենդիարյանի անվան բատրոնի «Լուսաբացին» օպերայի ավարտական փարձի ժամանակ ունեցավ սրտի ուժեղ նոպաներ և ծանր վիճակում տուն տեղափոխվեց:

18 սեպտեմբերի — Հ. Ստեփանյան՝ «Լուսաբացին», Սպենդիարյանի անվան բատրոնում: Վերամշակված նոր տարբերակ: Լիրետուն Տ. Հախումյանի, բնմադրիչ Ա. Գուլակյան, դիրիժոր Ա. Քարանյան, նկարիչ Կ. Մինասյան, պարեր Ա. Ղարիբյանի:

Գուլակյանը, հիվանդության պատճառով, պրեմիերային ներկա չէր:

«Սովետական արվեստ», № 12, էջ 6

22 սեպտեմբերի — Արմեն Գուլակյանի մահը: Թաղումը՝ Երևանի պանթեոնում, սեպտեմբերի 24-ին: Գերեզմանատանք հրաժեշտի խոսք ասացին Ավետ Սվետախյանը և Սամսոն Գասպարյանը:

«Սովետական արվեստ» ամսագրում (№ 10, էջ 60—61) տպագրված մահախոսականից. «Մանե կորուս կրեց սովետակայ բատերական արվեստը: Մեզանից հեռացավ սովետական ականավոր ուժիուր, անխոնչ բատերական զորձից, դրամատուրգ, երիտասարդության հմտութափակ Արմեն Գուլակյանը: Բեղմնավոր ու գեղեցիկ արդյունքներով լի ստեղծագործական կյանքով

ապրեց Արմեն Գուլակյանը, գեղարվեստական արժեքներ ներդրեց սովորակայ արվեստի զանձարանում և դրանով իսկ իր անունն աճխցիլիորեն կապէց հայ բատրոնի պատմության սովորական շրջանի նետ:

...Սունդուկյանի անվան բատրոնի կոլեկտիվի նետ միասին Գուլակյանն անցնում է սովորակայ բատրոնի զարգացման ոչ այնքան հարը ոսլիով, սրխալում է, ձախողումներ ունենում, բայց և ստեղծում է մնայուն արժեքներ, դրանց մեջ դեկոլ արվեստագէտի իր կրտո խառնվածքը, սկզբունքայնությունը ու ստեղծագործական համառությունը: Սունդուկյանի անվան բատրոնի կոլեկտիվը ժիշ բան շտգեց նրան և ժիշ էլ շատացավ:

...Սյուօր, երբ արդեն մեզ նետ չէ Արմեն Գուլակյանը, չի կարելի չհիշել նրա խոշոր ծառայությունը սովորական դրամատուրգիայի երկերի բեմադրության ասպարեզում:

...Շատ շեն այն ոեմիստրները, որոնք նույնպիսի հաջողությամբ բեմադրում են և՛ դրամատիկական երկեր, և՛ երաժշտական խոշոր կտավի գործեր: Այս առումով սովորակայ բատրոնում առանձնահատուկ տեղ է գրավում Արմեն Գուլակյանը: Մեծ է նրա վաստակը օպերային հետաքրքրական, բարձրարժեք բեմադրություններ ստեղծելու, օպերային ոեմիստրայի զարգացման բնագավառում:

...Պատահական չէ, որ Արմեն Գուլակյանը տարիներ շարունակ եղել է քե՛ Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական, քե՛ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի բատրոնների գլխավոր ոեմիստ, դրսևություն իրեն ուղիս հմուտ կազմակերպիչ ու դեկավար:

Կար ևս մի ասպարեզ, որտեղ Արմեն Գուլակյանի աշխատանքը բարեբեր արդյունքներ է տվել: Դա մանկավարժական գործունեության բնագավառն է: Սկզբում բատերական ստուդիաներում, իսկ վերջին տասնհինգ տարիներին երեանի գեղարվեստաբատերական ինստիտուտում Արմեն Գուլակյանը շատ արդյունավետ աշխատանք է տարել բատերական կադրերի պատրաստման, նրանց սոցիալիստական արվեստի սկզբունքներով ու ոգով զաստիարակելու, բատրոնի նկատմամբ խանդական սիրով տոգորելու համար: Այսօր հանրապետության շատ ու շատ գեղարվեստական հաստատություններում աշխատում են նրա բազմաթիվ սաները:

...Այժմ մեզ հետ չէ Արմեն Գուլակյանը, բայց ժամանակակիցները միշտ կմիջեն նրան իբրև սեփական ստեղծագործական համոզմունքները արվեստի մարդու հետեւղականությամբ ու համառությամբ պաշտպանող, քատրոնի գործը հմտորեն և նախանձելիորեն ամուս կամքով կազմակերպող, լրջմիտ ու խոհուն արվեստագետի, որ իր գործում չէր սիրում զիշումներ անել ոչ ուրիշներին, ո՛չ իրեն: Արվեստագետ, որ զիտեր իր գործը սիրել և պաշտել, հասնել այն առավելին, որ կարող էր տալ ստեղծագործական աշխատանքը: Եվ դրանով էլ նա վաստակել էր արժանի հեղինակություն և հարգանք»:



ԱՐՄԵՆ ԳՈՒՂԱԿՅԱՆ

Կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1899—1960)

Նկարիչ՝ Ա. Վ. ԳԱՎՊԱՐՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Զ. Ի. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ա. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
Վերստուգող սրտագրի՝ Մ. Ն. ԲԱԲԱՅԱՆ

9/կ

Հանձնված է շարժածքի 19.04.1985 թ., ստորագրված է տպաղբության 27.08.1985 թ.:
ՎՃ 06155 թուղթ տպագրական № 2, չափը 70×90/₁₆, տպատեսակ «Արամյան», տպագրությունը՝ բարձր, 14,62 պայմ. տպ. մամուլ, 16,37 ներկ. թերթ, 10,9 հրատ. մամ+10 ներդիր, տպաքանակը՝ 1000, պատվեր 867, գինը 1 ռ. 20 կ.:

Հայկական թատերական ընկերություն, Երևան—15, Կարմիր բանակի Հե 8
Երևանի պետհամալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. 52:

Армянское театральное общество, Ереван-15, ул. Кармир Банаки, 8.
Типография Ереванского государственного университета, Ереван, ул. Абовяна № 52.

1 Ռ. 20 ԿՈՊ.

